ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

3 (97). 2018

ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԳԼՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ

ОРИЕНТИРЫ ДУХОВНО-НРАВСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РА В СВЕТЕ ГЛОКАЛИЗАЦИИ «БАРХАТНОЙ РЕВОЛЮЦИИ» В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

THE RA MENTAL AND MORAL SECURITY GUIDELINES IN THE LIGHT OF THE “VELVET REVOLUTION'S” GLOCALIZATION UNDER THE CONDITIONS OF GLOBALIZATION



«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը
ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանում

Նյու Յորք, 2018 թ. սեպտեմբերի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3 (97). **2018**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Հովհաննիսյան Գ. Մ.
Ղահրամանյան Ա. Բ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Շահնազարյան Թ. Ն.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սիմոնյան Ս. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Փախչանյան Դ. Բ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԳԼՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ

Հ. Ս. Քոթանջյան, Հայաստանի Հանրապետության զարգացման և անվտանգության նպատակներն ու գերակայությունները գլոկալիզացման պահանջների լույսով՝ «թավշյա հեղափոխության» նպատակադրման իմաստավորմամբ 9

Դ. Ս. Չիլինգարյան, Ազգը, ազգային ինքնությունը և լեզուն՝ որպես հոգևոր անվտանգության առանցքային օբյեկտներ. եռալեզու պաշտպանական-անվտանգային բառարանը՝ որպես լեզվի բնագավառում համատեղայնացման օրինակ 16

Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ սպառնալիքները և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգևոր արժեքների, հասարակության ինքնության և պետության պահպանման գործում 37

Վ. Հ. Մարգարյան, Բ. Պ. Պողոսյան, Ա. Կ. Յալանուզյան, Համատեղայնացման պայմաններում ՀՀ մշակութային անվտանգության ապահովման որոշ հարցեր 53

Մ. Մ. Մարգարյան, Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգևոր անվտանգություն 66

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

Ա. Մ. Շահվերդյան, Հեռակառավարվող ռազմական անօդաչու թռչող ապարատների կիրառման նկատմամբ որոշ արդիական մոտեցումներ 79

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գ. Է. Հարությունյան, Ա. Գ. Դավթյան, Ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության հիմնախնդիրները. քննական վերլուծություն 91

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. Համբարձումյան, Վավերագրական ֆիլմերի որոշ առանձնահատկությունների վերլուծություն տեղեկութահոգեբանական պայքարի համատեքստում 106

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. Գասպարյան, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ մտավորականության գործունեության լուսաբանումը հայ պատմագրության մեջ ... 116

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 127

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 3 (97)**. 2018**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Алтунян Г. Р., Аперян В. В., Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Давтян А. М., Каграманян А. Б., Маргарян В. Г., Мартикян А. М., Мартиросов Л. А., Ованнисян Г. М., Пахчанян Д. Б., Погосян Б. П., Симонян С. В., Тер-Григорьянц Н. Г., Хачатрян Т. В., Шахназарян Т. Н., Ширинян М. А., Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

ОРИЕНТИРЫ ДУХОВНО-НРАВСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РА В СВЕТЕ ГЛОКАЛИЗАЦИИ «БАРХАТНОЙ РЕВОЛЮЦИИ» В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

Г. С. Котанджян. Цели и приоритеты развития и безопасности Республики Армения в свете требований глокализации с осмыслением целеполагания «бархатной революции» . . . . . 9 (14)*

Д. С. Чилингарян. Нация, национальная идентичность и язык как ключевые объекты духовной безопасности: трехъязычный оборонно-безопасностный словарь как пример глокализации в области языка 16 (34)

Епископ Вртанес Абраамян. Угрозы национальным духовным ценностям и роль Святой Армянской Апостольской церкви в деле сохранения духовных ценностей, идентичности общества и государства 37 (50)

В. Г. Маргарян, Б. П. Погосян, А. К. Яланузян. Некоторые вопросы обеспечения культурной безопасности РА в условиях глокализации 53 (64)

М. М. Маргарян. Политическая социализация молодежи как процесс модернизации национальной идентичности: духовная безопасность 66 (77)

ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

А. М. Шахвердян. Некоторые современные подходы к применению телепилотируемых военных летательных аппаратов 79 (89)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

Г. Э. Арутюнян, А. Г. Давтян. Проблемы международного сотрудничества в области военной промышленности: критический анализ 91 (104)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

Н. А. Амбарцумян. Анализ некоторых особенностей документальных фильмов в контексте информационно-психологической борьбы 106 (114)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

В. А. Гаспарян. Освещение деятельности армянской интеллигенции в годы Великой Отечественной войны в армянской историографии 116 (125)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 127 (128)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
А. А. Манташян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА,
О. Я. Саядян, доктор географических наук, профессор,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3 (97)**. 2018**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Altunyan G. R., Aperyan V. V., Ayvazyan L. G., Balayan G. K., Davtyan A. M., Gasparyan O. V., Ghambaryan M. A., Hovhannisyan G. M., Idinyan R. A., Kaghramanyan A. B., Khachatryan T. V., Margaryan V. H., Martikyan A. M., Martirossov L. A., Pakhchanyan D. B., Poghosyan B. P., Shahnazaryan T. N., Shirinyan M. A., Simonyan S. V., Ter-Grigoryants N. G., Vardanyan A. G., Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

CONTENTS

THE RA MENTAL AND MORAL SECURITY GUIDELINES IN THE LIGHT OF THE "VELVET REVOLUTION'S" GLOCALIZATION UNDER THE CONDITIONS OF GLOBALIZATION

H. S. Kotanjian. The RA development and security goals and priorities in the light of glocalization requirements with reconsidering the goals of "velvet revolution" . . . . . 9 (15)*

D. S. Chilingaryan. The nation, the national identity and the language as key objects of mental security: the trilingual defense security dictionary as an example of glocalization in the sphere of language 16 (35)

Bishop Vrtanes Abrahamyan. The threats to the national spiritual values, and the role of the Holy Armenian Apostolic Church in preserving those values, the identity of the society and the state 37 (51)

V. H. Margaryan, B. P. Poghosyan, A. K. Yalanuzyan. Some issues of ensuring the RA cultural security in terms of glocalization 53 (65)

M. M. Margaryan. Political socialization of youth as a process of modernization of the national identity: mental security 66 (78)

ARMAMENT AND MILITARY EQUIPMENT

A. M. Shahverdyan. Some modern approaches to the application of remotely piloted vehicles 79 (90)

ECONOMIC SECURITY

G. E. Harutyunyan, A. G. Davtyan. Problems of international cooperation in the sphere of military industry: critical analysis 91 (104)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

N. A. Hambardzumyan. Analysis of some features of documentary films in the context of the information and psychological struggle 106 (115)

MILITARY HISTORY

V. A. Gasparyan. Coverage of the activity of Armenian intelligentsia in the years of the Great Patriotic War in Armenian historiography 116 (126)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 127 (129)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;

N. H. Arakelian, Full Member, NAS RA;

L. S. Arzumanyan, Doctor of Philology;

G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;

K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;

S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;

S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;

H. A. Gevorkian, Full Member, NAS RA;

B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;

V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;

A. H. Mantashian, Full Member, NAS RA;

M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;

H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;

E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;

M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;

K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;

R. A. Safrastyan, Full Member, NAS RA;

Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;

A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;

H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԳԼՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ

ОРИЕНТИРЫ ДУХОВНО-НРАВСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РА В СВЕТЕ ГЛОКАЛИЗАЦИИ «БАРХАТНОЙ РЕВОЛЮЦИИ» В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

THE RA MENTAL AND MORAL SECURITY GUIDELINES IN THE LIGHT OF THE “VELVET REVOLUTION’S” GLOCALIZATION UNDER THE CONDITIONS OF GLOBALIZATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԼՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԼՈՒՅՍՈՎ՝ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՄԲ

Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող), քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), քաղաքագիտության պրոֆեսոր, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հրավիրված առաջատար պրոֆեսոր և հակաահաբեկչության գծով գիտնական-փորձագետ, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ

Արդի աշխարհում հետզհետե ավելի ու ավելի մեծ թափ են առնում գլոբալիզացման զարգացումները, որոնց կարևոր ուղղություններից է տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ու թվայնացման բուռն տարածումը՝ մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտներ խոր ներթափանցմամբ: Այդ զարգացումների, իրական ու երևակայական (վիրտուալ) աշխարհների փոխներթափանցման հետևանքով համաշխարհային տարածությունն ու ժամանակը չափազանց խտացել, սեղմվել են, պետությունների միջև տարածքները որոշվում են ոչ միայն սահմաններով, ինչի պատճառով ժողովուրդների ու պետությունների, անհատի ու հասարակության փոխգործության ու համագործակցության վաղուց սովորական դարձած, ծեծված եղանակներն արդեն չեն ապահովում ո՛չ սպասված արդյունքը, ո՛չ արդյունավետությունը[1]:

Միևնույն ժամանակ, որոշ գիտնականներ (Ռ. Ռոբերտսոն, Ու. Բեկ) համարում են, որ գլոբալիզացմանը զուգահեռաբար տեղի է ունենում տրոհում:

«Գլոկալիզացում» տերմինը շրջանառության մեջ է դրել անգլիացի սոցիոլոգ և գլոբալիզացման ճանաչված տեսաբան Ռոնալդ Ռոբերտսոնը՝ հիմնվելով 1980-ական թվականներին Ճապոնիայում առաջ քաշված մի տնտեսագիտական հայեցակարգի վրա, որը բառացի կոչվում էր «որևէ բան անել տեղաբնիկի պես»: Դրա նշանաբանն է՝ «Մտածիր գլոբալ, գործիր լոկալ»[2]: Ռ. Ռոբերտսոնը համեմատական սոցիոլոգիայի և արդիականության հետազոտությունների ոլորտում իր ուսումնասիրությունների ժամանակ ճապոներենում հանդիպել է մի տերմինի, որը ճապոնացի գործարարներն օգտա-

[1] Տես *Н. И. Кожевников, Н. Л. Пашкевич*. Глобализация: концепции, характерные черты, практические аспекты. «Вестник ЯГУ», 2005, т. 2, № 3:

[2] Տես *Ю. Н. Благовещенский*. Глокализация–новая парадигма в экономике (http://www.cemi.rssi.ru/activity/seminars/Glokalizatsiya.pdf):

գործում էին այն գաղափարն արտահայտելու համար, թե «ճապոնական արտադրության ապրանքները պետք է հարաբերվեն որոշակի վայրի հետ, այսինքն՝ դրանք պետք է հարմարեցվեն տեղի ճաշակներին ու հետաքրքրություններին՝ անկախ այդ ապրանքների գործածության համապիտանիությունից և համատարած մատչելիությունից: Այդպես էլ հորինվեց «գլոկալիզացում» նոր տերմինը»[3]: Դա «գլոբալ» և «լոկալ» բառերի համադրություն է[4]:

Ռոբերտսոնը դիտարկում է գլոկալիզացման հետևյալ փուլային զարգացումը: Առաջին փուլում որևէ տեղ, ի պատասխան գլոբալիզացման մարտահրավերների, ձևավորվում է հակադիր հակազդումային միտում: Այնուհետև ինչ-որ ժամանակ և ինչ-որ տարածությունում այդ հակադիր միտումները հայտնվում են գոյակցության վիճակում: Երրորդ փուլում գոյակցումը վերափոխվում է հակադիր միտումների պայքարի, որը հետագայում վերածվում է դրանց միահյուսման, և ի հայտ է գալիս օբյեկտի նոր որակական վիճակ, որը բնութագրվում է հակադրությունների զուգակցմամբ[5]:

Ըստ էության՝ «գլոկալիզացումը» «գլոբալիզացման» երևույթը օպտիմալ կերպով տեղայնացնելու քաղաքականություն է, որի նպատակն է ապահովել առաջավոր պետությունների զարգացմանը տվյալ պետության (կամ տարածաշրջանի) համահունչ առաջընթացը ազգային-պետական յուրահատկությունների պահպանման և զարգացման պայմանով: Ուստի գլոկալիզացումը պահանջում է այդ քաղաքականության մշակման նկատմամբ մանրակրկիտ և վերին աստիճանի դատողական մոտեցում, որպեսզի գլոբալիզացման ու գլոկալիզացման միջև հետագայում չծագեն անհաղթահարելի հակասություններ: Գլոկալիզացման հաջողված օրինակներից է Սինգապուրի տնտեսական քաղաքականությունը[6], որի փորձը՝ կապված Հայաստան այդ պետության վարչապետի կատարած այցի հետ, ակտիվորեն քննարկվել է մեր երկրում:

Գլոկալիզացման տեսության կողմնակիցները համարում են, որ երկրները, կազմակերպությունները, անհատները տարբերվում են ոչ թե արդիականացածության մտացածին սանդղակով որոշվող *առաջավորությամբ* կամ *հետամնացածությամբ*, այլ ընդհանուր հոսքերում ներգրավվածության և տեղական ավանդույթներին հավատարմության միահյուսվածության աստիճանով[7]:

---

[3] Տես *Habibul Hague Khondker.* Glocalization as Globalization: Evolution of a Sociological Concept. “Bangladesh e-Journal of Sociology”, July 2004, Vol. 1, N 2.

[4] Տես *Ronald Robertson*. Glocalization: Time–Space and Homogencity–Heterogencity. “Global Modernities”. Ed. by M. Featherstone, S. Lash, and R. Robertson. London, 1995, P. 26; *А. В. Россошанский.* Глобализация и глокализация: соотнесение понятий. «Известия Саратовского университета», 2012, т. 12, «Социология. Политология», вып. 5:

[5] Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. А. Радугин, У. Ф. Байматов.* Проблематизация и концептуализация глокализации как социального процесса становления мирового общества. «Вестник ВГУ». Серия: Философия, 2017, № 3:

[6] Տես *Հաբիբուլ Հագ Խոնդկեր,* Նշ. աշխ.:

[7] Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. Ю. Согомонов.* Глокальность (очерки социологии пространственного воображения). *С. Е. Кухтерин, А. Ю. Согомонов, И. Ф. Девятко, Н. Е. Покровский.* Глобализация и постсоветское общество. Под ред. С. Е. Кухтерина, А. Ю. Согомонова. М., 2001, сс. 60–79:

Գլոկալիզացման կարևոր դրսևորումներից են համաշխարհային քաղաքականության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները: Այն միջպետականից կերպափոխվում է ներհամընդհանուրի, ընդսմին այդ ընթացքում ավելի է աճում «ուղղաձիգ», աստիճանակարգային համընդհանրության և «հորիզոնական» ցանցային վերտարածաշրջանայնության դիրքորոշումների միջև եղած տարբերությունը: Եթե առաջինն արտահայտում է համաշխարհային մենաշնորհային ընկերությունների ու պետական բյուրոկրատիաների շահերը, ապա երկրորդը փորձում է պրոբլեմները լուծել վերտարածաշրջանային աշխարհընկալումների շրջանակում: Այս մոտեցումների փոխգործության շնորհիվ կատարվում է աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացման վերահմաստավորում, ինչն իր ազդեցությունն է գործում մշակույթի, քաղաքականության, կրթության ոլորտներում տեղի ունեցող զարգացումների վրա[8]:

Գլոկալիզացումն առանձնակի կարևորություն ունի տեղեկատվական անվտանգության ապահովման համար: Այժմ, երբ տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ու թվային-համակարգչային միջոցների բուռն զարգացման ու համատարած օգտագործման շնորհիվ հասարակության հնարավորությունները աննախադեպ կերպով մեծացել են, աճել է նաև հասարակական գիտակցությունը ձեռնածությունների ենթարկելու կարողությունը: Արդեն ստեղծվել է սրընթաց զարգացող «տեղեկութային գինանոց», որում ներառված են վտանգավոր տեղեկատվական ազդեցությունների միջոցով հակամարտող կողմին առավելագույն վնաս պատճառող սարքերը[9]: «Մարդկության բնակման կենսատարածքի սահմաններում տեխնիկական միջոցների կիրառմամբ տեղեկույթի փոխանցումը (իրեն նմանների վերածրագրավորում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների գործածությամբ) կատարվում է շատ ավելի արագ, քան գենետիկական տեղեկույթի փոխանցումը (իր սերունդների ծրագրավորում կենսաբանական մեխանիզմների գործածությամբ): Դեռ ավելին. մարդկության ստեղման կենսատարածքի սահմաններում տեղեկույթի փոխանցման ծավալներն ու ժամանակը պետությունների ու ժողովուրդների կառավարման համակարգի գործունեությունը որոշող վերնախավի հիմնական զանգվածի համար արդեն կախված չեն տարածության մեջ դրանց տեղադրությունից, դրանց միջև եղած հեռավորությունից»[10]:

Այդ սպառնալիքներին հաջողությամբ դիմակայելու համար փոքր պետությունները անհրաժեշտ է ունենան զարգացած տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտ, ինչի համար Հայաստանի Հանրապետությունը պետք է կարողանա խելացի կերպով մշակել և անընդհատ զարգացնել գլոկալիզացմամբ պայմանավորված նորամուծական հնարավորությունները:

Այսպիսով՝ աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացումը, ժամանակակից

[8] Տես *Ն. Ն. Կոժևնիկով, Ն. Լ. Պաշկևիչ*, Նշ. աշխ.:

[9] Տես *Э. М. Брандман*. Глобализация и информационная безопасность общества. «Философия и общество», 2006, № 1:

[10] *Г. И. Малыхина, В. В. Аксенов.* Современная информационная безопасность и проблемы глобализации. «Наука и военная безопасность», 2008, № 2.

արագընթաց զարգացման պայմաններում նպաստելով մարդկության ընդհանուր առաջընթացին, միևնույն ժամանակ բովանդակում է այնպիսի տարրեր, որոնք սպառնում են ազգային ինքնությանը, ազգային մշակույթին, ազգային ինքնագիտակցությանը, հատկապես՝ սակավաթիվ ազգերի ու փոքր պետությունների դիմազրկմամբ: Սակայն կան առաջադիմական պետություններ, որոնց հեռատես վերնախավը քաղաքական ռազմավարությունը հիմնում է գլոբալիզացիայի հետևանքով ներբերվող նորամուծությունները տվյալ հասարակության ինքնության պահպանմանն ու զարգացմանը հարմարեցնելու վրա: Հենց դա է գլոկալիզացիոն քաղաքականության էությունը:

Հենց այս դիրքերից գլոբալիզացմանը Հայաստանի մասնակցությունը, հայկական ինքնության յուրահատկությունների հաշվառմամբ, անհրաժեշտ է դիտել որպես համապետական ռազմավարական գերակայություն:

Հարկ ենք համարում ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությամբ» պայմանավորված մարտահրավերներն ու հնարավորությունները համառոտակի ներկայացնել մեր պետության գլոկալիզացման համատեքստում:

- *Վերնախավերի հիմնախնդիրը*

  Ցավոք, արդի Հայաստանում վերնախավին պատկանելությունը հիմնականում պայմանավորված է ոչ թե մտավոր ներուժով, իրազեկվածության մակարդակով և բարոյական հատկանիշներով, այլ իշխանությամբ ու փողով: Վերնախավերը, որպես կանոն, միմյանց չեն հարստացնում առաջադիմական գաղափարներով:

  Գլոբալիզացման գործընթացներում Հայաստանի և համայն հայության ներգրավման դեպքում դրական էֆեկտ կարող է ունենալ ռազմավարական գլոկալիզացիոն նախագծերի քննարկումների և իրացման շուրջ մտավոր, քաղաքական ու գործարար վերնախավերի միավորումը:

- *Հայոց լեզուն ու մշակույթը*

  Ազգային ինքնության ճգնաժամի ցուցիչ է լեզվի պարզունակացումը, նրա աղտոտումը մակաբույծ բառերով ու գռեհկաբանություններով: Սոցիալական ցանցերի, ՁԼՄ-ների, կինոյի ու գրականության միջոցով խոսակցական լեզվի մեջ ներխուժում են հանցագործ աշխարհին բնորոշ բառերն ու արտահայտությունները, ընդսմին՝ ոչ միայն խոսակցական, այլև քաղաքական ու գործարարական շփումների լեզվի մեջ: Նման պայմաններում հույժ կարևոր են գլոբալիզացման գործընթացներին հայ ժողովրդի մասնակցության պայմաններում հայոց լեզվի զարգացման ընթացքում նրա հարստության պահպանմանն ուղղված գլոկալիզացիոն նախագծերի իմաստավորումն ու մշակումը:

- *Հավատն ու եկեղեցին*

  Ինքնիշխան աշխարհիկ ազգային պետությունում ստեղծագործաբար վերաիմաստավորվում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու՝ որպես Համաշխարհային հայությանը համախմբող գործոնի դերը երկու կաթողի-

կոսությունների և քույր կաթոլիկական ու բողոքական եկեղեցիների հետ համագործակցության առկայության պայմաններում: Եկեղեցու բարեկորոգիչ գործունեության գլոկալիզացիոն առումները Համաշխարհային հայության երիտասարդ սերնդի հոգևոր զարգացման առավել կարևոր գործոններն են: Այս իմաստով պետք է առանձնակի դեր խաղան այն նախագծերը, որոնք նպատակաուղղված են հայ Առաքելական եկեղեցու հսկայական արժեպատարագային մշակույթի և համայնքներում իր հոտի, առաջին հերթին՝ նոր սերնդի երիտասարդ հայերի հետ տարվող սոցիալական աշխատանքի ինտենսիվացման արդիական տեղեկատվացանցային գործիքների կիրառման գլոկալիզացիոն նախագծերի ներդրման զարգացող փորձի համադրումը:

Նշենք, որ գլոկալիզացման տեխնոլոգիաները վաղուց արդեն լայն կիրառում են ստացել լեզվի ասպարեզում, երբ օտարալեզու փոխառությունը ենթարկվում է անհրաժեշտ փոփոխությունների՝ փոխառող լեզվի հնչյունային ու քերականական համակարգերին հարմարեցնելու նպատակով: Ըստ այդմ էլ նպատակահարմար է որպես «գլոկալիզացման» հայերեն համարժեք գործածության մեջ դնել «համատեղայնացում» տերմինը՝ դրանով իսկ հայերենում *գլոբալ–լոկալ* զույգը արտահայտելով «համընդհանրացում»–«համատեղայնացում» երկձևությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համատեղայնացմամբ (գլոկալիզացմամբ) պայմանավորված հնարավորությունները կարող են ծառայել որպես հայ ժողովրդի ոգեբարոյական անվտանգության ապահովման արդյունավետ ու ճկուն գործիք՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրա հարաճուն զարգացման համար: Դրա լավագույն գրավականը հայության նոր ազգային զարթոնքն է, որը դրսևորվում է վերջերս ծավալված «թավշյա հեղափոխության» ընթացքում, և որը հայկական միջավայրում կարող է դառնալ համատեղայնացման արդյունավետ օրինակ: Դրա էությունն այն է, որ ժողովրդավարացման արժեքային համակարգի արմատավորման համընդհանուր միտումը Հայաստանում ձեռք բերի ազգային առանձնահատկություններ և նպատակաուղղվի ազգայինի վերաիմաստավորմանն ու վերահաստատմանը:

Մեր կարծիքով՝ կարևոր է ապահովել այնպիսի իրադրություն, որ այդ ազգային ինքնադրսևորման ալիքը չմարի, ճիշտ կերպով ուղղորդվի, և դրանում կարող են օգտակար լինել համատեղայնացման ռազմավարությունն ու դրանից բխող համատեղայնացման ազգային քաղաքականությունը՝ իր նպատակներով և դրանց իրագործման նպատակային ծրագրերով:

Դրան են ծառայում հանդեսի սույն համարում ոգեբարոյական անվտանգության տարբեր՝ լեզվական, մշակութային, սոցիալ-քաղաքական, հոգևոր-կրոնական կողմերի վերլուծությանը նվիրված մշակումները, որոնք կարող են լինել համատեղայնացման ռազմավարության, վերջինիցս բխեցվող քաղաքականության ու իրականացման հեռահար ծրագրերի համար ուղենիշներ:

ЦЕЛИ И ПРИОРИТЕТЫ РАЗВИТИЯ И БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СВЕТЕ ТРЕБОВАНИЙ ГЛОКАЛИЗАЦИИ С ОСМЫСЛЕНИЕМ ЦЕЛЕПОЛАГАНИЯ «БАРХАТНОЙ РЕВОЛЮЦИИ»

Г. С. КОТАНДЖЯН, генерал-лейтенант (в отставке), доктор политических наук (РФ), профессор политологии, приглашенный ведущий профессор и ученый-эксперт по контртерроризму НУО США, избранный действительный член Академии военных наук РФ, Начальник НИУО МО РА

РЕЗЮМЕ

Происходящие в современном мире процессы глобализации, одним из приоритетных направлений которой является развитие и повсеместное использование информационно-коммуникационных технологий и компьютерная диджитализация, приводит к сжатию времени и пространства, взаимопроникновению реального и виртуального миров. Вследствие этого, давно ставшие привычными, обкатанные способы взаимодействия и сотрудничества народов и государств, индивидуума и общества уже не могут обеспечивать ожидаемые результаты и требуемую эффективность.

Глобализация содержит в себе элементы, представляющие угрозу для национального облика. В то же время ряд ученых считает, что параллельно с глобализацией происходит фрагментация, т. е. локализация глобальных процессов. Эта политика была выработана японскими экономистами и производителями под девизом: «Думай глобально, поступай локально». Р. Робертсон данный процесс обозначил термином «глокализация», являющимся синтезом терминов «глобализация» и «локализация».

Таким образом, глокализация представляет из себя процесс осуществления политики по оптимальному приспособлению глобализационных процессов к местным, локальным, условиям в целях обеспечения развития данного государства, нации в соответствии с мировым прогрессом при условии сохранения местной (национальной) самобытности.

Примером глокализации в армянской действительности является недавняя «бархатная революция», отразившая глобализационные процессы укоренения стандартных ценностей демократии в интересах сохранения национальных ценностей и облика армянского народа. В связи с этим представляется важной разработка на перспективу стратегии и вытекающей из нее национальной политики глокализации в отношении Армении и армянской нации, ориентирами для которых могут послужить аналитические статьи, публикуемые в данном номере под рубрикой «Ориентиры духовно-нравственной безопасности в свете задач глокализации “бархатной революции”», охватывающие сферы языка, культуры, социально-политической и духовно-религиозной жизнедеятельности государства и общества.

THE RA DEVELOPMENT AND SECURITY GOALS AND PRIORITIES IN THE LIGHT OF GLOCALIZATION REQUIREMENTS WITH RECONSIDERING THE GOALS OF "VELVET REVOLUTION"

H. S. KOTANJIAN, Lieutenant General (R), Doctor of Political Science (RF), Professor (Security Studies), Distinguished Visiting Member of Faculty at the U. S. NDU and Counterterrorism Fellow, (US), Full Elected Member of the Academy of Military Sciences (RF), Head, NDRU, MOD, RA

SUMMARY

The globalization processes evolving in the modern world, one of the priority directions of which is the development and all-out use of information and communication technologies and computer digitalization, brings to the squeeze of time and space, the interpenetration of real and virtual worlds. As a result, the long known habitual and polished means of interaction and cooperation amid the peoples and states, the individual and the society can no more provide for the anticipated effects and the required efficiency.

The globalization embraces elements which pose a threat to the national make-up. Simultaneously, a number of researchers think that in parallel with globalization there happens fragmentation, i.e. localization of global processes. This policy was developed by Japanese economists and producers under the motto "Think globally, act locally". R. Robertson coined this process with the term "glocalization", which is a synthesis of the terms "globalization" and "localization".

Thus, globalization is the process of implementing the policy of optimally adapting globalization processes to the native, local conditions with the aim of ensuring the development of the given state, nation in compliance with the global processes given that the local (national) identity be preserved.

The recent "velvet revolution" in Armenia, mirroring the globalization processes of implanting the standard values of democracy in the interests of preserving the national values and the image of the Armenian people, is an example of glocalization in the Armenian reality. In this respect, it is of key importance to elaborate the perspective of the strategy and, ensuing from that strategy, the national policy of glocalization regarding Armenia and the Armenian nation, for whom the analytical articles published herein under the heading "Mental and Moral Security in the Light of "Velvet Revolution's Glocalization Issues" embracing the linguistic, cultural, socio-political and religious spheres of the activity of the state and the society may serve as guidelines.

ԱԶԳԸ, ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵԶՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ. ԵՌԱԼԵԶՈՒ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պաշտոնաթող գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահիրատարակչական կենտրոնի պետ – «Հայկական բանակ» ՈԳՀ գլխավոր խմբագիր

«Օտարինը դու մի ատիլ, մի էլ սիրիլ կուրորեն,
Բայց դու հայի օգուտները միշտ վեր դասե ամենեն»

Ռ. Պատկանյան, «Հայ և հայություն»

1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԲԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1988 թ. Հայաստանում բարձրացավ ազգային զարթոնքի մի հզոր ալիք, որի գերագույն դրսևորումը եղավ անկախ ազգային պետության կազմավորումը: Սակայն հետագա տարիներին հայ ժողովրդի ձգտումները հուզագաղափարական հարթությունից հետևողականորեն փոխադրվեցին հանապազօրյա հացի հայթայթման դաշտ: 2018 թ. ապրիլ–մայիս ամիսներին Հայաստանում ծնունդ առավ ազգային զարթոնքի մի նոր ալիք, որը հույս ներշնչեց, որ մենք կարող ենք անգամ համընդհանրացող աշխարհում պահպանել «Հայի Ես-ը»: Սակայն, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է բացահայտել նախկինում թույլ տրված սխալները՝ ապագայում դրանցից խուսափելու, մի ծայրահեղությունից ոչ պակաս վտանգավոր ծայրահեղության մեջ չընկելու համար: Նման պրոբլեմներ միշտ էլ եղել են: Հետաքրքրություն է ներկայացնում 4–5-րդ դարերում ստեղծված իրադրությունը*, երբ Նախախնամության բարեհաճ շնորհով գտնվեց ելքը, որն ապահովեց հայ ժողովրդի գոյությունը երկար, դաժան ու կորստաբեր դարերի հոլովույթում մինչ այսօր և, հրամայաբար, հեռավոր ապագան:

20-րդ դարի կեսից քաղաքագիտության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի և այլ հասարակական գիտությունների, պետությունների, հասարակությունների զարգացման հետազոտությունների բնագավառներում տեսական և գործնական լայն տարածում ստացավ անվտանգային մոտեցումը: Ընդսմին անվտանգությունը գերազանցապես դիտարկվում է օբյեկտի (սուբյեկտի) ներսից՝ որպես «արտաքին ու ներքին ազդեցությունների՝ մարտահրավերների և սպառնալիքների առկայության պայմաններում իր բնականոն գործունեությունը պահպանելու նրա ունակությունը»[1]:

---

* Այդ մասին ավելի հանգամանորեն տես էջ 24–25:

[1] Տես *Д. Калачев*. Безопасность: эволюция понятия. «Тренды и управление», 2014, № 4:

Մարդկության զարգացման համեմատ փոխվում են ազգային անվտանգության ընդգրկումն ու գործառույթները, ապահովման խնդիրները և միջոցները: Տեղեկութային հասարակությունում տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների, այդ թվում՝ թվային-համակարգչային տեխնիկայի, բուռն զարգացման և մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտներ զանգվածային ներթափանցման հետևանքով տեղի է ունեցել ռեալ և երևակայական (վիրտուալ) աշխարհների ակտիվ փոխներթափանցում: Դա էապես մեծացրել է բոլոր տեսակի հնարավորությունները, ներառյալ՝ անհատի հոգեկանը ձեռնածությունների ենթարկելու կարողությունը՝ այն դարձնելով չթույլատրված ազդեցությունների ու ներխուժումների հանդեպ զգալի չափով անպաշտպան:

Մինչդեռ «Երբ ֆիզիոլոգիական պահանջմունքները համեմատաբար բավարարված են, ի հայտ են գալիս մի նոր խումբ պահանջմունքներ, որոնք մենք որոշ մոտավորությամբ կարող ենք դասել անվտանգության պահանջմունքների կարգախմբին (պաշտպանվածություն, կայունություն, կախում, պաշտպանություն, վախի, տագնապի ու քաոսի բացառում, կազմակերպվածքի, կարգուկանոնի, օրենքի ու սահմանափակումների, հովանավորի ուժի և այլ պահանջմունքներ)»[2]:

Այսպիսով՝ անվտանգությունը կարելի է դիտել որպես մարդու առաջնային պահանջմունքներից մեկը: Այս թեզը հույժ կարևոր է ներկայումս, երբ մարդու վրա մարմնական ու հոգեբանական ներգործության եղանակներն ու միջոցները այնքան են կատարելագործվել, որ հաճախ նա դառնում է կամակատար՝ անգամ չգիտակցելով դա: Մարդը կարող է զրկվել իր «Ես»-ից, ինքն իր համար դառնալ «Ոիրիշ», կորցնել իր ինքնությունը: Հատկապես, որ ազգային նույնականության պահպանմանը նպաստող գործոնների թիվը և ուժգնությունը էապես նվազել են, իսկ սպառնալիքները՝ աճել: Ըստ էության, մարդկանց կենցաղը, հագուստը, կերակուրը համընդհանրացել են, մշակույթները՝ փոխներթափանցել, իսկ փոքր ժողովուրդների մշակույթները իրականում հետզհետե կորցնում են իրենց յուրատիպությունը՝ ենթարկվելով համահարթեցված «մեծամշակույթի» զանգվածեղ հարվածներին, մի մշակույթի, որի ազդեցությունն ապահովվում է դրա թիկունքում կանգնած ինչպես հզոր տնտեսական ներուժով, այնպես էլ մարդկային ռեսուրսներով:

Եվ պատահական չէ, որ դեռ 19-րդ դարի 60-ական թվականներին նկատվել է, որ՝ «…Ավելի ու ավելի հաճախ է սկսել հանդիպել այն տիպի մարդը, որն ամբողջությամբ կլանված է փողային գործերով. նա դադար չունի օգուտներ քաղելու իր որոնումներում, նրան ամաչեցնում է անդորրությունը, նա խղճի խայթ է զգում, երբ միտքը նրան կտրում է օրվա ընթացիկ հոգսերից… Անգործունեության վախը, հարստության կուտակման համար անդուլ տագնապը և հանապազօրյա հացի մասին հոգսերը սպառնում են սպանել ամեն տեսակի կրթությունն ու բարձր ճաշակը: Մենք հետզհետե կորցնում ենք ձևի զգացումը, մեղեդու և ամեն գեղեցիկի նկատմամբ հոտառությունը: Մարդկանց միջև հարաբերություններում տիրում են գործարարությունն ու դատո-

[2] Տես *Abraham H. Maslow.* Motivation and Personality. Harper and Row, 1970, P. 39:

ղական պարզությունը, մենք այլևս չենք կարողանում ուրախանալ կյանքով, մենք առաքինություն ենք համարում «հնարավորինս կարճ ժամանակում հնարավորինս շատ անելը»:... Շուտով անգամ դեպի մտահայեցողական կյանք հակվածությունը կդառնա անարգակոծ...»[3]:

Ընդսմին հաճախ տվյալ արժեքային համակարգի պարտադրումը կրում է աչառու բնույթ, երբ անհատը պարտավոր է ընդունել դրանք կամ համակերպվել դրանց գերիշխման հանգամանքի հետ:

Այսպիսով՝ ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ է դառնում հոգևոր անվտանգությունը, այն է՝ «Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է հասարակության կենսակերտվածքի, պատմության և մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաև առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը»[4]:

Նկատենք, որ հաշվի առնելով և՛ ռուսական, և՛ արևմտյան անվտանգային մշակույթները, նպատակահարմար ենք համարում հայերենում ևս մտցնել *«ոգեբարոյական անվտանգություն»* հասկացությունը, որպեսզի այն չշփոթվի զուտ հոգևոր, այսինքն՝ գերազանցապես կրոնին առնչվող անվտանգության հետ: Ոգեբարոյական անվտանգությունը մի վիճակ է, որի դեպքում ստեղծվել է այնպիսի պայմանների համակարգ, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս իր կենսականորեն կարևոր պարամետրները (առաջին հերթին՝ մշակութային, վարքային, մտավոր բնույթի) պահպանելու պատմականորեն ձևավորված նորմերի սահմաններում[5]:

Ըստ սույն սահմանման՝ հոգևոր անվտանգության կարևոր օբյեկտներն են *ազգը* և նրա հիմնական բնութագրիչը՝ *ազգային ինքնությունը:* Մեր նպատակն է պարզել, թե դրանց հարատևման համար ներկայումս ո՛ր գործոնն է առավել կարևոր, և ինչ վիճակում է այն հարաբերված հայ ազգին:

2. «ԱԶԳ» ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ազգ» հասկացությունը սովորաբար օգտագործվում է երկու իմաստով՝ ստուգաբանական և լայն: Ստուգաբանական իմաստով ազգը այն մարդկանց միավորումն է, որոնք «փոխկապված են իրենց ծնունդով, ծագումով, ինչպես, օրինակ, այն ժամանակ, երբ խոսում են հրեա ժողովրդի կամ չերոկի ժողովրդի մասին»[6]: Լայն իմաստով ազգն ընկալվում է որպես կոնկրետ տա-

[3] Տես *Фридрих Ницше.* По ту сторону добра и зла. Предисл. М. А. Блюменкранца. М.–Харьков, 1998, с. 7:

[4] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 74:

[5] Տես «Понятие духовно-нравственной России. Социология: современные тенденции» (www.sociodone.ru/codos-760–1.html):

[6] Տես *Джон Джозеф.* Язык и национальная идентичность (http://www.ruthenia.ru/logos/number/49/01.pdf):

րածք, դրա բնակչությունը և նրան միասնական կենտրոնից ղեկավարող կառավարությունը, օրինակ՝ բրիտանական ազգը: Իսկ եթե ստուգաբանական և լայն իմաստները համընկնում են, գործածվում է «ազգային պետություն» տերմինը: Այսպես. Իռլանդիան համարվում է ազգ և ազգային պետություն, մինչդեռ Մեծ Բրիտանիան ազգ է միայն լայն իմաստով[7]:

Ինչպես տեսնում ենք, լայն իմաստով ազգը դիտվում է որպես քաղաքական երևույթ: Ըստ այդմ պրոֆեսոր Հ. Քոթանջյանը արդարացի կերպով նշում է. ««Ազգ» հասկացության սահմանման բոլոր երանգավորումներով հանդերձ՝ արևմտյան քաղաքագետները միակարծիք են այն բանում, որ ընդունում են դրա անխզելի կապը պետական-քաղաքական կազմավորման հետ»[8]: Համարվում է, որ ազգի վերարտադրության մեխանիզմը պատկանում է քաղաքականության ու պետական կառավարման ոլորտին, դա «պետության ու քաղաքացիական հասարակության հաստատությունների այն փոխազդեցությունն է, որն ազգը ձևավորում է որպես մի ընդհանրություն, որն իրեն գիտակցում է ազգային պետությամբ միջնորդավորված ընդհանուր (ազգային) շահերի առկայության միջոցով»[9]:

Ըստ արևելյան ավանդույթի՝ ազգը սահմանվում է որպես «մարդկանց սոցիալ-էթնիկական ընդհանրության պատմական զարգացման բարձրագույն ձև, որն ունի լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի, հոգեբանության ու մշակույթի որոշակի ընդհանրություն ու ազգային ինքնագիտակցություն»[10]: Այս ձևակերպումն օգտագործելի էր ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ այժմ Ռուսաստանում և մի շարք հետխորհրդային հանրապետություններում:

Ազգի կարևոր գործառույթն է իր յուրաքանչյուր անդամի գոյատևման շանսերի մեծացումը, ապա և նրանց արժանապատիվ գոյությունը: Դրա համար նա պետք է ապահովի իր ինքնապահպանումը՝ երկարաձգելով գոյությունը, ինչի համար անհրաժեշտ է իր անդամների որոշակի չափի համասեռություն (նույնականություն), որը ձևավորվում է բնական ընտրազատման միջոցով[11]: Կենդանի բնության դեպքում նույնականության այդ չափն ապահովվում է հիմնականում խմբի (էթնոսի, ազգի) գենետիկական միջուկի կայունությամբ, ընդսմին կյանքի փոփոխվող պայմաններին հարմարվելու համար մուտացի-

[7] Տես նույն տեղում:

[8] *Հ. Ս. Քոթանջյան*, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: Ե., 2010, էջ 229:

[9] Տես *А. Л. Сафонов, А. Д. Орлов.* Нация и этнос: разграничение понятий в контексте глобализации. «Вестник Бурятского государственного университета», 2012, № 6 (https://cyberleninka.ru/article/n/natsiya-i-etnos-razgranichenie-ponyatiy-v-kontekste-globalizatsii):

[10] Տես ՀՍՀ, հ. 1: Ե., 1974, էջ 101:

[11] Տես *Петр Смирнов.* Национальная идентичность, национальный характер и национальный менталитет: понятия и факторы формирования (http://www.intelros.ru/readroom/credo_new/kre4-2015/28724-nacionalnaya-identichnost-nacionalnyy-harakter-i-nacionalnyy-mentalitet-ponyatiya-i-faktory-formirovaniya.html):

աներն այդ միջուկի մեջ մտցնում են անհրաժեշտ բազմապիսություն: Նույնականությունը պայմանավորված է առաջին հերթին մշակութային գործոններով (խմբային արժեքները պահպանող և աշխարհայացքը ձևավորող լեզուն, կրոնը կամ գաղափարախոսությունը, ինչպես նաև խմբային պահանջմունքներով և արժեքներով պայմանավորված կայուն վարքային նորմերը), ինչպես նաև դրսևորվում է համասեռության՝ կերպարի, ֆիզիոլոգիայի և վարքի ձևերի որոշ համախմբի միջոցով: Այսպիսով՝ նույնականությունը պետք է հասկանալ որպես մշակութային կամ սոցիոմշակութային երևույթ, որը ձևավորվում է սոցիալականացման և այլ պրոցեսների շնորհիվ: Այն փոփոխվում է ավելի արագ, քան համասեռությունը, ընդսմին արագությունը կախված է ինչպես փոփոխվող արտաքին պայմաններից, այնպես էլ խմբի անդամների ինքնագիտակցությունից, այդ թվում՝ խմբին անդամակցության նկատմամբ մարդու վերաբերմունքից[12]:

Ազգի որոշարկման հարցը հատկապես կարևոր է այն ազգերի համար, որոնք ունեն մեծ սփյուռք, ուստի նաև հայ ժողովրդի համար, որի Սփյուռքը թվապես շատ ավելի մեծ է, քան հայոց պետության բնակչությունը, և որի մեծ մասը գաղթել է այն բնիկ հայկական պատմական հողերից, որոնք այժմ ներառված են այլ պետությունների սահմաններում:

Այսպիսով՝ հայ ժողովրդի համար, որը դարեր ի վեր չի ունեցել անկախ պետականություն, որի տարածքը ավելի քան 17 դար բաժանված է եղել տարբեր պետությունների միջև, չկա կենցաղի, տարածքի ընդհանրություն, իսկ պատմական հիշողությունն էլ կարող է ընդհանուր լինել միայն մոտ 2000 տարվա վաղեմությամբ: Եվ այդուհանդերձ, հայ ազգը (ժողովուրդը) գոյություն ունի, թեև դարեր շարունակ ենթարկվել է տնտեսական, կրոնական ու լեզվական բռնաճնշումների, կոտորածների ու խոշտանգումների, որոնք իրենց գագաթնակետին են հասել Օսմանյան կայսրությունում՝ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում տանելով մոտ երկու միլիոն մարդու կյանք:

Ապա ինչն է պահել մեզ՝ որպես հայի, եթե ոչ մեր ինքնագիտակցությունը, մեր սերը դեպի մեր հոգեթով լեզուն, մեր հպարտ երկնաքեր լեռներն ու մեղմաձիգ հովիտները, մեր «Երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե, Արևն ամառան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ, Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև, Ո՞ հնամյա քաղաքների քարը...»[13]:

Բայց անգամ մեր լեզուն է տրոհված. արևմտահայերենը և արևելահայերենը, ծագելով նախահնդեվրոպական լեզվից առաջիններից մեկն անջատված աստվածահոս գրաբարից[14], բավական հեռացել են միմյանցից: Կրոնը ևս միասնական չէ. կա Հայաստանյայց Առաքելական եկեղեցի, կան Հայ Կաթո-

[12] Տես նույն տեղում:

[13] Տես *Ե. Չարենց,* Ընտիր երկեր: Ե.: 1954, էջ 48:

[14] Տես, օրինակ, *Russell D. Gray, Quentin D. Atkinson*. Language-tree divergence times support the Anatolian theory of Indo-European origin. “Nature”, 27.11.2003, Vol. 426:

ղիկե, Հայ Բողոքական, Հայ Ավետարանական եկեղեցիներ, կա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, կան հայ մահմեդականներ: Եվ այդուհանդերձ այդ եկեղեցիների հոտը հայերն են:

Իսկ այսօր՝ անկախության պարագայում, մեր լեզուն կանգնած է կործանման եզրին, որովհետև ամեն ոք՝ գրագետ, թե անգրագետ, խելացի, հանրագիտարանային գիտելիքներ ու վերլուծական միտք ունեցող, թե սահմանափակ մտավոր կարողություններով օժտված ու թերուս, թերթ է հրապարակում, թարգմանություններ կատարում*, հեռուստատեսությամբ ու ռադիոյով ելույթներ ունենում, զբաղվում տերմինաշինությամբ և, ի վերջո, պղծում, խաթարում մեր լեզվամտածողությունը...

3. ԼԵԶՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳ, ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ԱԶԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Գիտնականների մեծ մասը համարում է, որ ազգային ինքնության պահպանման գլխավոր գործոններից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, լեզուն է: Այսպես. Ուրարտուի կործանումից հետո հայ ժողովուրդը հաստատել է իր գերիշխանությունը մի մեծ տարածքի վրա, և Արտաշես Ա-ն, մ. թ. ա. 2-րդ դարի սկզբին հիմնելով Մեծ Հայքի թագավորությունը, հիմնականում միավորել է հայախոս բնակչությամբ հողերը, որոնք զբաղեցնում էին մոտ 300000 քառ. կմ տարածք[15]: Եվ այդ ժողովուրդն ըստ էության մ. թ. 5-րդ դարում արդեն ձևավորվել էր, քանի որ, կորցնելով պետականությունը և մասնատված լինելով իր ազգակից ժողովուրդների պետությունների կազմում, շուրջ 4 դար պահպանել է իր ազգային ինքնությունը՝ շփվելով հայոց լեզվով[16]:

Լեզուն հույժ բարդ կառույց է, կենդանի օրգանիզմ, որը, ծնված լինելով անհիշելի ժամանակներում, զարգացել է մարդկության տվյալ տիպին զուգընթաց՝ ղեկավարվելով իր ուրույն տրամաբանված օրինաչափություններով, որոնք տվյալ ազգի լեզվամտածողության անմիջական արգասիքն էին, և արտացոլելով մարդու գործունեությամբ պայմանավորված մտապատկեր-հասկացությունների անընդհատ ընդարձակվող համակարգը: «Գիտելիքի նոր հարացույցի հիմքում դրված է լեզվի այնպիսի ըմբռնումը, ըստ որի՝ դա մի

* Որպես ապացույց դիտարկենք երկու օրինակ ֆիլմերի կրկնօրինակումներից: Սերիալներից մեկում բողոք է հնչում, թե ոչ միայն իրեն են ծեծել, այլև ջարդել են իր «վրացական» աթոռը: Ըստ երևույթին անգլերեն ասվել է *Georgian*, բայց ոչ թե վրացականի իմաստով, այլ որպես Գեորգ թագավորի դարաշրջանին պատկանող, այսինքն՝ հնություն: Մյուսը «Քվենտին Դորվարդն» է: Այստեղ գլխավոր հերոսին անընդհատ անվանում են «նետաձիգ», ինչով խեղաթյուրվում է և՛ ռուսերեն բնագիրը *(«стрелок»*, ոչ թե *«лучник»),* և՛ պատմական իրողությունը, որովհետև Լյուդովիկոս 11-րդի շոտլանդական գվարդիան զինված էր ոչ թե նետ ու աղեղով, այլ մուշկետներով (հրացաններով), այսինքն՝ պետք է թարգմանվեր «հրաձիգ»: Երկու դեպքն էլ թարգմանիչների անտեղյակության՝ ընդհանուր գիտելիք չունենալու հետևանք են:

[15] Տես *Թ. Խ. Հակոբյան*, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր): Հրատ. 2-րդ՝ լրացված և բարեփոխված: Ե., 1968, էջ 7, 98–99:

[16] Տես «Հայ ժողովրդի պատմություն»: Խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի: Ե., 2012, Բաժին առաջին, գլ. 2-րդ, § 7, գլ. 4-րդ, § 2:

գոյացում է, որն օգտագործվում է հաղորդակցային գործունեության մեջ և օժտված է այդ գործունեության կատարման համար անհրաժեշտ միավորներով, կառույցներով, կարգախմբերով ու մեխանիզմներով: Այսպիսով՝ ժամանակակից լեզվաբանության գիտական հարացույցը, միավորելով լեզվի նկատմամբ ճանաչողական և հաղորդակցային-գործունեական մոտեցումները, ձգտում է արտահայտելու լեզվի՝ որպես համակարգի և լեզվի՝ որպես գործունեության բարդ էությունը»[17]:

Հենց լեզուն է այն հիմքը, որի վրա հարևան տարածքներում բնակվող մարդիկ հաստատում էին առևտրական կապեր և միավորվում՝ կազմելով ազգեր: «Բառերն ու արտահայտությունները, լինելով մարդու համար արտաքին բնական ու սոցիալական իրողության կառուցվածքների արտացոլում, իրենց հերթին «ընկղմված» են մարդկային (սոցիոմշակութային) կեցության իրողության մեջ և այդպիսով կախված են նրա կառուցվածքային կապերից»[18]:

Մինչդեռ այդ սոցիոմշակութային կեցությունը ներկայումս ենթարկվում է լուրջ փոխակերպումների, ինչին էապես նպաստում են և՛ խորացող համընդհանրացումը, և՛ աճող միգրացիան: Տարբեր սոցիոմշակութային տարածությունների ներկայացուցիչների միջև ընդլայնվող ու սերտացող շփումները առաջ են բերել հաղորդակցման համար մի որևէ ընդհանուր լեզվի գոյության անհրաժեշտություն: Նման լեզու այսօր անգլերենն է: Անգլիաբանությունները (ըստ էության՝ ամերիկաբանությունները) հորդում են այլ լեզուների մեջ՝ աղավաղելով դրանց ներքին տրամաբանական համակարգը և, միևնույն ժամանակ, անխուսափելիորեն սերմանելով ամերիկյան կենսակերպը: Նման իրավիճակը մի շարք լեզվաբանների ստիպել է հարց դնել, թե արդյոք այս ամենը չի սպառնում ազգային լեզուների գոյությանը: Ոչ թեև Ս. Հանտինգտոնը համարում է, որ մի լեզու, որը մայրենի չէ երկրագնդի բնակչության 92 %-ի համար, չի կարող լինել համաշխարհային լեզու՝ *“lingua franca”,* այն «ոչ թե ինքնության կամ ընդհանրության աղբյուր է, այլ զուտ հաղորդակցության միջոց»[19], սակայն մենք համոզված ենք, որ տագնապը *ամենևին էլ անհիմն չէ:*

Բանն այն է, որ անգլիաբանությունների զանգվածային ներխուժման հետևանքով բացասական ազդեցության է ենթարկվում լեզվամտածողությունը: Առաջներում, երբ գրագիտությունը առանձին անհատների առանձնաշնորհն էր, նրանք նորամուծությունների հարցում դրսևորում էին խելամիտ զգուշավորություն՝ լեզվի հիմքերը, նրա տրամաբանությունը պատսպարելով խոցումից: Խորհրդային շրջանում, երբ տառաճանաչությունը դարձել էր համընդհանուր, էապես աճել էր զանգվածային լրատվության միջոցների թիվը, ստեղծվել էր հատուկ մարմին՝ «Լեզվի կոմիտե», ապա՝ «Լեզվի բարձրագույն խորհուրդ», որը գործում էր Նախարարների խորհրդին առընթեր, ուս-

[17] Տես *Е. Л. Ерзинкян.* Дейксис слова: семантика и прагматика. Е., 2013, с. 4:

[18] Տես *Ю. Д. Гранин.* «Нация» и «этнос»: эволюция подходов и интерпретаций в философии и науке XVIII – XX столетий. «Вопросы философии», 2015, № 7:

[19] *С. Хантингтон.* Столкновение цивилизаций. М., 2003, с. 119.

տի և ուներ համապատասխան լիազորություններ: Այսօր հրատարակվող թերթերի ու հանդեսների, հեռարձակվող հեռուստաալիքների ու ռադիոծրագրերի չափազանց առատության պայմաններում խոսել լեզվի անաղարտության մասին ավելորդ է, հատկապես որ «վերահսկող» մարմինների ղեկավարները հաճախ լեզվից անգիտակ են, թեկուզ և ունեն գիտական աստիճաններ ու կոչումներ: Գործը հասել է այն ծայրահեղության, որ ցանկացած սխալ (իսկ սխալներն ունեն որոշակի «հրապուրանք»՝ շնորհիվ իրենց «թարմության» և «անսովորականության») ստանում է «հիմնավորում»: Անգամ գրաբարի խեղաթյուրումը (եթե չասենք՝ պղծումը) արդարացվում է այդ (ցավոք, մեռած) լեզվի «զարգացմամբ»:

Տարակուսանք են առաջացնում նաև արևմտահայերենն ու արևելահայերենը միմյանց հակադրելու փորձերը: Խորհրդային տարիներին մենք դպրոցում հիացմունքով էինք կարդում արևմտահայ գրողների գեղարվեստական գոհարները: Այդ շրջանում հրատարակված «Հայ դասականները» բազմահատորյակում շեշտը դրված էր արևմտահայ գրողների ստեղծագործությունների վրա, որպեսզի խորհրդահայ ընթերցողին հասու դառնան ազգային գրականության շտեմարանը կազմող արևմտահայ գրողների երկերը: Հայաստանում հրատարակվում և Սփյուռք էին առաքվում երկու գրական հայերեններով դասագրքեր: Իսկ այսօր պարզվում է, որ մենք իրար չենք կարող հասկանալ, քանի դեռ արևելահայերենի ուղղագրությունը «մեսրոպյան» չէ*: Թեև հենց արևմտահայերենում է խախտված մեսրոպյան այբուբենի գլխավոր սկզբունքը. յուրաքանչյուր հնչյունի դիմաց մեկ տառ: Կարծում ենք, որ հայության երկու հատվածների միջև անըմբռնողության պատճառը ուղղագրությունը և, առհասարակ, լեզուն չեն. սա «Հայրենիքի» այլակերպ ըմբռնման հարց է: Իսկ լեզվի հարցը, կարծում ենք, արհեստականորեն է հրահրվում, եթե հիշենք Շոտլանդիայի իրողությունը: Այնտեղ երկու ազգային լեզուների՝ գաելերենի և շոտլանդերենի** գոյակցությունը խոչընդոտել է լեզվական ազգայնականության ձևավորմանը, քանի որ դրանց «նվիրյալները» այնքան են տարված իրար դեմ պայքարով, որ ուշադրություն չեն դարձնում անգլերենի տիրապետության վրա: Այսպիսով՝ գաելերենի և շոտլանդերենի միջև ընթացող դարավոր անդադրում պայքարը դարձել է ազգայնական եռանդն ընդունելի սահմաններում պահպանելու՝ զսպելու, խելացի միջոց[20]:

Որ լեզվի հարցը մեզանում ոչ թե ազգային-քաղաքակրթական պրոբլեմ է, այլ զուտ քաղաքական, կարող ենք լուսաբանել հետևյալ փաստով: Վերջերս, երբ Ռուսաստանից եղավ ակնարկ՝ ռուսերենին տալու հատուկ կարգավիճակ, այստեղ բարձրացավ վրդովմունքի մի հսկայական ալիք: Ամբողջ այսպես կոչված մտավորականությունը, անգամ «ջարդված» հայերենով,

* Նկատենք, որ արևմտահայերենի ուղղագրությունը ևս «մեսրոպյան» չէ, թեկուզ այն պատճառով, որ Մաշտոցի այբուբենում «օ» տառ չի եղել:

** Գաելերենի սկզբնաղբյուրը կելտերենն է, իսկ շոտլանդերենինը՝ գերմաներենը:

[20] Տես, օրինակ, *Е. В. Кузнецова*. Язык и национальная идентичность (https://cyberleninka.ru/article/n/yazyk-i-natsionalnaya-identichnost):

ցասումնալից ելույթներով «պարսավում էր հյուսիսային հանդգնությունը», սակայն ոչ մեկին չէր հուզում, որ հատկապես Երևանի կենտրոնում հայերենին տիրապետող, բայց անգլերենին անտեղյակ մարդը կմոլորվի, որովհետև զգալի թվով ցուցանակներ գրված են միայն անգլերենով, իսկ եթե հայերեն տառերով բառեր կան էլ, ապա այդ բառերն են անգլերեն:

Մինչդեռ անգամ վաղ միջնադարի համատարած անգրագիտության շրջանում հենց հայերեն գիրը նպաստեց հայ ժողովրդի հոգևոր-մշակութային տոկունությանը՝ հնարավորություն տալով պատարագները լսելու հայերեն տառերով արձանագրված հայերեն թարգմանությամբ: Ընդսմին ռուս փիլիսոփա Նեդելը այսպես է գնահատում Մաշտոցի հրաշագործությունը. «… նրա (Մաշտոցի – *Դ. Չ.*) համար գրերի ստեղծումը ոչ այնքան լեզվաբանական հարց էր, որքան քաղաքակրթական: … Մաշտոցը ձգտում էր կատարյալ աներկբայության. հայոց այբուբենը, ի տարբերություն անգամ սանսկրիտից, մի հնչույթ արտահայտելու համար չի ճանաչում գրույթների համակցություն: Եթե դասական հայերենը (գրաբարը) ներկայացնենք երկու վերջավոր բազմությունների՝ հնչույթների ու գրույթների տեսքով, ապա, մաթեմատիկայի լեզվով ասած, Մաշտոցը հայտնագործել է գործնականում կատարյալ հավասարաձևունակություն, որտեղ մի բազմության տարրերին լիովին համապատասխանում են մյուս բազմության տարրերը… Սակայն բացի զուտ տեխնիկական պրոբլեմից՝ բոլոր հայերեն հնչյունների համար գտնել համապատասխան գրույթներ, Մաշտոցն իր առջև ուներ մայրենի լեզվի ստանդարտացման խնդիր: Հայերենը եղել (և մնում) է բարբառների տրոհված լեզու, և ստանդարտի ստեղծումն զգալի չափով արհեստական էր»[21]:

Կարծում ենք, որ հայոց գրերի գյուտի պատմությունն զգալի չափով լուսաբանում է մեր խնդրո առարկայի վերլուծությունը՝ ապացուցելով, որ ազգապահպանության հարցը հայության համար միշտ եղել է հրատապ, և որ դեռ 4–5-րդ դարերում հայ ժողովուրդը ծնունդ է տվել հանճարների, որոնք այն ժամանակ արդեն հասկացել էին այս պրոբլեմի ճիշտ լուծման եղանակը:

4-րդ դարի վերջում Մեծ Հայքը բաժանվել էր քրիստոնեական Բյուզանդիայի և զրադաշտական Պարսկաստանի միջև: Եվ եթե դա, շնորհիվ ավերիչ պատերազմների դադարման, հանգեցրել էր կյանքի խաղաղման ու որոշակի տնտեսական վերելքի, ապա քաղաքական ինքնուրույնության վերականգնման ու միասնականության ապահովման տեսակետից դարձել էր անհաղթահարելի խոչընդոտ: Այս պայմաններում ի հայտ են գալիս գործիչներ, որոնց մտահոգում է ապագան: Նրանցից երեքի անունները դարերի խորքից հասել են մեզ. *Վռամշապուհ, Սահակ Պարթև* և *Մեսրոպ Մաշտոց*:

Վռամշապուհ արքայի տեսակետից միջազգային իրադրությունն սպառնալից էր. չկար բյուզանդա-պարսկական առճակատումը, որը հայերը կարողանային օգտագործել ի նպաստ հայության, արևմտյան մասում թագավորական

[21] *А. Ю. Недель.* Как язык научился думать. Первоэлементы в языке и мышление древних цивилизаций (на материале китайского, египетского и армянского языков). «Вопросы философии», 2016, № 8.

գահը վերացվել էր, արևելյան մասում՝ ծայր աստիճանի խախուտ էր: Ուստի պետք էր ապավինել ներքին ուժերին, իսկ դրանք ևս ջլատված էին: Եկեղեցին նույնպես պառակտված էր. արևելյան մասում պարսիկներն ամեն կերպ աջակցում էին ասորական տարրին՝ առաջ քաշելով ասորի կրոնավորներին, եկեղեցու և դպրության լեզու դարձնելով ասորերենը, մինչ-դեռ արևմտյան մասում ամբողջը հունարեն էր: Ասորական ազդեցությունն այնքան էր ուժգնացել, որ իր կյանքի վերջին տարիներին Սահակն ստիպված էր իր Սբ. Աթոռը զիջել ասորի եպիսկոպոսներին[22]: Իսկ Մաշտոցը, նախկինում լինելով զինվորական, դպիր ու կրոնավոր, «մտքում դրեց ավելի հոգալ նույնպես համայն աշխարհի ժողովրդին մխիթարելու մասին, [ուստի] և... ասում էր հոգալով. «Տրտմություն է ինձ համար, և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայրների և ազգակիցների համար»»[23]:

Սա միանշանակ կերպով ապացուցում է, որ այդ ժամանակ արդեն, եթե ո՛չ համատարած, ապա գոնե մեր ժողովրդի ներկայացուցիչներից ոմանք օժտված էին զարգացած ազգային ինքնագիտակցությամբ, մտահոգված էին ազգային ինքնության պահպանման խնդրով և այն փորձում էին լուծել ազգային լեզվի ամրագրմամբ՝ գրավոր աղբյուրների հայացման շնորհիվ, և եկեղեցու՝ որպես կրոնի հիմնական կրող կառույցի միասնականության պահպանմամբ: Եվ դրա լավագույն արդյունքը եղավ այն, որ ժողովուրդը այդ «մութ» ժամանակներում, երբ չկային զանգվածային լրատվության միջոցներ, մարդու գիտակցականի և ենթագիտակցականի վրա ներգործության զարգացած տեխնոլոգիաներ, ընդունեց տվյալ գաղափարը, հետևեց դրան և, այդ ամենի շնորհիվ հաղթահարելով օտարի կեղեքումներն ու բռնաճնշումները, ծանր քաղաքական ու տնտեսական լուծը, կոտորածներն ու կողոպուտը, ավերածություններն ու ասպատակությունները, կարողացավ գոյատևել մինչ այսօր և անգամ վերականգնել իր անկախ ազգային պետականությունը՝ պահպանելով իր ինքնությունը՝ իր ազգային «Ես»-ը:

Դա նշանակում է, որ այն ժամանակ արդեն հայությունը հասել էր «քաղաքակրթական ինքնագիտակցության», այսինքն՝ քաղաքակրթության գոյությանն «իր մեջ» և «իր համար»: Առաջին դեպքում այն գոյություն ունի օբյեկտիվորեն՝ օժտված լինելով հիմքային արժեքների և իմաստների լիարժեք լրակազմով, հստակեցված ու իրեն հատուկ հաստատություններով հանդերձ, սակայն դրա հետ մեկտեղ իրեն չի որակում ինչ-որ կերպ առանձնահատուկ լինելու կարգերով: Իսկ եթե դա տեղի է ունենում, ապա քաղաքակրթությունը վերածվում է «իր համար» գոյություն ունեցող սոցիոմշակութային ընդհանրության, սուբյեկտիվ է, և տվյալ դեպքում կարևորը «ինքնության», «ուրիշներից» տարանջատվածության զգացողությունն է[24]:

[22] Տես *Կորյուն,* Վարք Մաշտոցի: Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի: Ե., 1962, էջ 58–63:

[23] Տես նույն տեղում, էջ 98:

[24] Այս մասին ավելի հանգամանորեն տես «Цивилизации в глобализующемся мире. Предварительные итоги междисциплинарного проекта». М., 2009:

4. ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

«Նույնականությունը սովորաբար վերաբերում է այն բանին, թե ովքեր են անհատները՝ առնչվելով այն խմբերին, որոնց նրանք պատկանում են, այն է՝ ազգություն, էթնիկական պատկանելություն, կրոն, սեռ, սերունդ, սեռական կողմնորոշում, սոցիալական խավ և այլ հատկությունների անվերջ շարք»[25]: Մեկ այլ սահմանմամբ՝ «նույնականությունը կարելի է դիտել որպես խոսքային փոխգործության ավելի ճկուն աղբյուր...»[26]: Նույնականությունը սոցիալ-հոգեբանական տեսությունների ու հետազոտության կենտրոնական առարկան է: Ըստ այդմ՝ այն ուսումնասիրվում է տարբեր տեսանկյուններից՝ սոցիալական ճանաչողության, խորհրդանշական փոխգործության (նույնականություն և լեզու), սոցիալական հիմքերի (էթնիկական, սեռական կարգախմբային և այլն), նույնականությունների պայքարի (ազգայնականություն, սոցիալական շարժումներ) և այլ կողմերով[27]:

Եթե հաշվի առնենք, որ *նույնականություն* նշանակում է «նույնական լինելը, համապատասխանություն», և *նույնական*՝ «միատեսակ, նույնպիսի, լիովին համապատասխան, նույն»[28], իսկ ինքնությունը սահմանվում է որպես՝ «1. Ով լինելը, ինչ լինելը, 2. Անհատականություն, ինքնատիպություն, յուրահատկություն:... 4. էություն, գոյություն:... 6. Իրեն հատուկ գծերի ամբողջությունը»[29], ապա նպատակահարմար կլիներ անգլերեն *identity*-ի դիմաց հայերենում օգտագործել այս երկու տերմիններն էլ՝ համապատասխան իմաստային տարբերակմամբ: Երբ խոսքը վերաբերում է իր պատկանելության վերաբերյալ տվյալ անձի տեսակետին, օգտագործել «նույնականություն» տերմինը, իսկ երբ խոսքը նրա օբյեկտիվ էության մասին է՝ «ինքնությունը»: Ընդսմին «նույնականությունը» փոփոխական է և պայմանավորված է անձի հոգեկանի ներքին վիճակով և արտաքին ազդեցություններով, մինչդեռ «ինքնությունը» նրա բուն էությունն է և հարաբերականորեն անփոփոխ է[*]: Ավելի ընդհանրացված ձևով կարող ենք ասել, որ մեկը իրական աշխարհի երևույթ է՝ օբյեկտիվ է, մյուսը՝ թվացյալ, զգացմունքային է՝ սուբյեկտիվ: Տվյալ դեպքում արդարացի է թվում Ֆ. Նիցշեի այն կարծիքը, թե՝ ««թվացյալ» աշխարհը միակն

[25] Տես *J. E. Joseph.* Identity work and face work across linguistic and cultural boundaries. “Journal of Politeness Research”, 2013, Vol. 9, N 1:

[26] Տես *Judith A. Howard.* Social Psychology of Identities. “Annual Review of Sociology”, 2000, Vol. 26:

[27] Տես նույն տեղում:

[28] Տես «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4: Ե., 1980, էջ 53:

[29] Տես նույն տեղում, հ. 2: Ե., 1972, էջ 340–341:

[*] Այսպես. ֆրանսիացի հայտնի էստրադային երգչուհի Սիլվի Վարդանը ժամանակին հայտարարում էր, թե բուլղարուհի է, և անգամ ստեղծել էր «Սիլվի Վարդանի ասոցիացիա Բուլղարիայի համար» (տես «Сильви Вартан: статья из журнала “Nos tendres et douces années”, 2006, N 4. Болгарка до глубины души: Сильви!» (http://frenchmusicals.ru/modules/xnews/print.php?storyid=296)): Սակայն հետագայում հայկական ինքնությունը դրսևորվել է, և Շերի հետ հարցազրույցի ժամանակ նա, ընդհատելով հաղորդավարուհուն, հայտարարել է. «Ես հայ եմ հորս կողմից» (տես «Звезда французского шоу-бизнеса Сильви Вардан впервые призналась, что армянка». «Еркрамас», 24.11.2011):

է. «իրական աշխարհը» լոկ *ստակցված*[*] է նրան...»[30], քանի որ «նույնականությունը» այն է, ինչ իրեն համարում է մարդ, և դրսևորվում է կյանքում, մինչդեռ «ինքնությունը» խոր թաղված է ենթագիտակցականում և կարող է դրսևորվել կա՛մ լիովին՝ որպես նույնականություն, կա՛մ հատվածաբար՝ առանձին վարքային արտահայտումների տեսքով:

Որպես ասվածի հիմնավորում՝ կարող ենք հիշատակել մարաններին (առերես քրիստոնեություն ընդունած հրեաներ) կամ իսպանացիների տիրապետության տակ գտնվող հնդկացիներին: Վերջիններս արտաքուստ առանց ընդվզումների ընդունում էին քրիստոնեությունը և իսպանացիների կենսակերպը, սակայն հոգու խորքում պահպանում էին պապենական ավանդույթներին հավատարմությունը: Իսկ երբ այդ ճնշումն սպառնում էր խախտելու նրանց ներհոգեկան սրբությունների համակարգը, ապստամբում էին: Մեզ ավելի հարազատ օրինակ են Թուրքիայում, այսպես կոչված, ծպտյալ հայերը, որոնք քաղաքական կամ այլ նկատառումներով թաքցնում են իրենց հայ լինելը:

5. ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵԶՈՒՆ

Լեզվի, կամ լեզվամտածողության, և ազգային ինքնության միջև կապի ուսումնասիրությամբ զբաղվել են մեծ թվով գիտնականներ: Հիշատակենք Ձ. Ձոզեֆին, է. Բալիբարին, Ա. Պ. Ձդրավոմիսլովային, Վ. Վ. Կոլեսնիկովին, է. Հոբսբաումին, Մ. Սիլվերստեյնին, Մ. Ոհոլցերին:

20-րդ դարում ձևավորվել է մի տեսություն, ըստ որի՝ լեզուների իմաստաբանական համակարգերի միջև եղած տարբերությունը բացարձակ բնույթի է, ունի լեզվական պարտադրման ձև և պայմանավորում է ինչպես լեզվի միջոցով աշխարհի ընկալումը, այնպես էլ աշխարհում մարդկանց վարքը[31]: Այս տեսությունն սկզբնավորվել է Ի. Գերդերի, Վ. ֆոն Հումբոլդտի աշխատություններում և զարգացվել է գերմանական լեզվափիլիսոփայության ներկայացուցիչներ է. Կասիրերի, Յ. Լ. Վայսգերբերի ուսմունքում:

Ամերիկյան գիտնականներից այս տեսակետի կողմնակիցներ են Ֆ. Բոասը, է. Սեպիրը, Բ. Լ. Ուորֆը, որն ստեղծել է «լեզվական հարաբերականության սկզբունք» տերմինը[32]: Ըստ այդ սկզբունքի՝ լեզվի կառուցվածքը պայմանավորում է դրանով խոսողների ճանաչողությունը. ուղղորդում, ուրվագծում, տոգորում և ձևավորում է նրանց աշխարհընկալումը: Այս տեսակետը քննադատության են ենթարկել Ն. Չոմսկին, Ս. Փինկերը, որոնց կարծիքով՝ լեզուների իմաստաբանական համակարգերի միջև չկա որևէ սկզբունքային տարբերություն[33]:

[*] Մենք այդպես ենք թարգմանել ռուսերեն *прилган* բառը:

[30] Տես *Ֆ. Նիցշե,* Նշ. աշխ., էջ 900:

[31] Տես, օրինակ, *E. Sapir.* Language as a Form of Human Behavior. “British Journal”, June 1927, Vol. 16, N 6:

[32] Տես “Language, Thought, and Reality. Selected Writings of Benjamin Lee Whort”. Ed. by John B. Carrell. MIT Press, 1956, P. 214:

[33] Տես, օրինակ, *Noam Chomsky*. Logical Syntax and Semantics: Their linguistic Relevance. “Language”, January - March, 1955, Vol. 31, N 1:

Գերմանացի մեծ լեզվաբան Վիլհելմ ֆոն Հումբոլդտի այն տեսությունը, թե *կոնկրետ ժողովրդի լեզվում ամփոփվում է այդ ժողովրդի հոգին,* լայն տարածում է ստացել ոչ միայն արևմտյան, առաջին հերթին՝ գերմանական, այլև ռուսական լեզվաբանության մեջ[34]: Սոցիալական իրականության կառուցավորման գործում լեզվի ունեցած առանձնակի դերի հարցի մշակման տեսակետից մեծ ներդրում ունեն Փ. Բերգերը, Թ. Լակմանը, որոնք շեշտում են լեզվի ինտեգրային և վերազանցական (տրանսցենդենտալ) հնարավորությունները, ինչպես նաև Տ. Ա. վան Դեյկը, Կ. Մանհայմը և ուրիշներ: Իսկ անցած դարի 70-ական թվականներից զարգանում է կոնկրետ սոցիալական պայմաններում լեզվի ռեալ գործածության նկատմամբ դատողական (դիսկուրսիոն) մոտեցումը, որն ուսումնասիրում են Ռ. Բարտը, Փ. Բերգերը, Յ. Հաբերմասը, Օ. Պոսպելովան, Ա. Ուսմանովան, Մ. Ֆուկոն և ուրիշներ[35]:

6. ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Կարծում ենք, որ բերված գիտական վկայությունները, կարծիքները, դատողությունները բավարար են, որպեսզի ապացուցված համարվի, որ ազգային ինքնության ձևավորման ու պահպանման գործում և՛ տեսականորեն, և՛ գործնականում լեզուն խաղում է հսկայական, եթե չասենք՝ վճռորոշ, դեր:

Թվում է՝ անհրաժեշտ է նաև խոսել հայերենում հետզհետե ավելի ու ավելի տարածվող և այդպիսով հայեցի լեզվական ձևերը դուրս մղող այն սխալների մասին, որոնք, ներգործելով լեզվական համակարգի հիմքերի ու լեզվամտածողության վրա, սպառնում են խաթարել մեր ազգային ինքնությունը[*]:

Դրա բացատրությունը, մեր կարծիքով, հետևյալն է: Լեզուն մտածողության և հաղորդակցման հիմնական միջոցն է, ինչպես նաև միևնույն ազգությամբ կամ էթնիկությամբ մարդկանց միավորող արդյունավետ գործոն: Նրա կարևոր գործառույթներից մեկն այն է, որ ծառայի «անվանարկման այն հատուկ միավորների մոդելավորմանը, որոնք նախանշանակված են ոչ միայն գիտելիքի որոշակի կառույցների նշագրման ու հաստման, այլև դրանց այնպիսի օբյեկտիվացման համար, որով կապահովվի դրանց մասնակցությունը հարմար, խնայողական ու ռացիոնալ կերպով կազմակերպված միավորների և արտահայտությունների տեսքով»[36]: Այս գործառույթները հաջողությամբ կատարելու համար լեզուն պետք է լինի միևնույն կերպ ընբռնելի, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվող բոլոր մարդկանց համար կոնկրետ բառերը և դրանց առնչությունները պետք է արտահայտեն միևնույն իմաստը: Դա անհրաժեշտ

[34] Տես *А. Н. Евсеева*. Роль языка в формировании национальной идентичности. Автореферат дис. на соискание уч. степ. канд. философских наук. Архангельск, 2009 (https://narfu.ru/university/library/books/0797.pdf):

[35] Տես նույն տեղում:

[*] Հակված ենք կարծելու, որ այս սխալները «նորամուծությունների» տեսքով միտումնավոր կերպով ներբերվում են մեր միջավայր, ապա կիսագրագետ զանգվածը «կուլ է տալիս» այս խայծը և կանոնավոր գործածության միջոցով «պարտադրում» գրագետներին՝ այդ սխալները հետզհետե դարձնելով նրանց ականջի համար սովորական:

[36] Տես *Ե. Լ. Երզնկյան*, Նշ. աշխ., էջ 4:

է, որպեսզի տվյալ նախադասությամբ արտահայտված միտքը (պարունակվող տեղեկույթը) բոլորն ընկալեն առանց աղավաղումների և աղճատումների: Ուստի այն սխալները (բառագործածության կամ բառակապակցման), որոնք առաջ են բերում իմաստի խեղաթյուրում, հանգեցնում են այդ լեզվով խոսող խմբի անդամների միջև անըմբռնողության և, ի վերջո, խմբի քայքայման: Իհարկե, հնարավոր է, որ խմբի *բոլոր* անդամները պայմանավորվեն, որ բառերն այսուհետև ունենալու են նոր՝ նախկինից տարբեր, իմաստներ, և բառերի կապակցումն էլ կատարվելու է ըստ նոր օրինաչափությունների, սակայն անհավանական է, որ հաջողվի դրանում համոզել բոլորին, և, կարևորը, այս պարագայում կխզվի կապը անցյալի հետ, և նախկինում գրի առնված ամբողջ տեղեկույթը կիմաստազրկվի կամ կաղավաղվի:

Նման սխալները բաժանենք երկու մեծ խմբի:

Ա) ***Քերականական կանոնների խախտում***, որն արտահայտվում է *համաձայնության, խնդրառության, առդրության, կապի* սխալ գործածությամբ[37]:

Այստեղ մենք չենք խոսի այն տարածված և բազմիցս քննարկված սխալների մասին, որոնք առանձին վերցրած գուցե և չեն սպառնում մեր լեզվամտածողությանը, սակայն համախումբ ազդեցությամբ անկասկած կխաթարեն այն: Նման սխալները բերված են մեծ թվով հին ու նոր աշխատություններում[38], և հետաքրքրասեր ընթերցողն ինքը կարող է որոշել, թե ինչ վնաս կարող են դրանք պատճառել մեր ինքնությանը:

Կանգ առնենք մի շատ տարածված սխալի վրա, որը էապես մոլորեցնում է տեղեկույթ ստացողին: Դա դերբայական դարձվածի սխալ գործածությունն է, երբ այն դրվում է անդեմ նախադասության մեջ կամ վերաբերում է ոչ ենթակային: Օրինակ՝ «Հոդվածում թեման վերլուծվել է՝ ելնելով ստեղծված իրավիճակից», կամ՝ «….. համարին ուղարկելով տրանսպորտային միջոցների պետհամարանիշը (լատինատառ, առանց միջակայքի) գանձվում է …. գումարը»: Ըստ հայերենի նորմերի՝ նա, ով զանգահարում է նշված հեռախոսահամարին, պետք է ստանա համապատասխան գումարը…. Զավե՜շտ:

Բ) Կարևոր խնդիրներից է ***տերմինաշինության*** հարցը: Պրոֆեսոր Հ. Բարսեղյանը գրում է. «Մեր լեզվի բառագանձը պահպանելու և հարստացնելու քաղաքականության մեջ ոմանք դժվարանում են ջոկել իսկական հայրենասիրությունը կեղծ հայրենասիրությունից: ...հանճարեղ բանաստեղծը (Հովհաննես Թումանյանը – *Դ. Զ.*) նշում է, որ *օտար բառը չի կարելի գործածել միայն այն դեպքում, երբ այդ բառին լիարժեք փոխարինող է ստեղծված,* իսկ այդպիսի բառի ստեղծումն էլ, ինչպես ասում է բանաստեղծը, «շնորհի գործ

[37] Տես *Ս. Աբրահամյան,* Հայոց լեզու. 7-րդ դասարանի դասագիրք: Ե., 1998: Այս հղումը կատարել ենք այն նկատառումով, որ ընթերցողին ցույց տանք, թե նման սխալներ կատարողները հայերենին չեն տիրապետում անգամ 7-րդ դասարանի մակարդակով:

[38] Տես, օրինակ, *Մայա Ավագյան,* Խոհեր մայրենի լեզվի մասին: Ե., 1982, *Ա. Գ. Բարսեղյան,* Խնդրառական կապակցությունների ոչ կանոնական դրսևորումներ ՁԼՄ-ների լեզվում: «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, հ. 1 և այլ հոդվածներ:

է»: Այսօր այդ շնորհը գործադրելու համար, ցանկությունից բացի, պետք է նաև հայերենի տերմինակազմության գիտական սկզբունքի իմացություն»»[39]:

Իրոք բարդ հարց է. երբ գործածել օտարը, իսկ երբ հայերեն մեկնակերպը: Մի կողմից՝ հայտնի է, որ ոչ մի համակարգ ի վիճակի չէ հարատևելու և զարգանալու միայն ի հաշիվ իր ներքին էներգիայի, նրան անհրաժեշտ են արտաքին էներգիայի ներմուծումներ, այսինքն՝ տվյալ դեպքում միջազգային ասպարեզից նոր հասկացությունների և տերմինների փոխառումներ: Մյուս կողմից՝ այդ փոխառությունների թիվը չպետք է լինի սպառնալից՝ վտանգելով լեզվի համակարգը, ուստի պետք է զգալի չափով փոխարինվի նորաստեղծ հայերեն բառերով: Սակայն, ինչպես վկայում է պրոֆեսոր Բարսեղյանի վերը հիշատակված հոդվածում արված մեջբերումը, հանճարեղ բանաստեղծը գրում է. «Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան *ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել* ու ֆրակը շինել պոչազգեստ, կոտլետը՝ կողիկներ կամ ռահատ լոխումը՝ հանգստապատառ: *Անճիշտ կամ անշնորհք թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզուն, քան ուղղակի փոխառությունը* (ընդգծումը մերն է.– *Դ. Չ.*): .... նույնիսկ *просвещение, цивилизация, культура* թարգմանում են միևնույն բառով – *լուսավորություն»*[40]:

Սակայն ցավով պետք է նշենք, որ մեր մեծ բանաստեղծի խրատը տեղ չի հասել: Օրինակ՝ պաշտպանական գերատեսչությունում *маневр – manеuver* ռուսերեն և անգլերեն տերմինների դիմաց հաճախ գործածվում է «խուսավարում» բառը: Որպես հիմնավորում վկայակոչվում է Ա. Ղարիբյանի հեղինակած բառարանը. «Маневр, 1. ռազմ. զորաշարժ, մանյովր...: 2. փխբ. խորամանկ քայլ, խուսավարում, խորամանկություն բանացնելը, մանյովր...»: Անտեսվում է, որ «խուսավարում» համարժեքը բերվում է փոխաբերական իմաստով, իսկ է. Աղայանն իր բառարանում խուսավարելը բացատրում է որպես՝ «1. Խուսանավելով վարել (նավը)...: 2. Տե՛ս Խուսանավել», և, համապատասխանաբար՝ «Խուսանավել, չբ. 1. Ընթացքը հաճախակի փոխելով՝ ... ընթանալ՝ խութերից, ծանծաղուտներից խուսափելու համար (նավի մասին): 2. փխբ. Ճարպկորեն հարմարվելով հանգամանքներին՝ խույս տալով անախորժությունից ու դժվարություններից՝ վարպետորեն դուրս գալ դժվար կացությունից, ճարպիկ կերպով դժվարություններից խուսափել»[41]:

Իհարկե, «զորաշարժը» չի կարող համարվել հաջող տերմին, քանի որ *«զորքի մանյովրը»* ընդհանուր «маневр»-ի միայն մասնավոր դեպքն է, իսկ կան նաև *«маневр огнем», «маневр войсками»*: Սակայն դա ամենևին էլ հիմք չի տալիս ուղիղ ռազմական իմաստով օգտագործելու փոխաբերական իմաստի հայերեն համարժեքը, որը, եթե նկատի առնենք բառի մեկնությունը,

[39] *Հ. Խ. Բարսեղյան*, Հայերենի բառաքերականական հարստությունը. ազգայինն ու միջազգայինը նրա տերմինագործության մեջ: «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956–2006»: Ե., 2006, էջ 20–21:

[40] *А. С. Гарибян.* Русско-армянский словарь. Е., 1968, с. 460.

[41] Տես *Է. Բ. Աղայան,* Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 618:

անգամ մեր հաղթական զորքերի համար վիրավորական է, իսկ մյուս (կրակ, զենք և այլն) դեպքերում՝ ոչ կիրառելի:

Հանձնարարված է տերմինաշինության ժամանակ առաջնորդվել մի շարք սկզբունքներով, որոնց թվում կա պահանջ՝ «հաշվի առնել... բառակազմական ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները՝ համակարգի համասեռությունը չխախտելու, հետագա տերմինակերտումը միևնույն սկզբունքներով շարունակելու... համար»[42]: Նեղ իմաստով սա կարելի է հասկանալ որպես տվյալ հասկացությունների համակարգի համար այնպիսի տերմին ստեղծելու պահանջ, որի իմաստը համապատասխանի գործող տերմինների էությանը: Իսկ լայն իմաստով, կարծում ենք, որ դա նշանակում է նաև այդ տարրը պարունակող բառերի հետ զուգորդական կապը չխզելու պահանջ:

Օրինակ՝ կան «դաշտավարություն», «դատավարություն», «ինքնավարություն», «կառավարություն» և այլն: Հեշտությամբ կարող ենք համոզվել, որ յուրաքանչյուր բաղադրյալ բառի իմաստն է՝ դրա առաջին մասը *վարելը. դատը* վարել, *մոցությունը* վարել: Եվ ահա այս շարքից ակներևաբար դուրս է մնում *«ժողովրդավարությունը»*, որը նախորդների հետ զուգորդությամբ պետք է նշանակեր «ժողովրդին վարել», մինչդեռ նշանակում է հակառակը:

Անշուշտ, օրինաչափությունների նման խախտումները առանձին վերցրած դժվար թե կարողանան խաթարել լեզվամտածողությունը և, ըստ այդմ, նաև ազգային ինքնությունը, սակայն գումարվելով, բարդվելով միմյանց՝ ստեղծում են բացասական որակ և հարցականի տակ դնում հայության հոգևոր անվտանգության հույժ բարդ, նուրբ և չափազանց կարևոր խնդիրը:

7. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՌԱԼԵԶՈՒ ԲԱՌԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Վերը արդեն խոսել ենք ազգային լեզուների վրա ընդհանրացման երևույթի բացասական ազդեցության մասին, երբ ընդհանրացման հետևանքով ազգային կյանք մեծ ինտենսիվությամբ ներխուժում են նոր հասկացություններ, ինչի հետևանքով լեզվում առաջանում է փոխառված բառերի ու օտարաբանությունների մի զգալի շերտ: Հասկանալի է, որ լեզուն, ենթարկվելով օտարածին ազդեցության այդ հզոր ալիքին, չի հասցնում լիարժեք կերպով «մարսել» այն՝ հարմարեցնելով իր հնչյունային ու քերականական համակարգին:

Այդ երևույթը առանձնակի մեծ չափերի է հասնում (ուստի և վտանգ ներկայացնում) հասարակության ու պետության կենսագործունեության համար նոր բնագավառներում: ՀՀ-ի համար այդպիսի ոլորտներից է պաշտպանական-անվտանգային ոլորտը: Ուստի և պատահական չէր, որ երբ Հ. Քոթանջյանը ՊՆ կազմում ստեղծում էր «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը[43], խմբագրության հայերենի խմբագիր փիլիսոփայական գիտութ-

[42] Տես «2. Հայերենի տերմինակազմության սկզբունքները»: «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956–2006», էջ 24:

[43] Տես *Ն. Գ. Տեր-Գրիգորյանց,* Խոսք հեղինակի մասին: *Հայկ Ս. Քոթանջյան,* Անվտանգա-

յունների թեկնածու Վ. Բաղդասարյանի առաջարկությամբ սկսեց «ռազմագիտական տերմինաբանություն» խորագրով հրապարակվել եռալեզու (հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն և անգլերեն–հայերեն) «Համարի բառարանը»[44]:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առաջին ռազմավարության նախագծի մշակման ժամանակ ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի* ուժերով մշակվեց ռազմավարության «Հիմնական տերմինների և հասկացությունների» հայերեն, ռուսերեն և անգլերեն բացատրական բնագրաբնույթ բառարանը[45], որը ևս կարևոր քայլ էր հայերենի պաշտպանական-անվտանգային տերմինների համակարգի ստեղծման և հայկական անվտանգային միջավայրում արևմտյան ու ռուսաստանյան անվտանգային և ռազմաքաղաքական մշակույթի գիտական ապարատի տեղայնացման ու ներդրման ուղղությամբ: Նախագծի մշակման գիտական ղեկավար դոկտոր Հ. Քոթանջյանը կատարեց այդ բառարանի գիտական փորձաքննությունը ԱՄՆ-ի, ՌԴ և ՆԱՏՕ-ի առաջատար գիտական կենտրոններում:

Այդ բառարանի բառացանկը հետզհետե աճում էր, և միտք ծագեց կազմելու ծավալուն բառարան[46]: Ստեղծվեց խմբագրական խորհուրդ, որը գլխավորեց քաղաքական գիտությունների դոկտոր Հ. Քոթանջյանը, իսկ կազմում ընդգրվեցին ԵՊՀ ու ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի և ՀՀ ԶՈՒ-ի առաջատար մասնագետները: Հասկացությունների ընտրության, մեթոդաբանության և տերմինների անգլո-ռուսերեն համարժեքների փոխառման համար խմբագրական խորհրդի նախագահը գիտական կապեր հաստատեց տվյալ ոլորտում ԱՄՆ-ի առաջատար կազմակերպությունների՝ Պաշտպանական ազգային համալսարանի և Հարվարդի համալսարանի, ՌԴ Նախագահին առընթեր Պետական ծառայության ակադեմիայի և Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի համապատասխան մասնագետների հետ: Որպես արդյունք՝ 2013 թ. հրատա-

---

յին քաղաքագիտական պրոբլեմներ ԽՍՀՄ վերակառուցում–Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս–Աֆղանստան: Ե., 2009, էջ 25:

[44] Տես *Վ. Խ. Բաղդասարյան,* Հայերենի ռազմագիտական տերմինաբանության մշակման պրոբլեմները: «ՀԲ», 1995, հմ. 4:

* Այս նախագծի մշակման ժամանակ ԱՈՀԻ-ն կատարում էր Միջգերատեսչական հանձնաժողովի գիտալեզվական քարտուղարության դերը (տես *Հ. Ս. Քոթանջյան,* Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման մեթոդաբանության մասին: «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում»): Ե., 2008, էջ 32–33:

[45] Տես «Հայկական բանակ», 2006, հմ. 2, էջ 48–58, 100–110, 151–161:

[46] Տես «Հայերեն–ռուսերեն–անգլերեն անվտանգային պաշտպանական բառարանը «խելացի ուժի» գործակցելիության համատեքստում»: «Աշխատանքային տետրեր», հատուկ թողարկում, 2009:

րակվեց մոտ 4000 տերմին ծավալով բառարանը[47], իսկ 2015 թ. լույս տեսած բառարանի ծավալը հասցվեց շուրջ 14000 տերմինի[48]:

Սույն բառարանների ստեղծման հիմնական նպատակներից էին. «...հայկական անվտանգային և ռազմաքաղաքական իրականության մեջ ներդրել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Արևմուտքի քաղաքական-անվտանգային և ռազմական մշակույթի հասկացութային համակարգի կարևոր տարրերը՝ հարմարեցված ՀՀ ազգային առանձնահատկություններին ու պայմաններին»[49], դրա հետ մեկտեղ հայերենի ռազմագիտական տերմինաբանության ստեղծումը կրել է «որոշակի չափով չկառավարվող, ստոխաստիկ բնույթ, ինչի հետևանքով շատ տերմիններ ստեղծվում էին տարրական պատճենման եղանակով, առանց գիտական իմաստավորման և առանց խիստ համակարգման: Ուստի հեղինակները խնդիր ունեին նաև կատարելու պաշտպանական-անվտանգային ոլորտի հասկացութատերմինաբանական ապարատի համակարգում, ինչպես և դրա հետագա զարգացման ու կատարելագործման համար ձևավորելու գիտական հիմքեր»[50]:

Բառարանի կազմման ընթացքում հեղինակներն օգտվել են մեծ թվով մասնագիտական ու ընդհանուր լեզվական ինչպես թարգմանչական, այնպես էլ բացատրական գրականությունից հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով[51], հայերենի տերմինաշինության կանոնների խստիվ պահպանմամբ ստեղծվել են 100-ից ավելի նոր տերմիններ, որոնք ենթարկվել են խմբագրական խորհրդում ընդգրկված ականավոր մասնագետների քննական վերլուծության:

Այսպիսով՝ այդ բառարանները նպաստել են հայ անվտանգային ու ռազմաքաղաքական ոլորտներում համընդհանրացման ալիքով մեզ հասցված հասկացությունների ներմուծմանը՝ առանց հայերեն լեզվամտածողությանը վնաս պատճառելու, ինչն էլ հենց համատեղայնացման գերակա խնդիրներից է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Համընդհանրացումը վտանգում է ազգային ինքնությունը՝ ազգային առանձնահատկությունները համահարթեցնելու և ազգայինը «համամարդկայինով» փոխարինելու միջոցով: Այս բացասական ազդեցության զգայուն թիրախներից է հայոց լեզուն, որն այսօր մեր ազգային ինքնության պահպանման առավել կարևոր գործոններից մեկն է և հոգևոր-բարոյական անվտանգության առանցքային օբյեկտներից մեկը:

Սակայն, ինչպես ցույց է տալիս առանձին պետությունների (Ճապոնիա,

[47] *Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան*, Պաշտպանական անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն բառարան: Ե., 2013:

[48] *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Նշ., աշխ.:

[49] Նույն տեղում, էջ XIII

[50] Նույն տեղում, էջ XXI:

[51] Տես նույն տեղում. «Օգտագործված գրականության ցանկ», էջ XXXIV – XXXIX:

Չինաստան, Իսրայել, Սինգապուր և այլն) հաջողված փորձը, համընդհանրացմամբ պայմանավորված համատեղայնացումը խելացի քաղաքականության վարման դեպքում կարող է ապահովել համընդհանրացմամբ ստեղծված հնարավորություններն ի նպաստ տվյալ ազգի, տվյալ պետության հարաճուն զարգացման: Հակառակ դեպքում ՀՀ ազգային անվտանգության մյուս բաղադրիչների ապահովումը գոյատևման հնարավորություն կտա այս տարածքում եղած բնակչությանը, սակայն դա արդեն չի լինի **ՀԱՅՈՒԹՅՈՒՆ**:

НАЦИЯ, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕНТИЧНОСТЬ И ЯЗЫК КАК КЛЮЧЕВЫЕ ОБЪЕКТЫ ДУХОВНОЙ БЕЗОПАСНОСТИ: ТРЕХЪЯЗЫЧНЫЙ ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНЫЙ СЛОВАРЬ КАК ПРИМЕР ГЛОКАЛИЗАЦИИ В ОБЛАСТИ ЯЗЫКА

Д. С. ЧИЛИНГАРЯН, полковник в отставке, начальник Научно-издательского центра НИУО МО РА – главный редактор ВНЖ «Айкакан банак»

РЕЗЮМЕ

В современных условиях глобализации в сферах экономики и культуры, роста миграции происходит нивелирование различий в национальных укладах, культурах, образовании, что отрицательно отражается на самобытности наций. Политико-экономическое объединение государств, к которому в большей степени стремятся малые государства в интересах обеспечения собственной безопасности, сводится к навязыванию более сильными государствами своих систем ценностей, подчас вопреки воле и национальному облику малых народов. В сфере культуры устанавливается господство некоей «мегакультуры», поглощающей индивидуальность национальной культуры.

В подобных условиях основным фактором сохранения национальной идентичности является национальный язык, как могучее средство консолидации общности в нацию, однако и он подвергается сильному давлению со стороны общепринятого для международного общения языка, каковым является английский. Англицизмы (по сути – американизмы), воздействуя на национальный язык, вызывают антисистемные изменения в языковом мышлении, что также отрицательно сказывается на национальной идентичности.

Роль языка в формировании и сохранении этничности понимали и в древние времена деятели с развитым национальным самосознанием. Так еще в раннем средневековье (конец IV – начало V вв.) видные деятели армянского народа царь Врамшапух, католикос Саак Партев и монах Месроп Маштоц осознали необходимость создания письменности для родного языка в целях укрепления национальной идентичности и консолидации армянского народа в условиях раздела Арме-

нии между христианской Византией и зороастрийской Персией. Этот раздел мог привести и к расколу в Армянской церкви, поскольку в Западной (византийской) части Армении богослужение осуществлялось на греческом, а в Восточной (персидской) части – под давлением Сасанидских царей – на арамейском.

Сам современный армянский литературный язык тоже состоит из восточноармянского (государственный язык РА) и западноармянского, на котором говорит основная часть Диаспоры, более многочисленной, чем население РА, хотя и оба языка происходят от древнеармянского грабара, одним из первых ответвившегося от праиндоевропейского языка около 8000 лет тому назад.

Изменения в армянском языке, происходящие в последнее время, не могут не вызывать тревоги, поскольку некоторые из них, по мнению автора, целенаправленно затрагивают основы его системы и, соответственно, сказываются на национальной идентичности.

В качестве удачного применения глокализационных подходов в области языка в армянской действительности надо рассматривать опыт составления трехъязычного армяно-русско-английского толкового словаря оборонно-безопасностных терминов. Словарь был создан при консультативной поддержке соответствующих ведущих специалистов РА, Национального университета обороны и Гарвардского университета США, РАГС и МГИМО РФ и НАТО. Создание словаря содействовало внедрению в оборонно-безопасностную академическую среду РА понятийно-терминологического аппарата военно-политической культуры Запада и России без ущерба для армянского языка.

THE NATION, THE NATIONAL IDENTITY AND THE LANGUAGE AS KEY OBJECTS OF MENTAL SECURITY: THE TRILINGUAL DEFENSE SECURITY DICTIONARY AS AN EXAMPLE OF GLOCALIZATION IN THE SPHERE OF LANGUAGE

D. S. CHILINGARYAN, Col. (R), Head, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA – Editor-in-Chief, “Haikakan Banak” DAJ

SUMMARY

In the contemporary terms of globalization the leveling of differences in national setups, cultures, education has occurred in the spheres of economy and culture, as well as in the migration growth, which has a negative impact upon the uniqueness of the nations. In the political-economic integration of states, which small states mainly seek to in pursuit of ensuring their own security, stronger states tend to impose their own systems of values, at times, even notwithstanding the will and the national image of the small

nations. In the cultural sphere, domination of a certain “megaculture” is established, merging the identity of the national culture.

Under such conditions, the key factor for preserving the national identity is the national language, as a powerful means for consolidating the community into a nation, however, it also suffers immense pressure from the universally accepted language for international communication, namely English. The Anglicisms (in essence, the Americanisms), by influencing the national language, give rise to anti-systemic changes in the linguistic thinking, which likewise has a negative affect upon the national identity.

The role of the language in making up and preserving the ethnicity was well perceived in ancient times by the figures with developed national self-consciousness. Thus, back in the early medieval period (the end of the 4th century – beginning of the 5th century), the prominent dignitaries of the Armenian people, King Vramshapuh, Catholicos Sahak Partev and Monk Mesrop Mashtots, realized the need to create the writings for their native language in order to enhance the national identity and consolidate the Armenian people in the situation when Armenia was divided between the Christian Byzantium and the Zoroastrian Persia. This division could lead to a split in the Armenian Church as well, since in the Western (Byzantine) part of Armenia the religious service was held in Greek, and in the Eastern (Persian) part – under pressure from the Sassanian kings – in Aramaic.

The modern Armenian literary language also is composed of the Eastern Armenian (the state language of the RA) and the Western Armenian, which is spoken by the most people of the Diaspora, much numerous, than the RA population itself, though both languages stem from the Ancient Armenian Grabar, one of the first to be derived from the pre-Indo-European language 8000 years ago.

The recent changes in the Armenian language cannot but cause anxiety, since some of them (purposefully – in view of the author) affect the fundamentals of its system, and, correspondingly, do have an impact on the national identity.

The experience of compiling the trilingual Armenian-Russian-English explanatory dictionary of defense security terms as a successful application of glocalization approaches in the linguistic sphere in the Armenian reality should be considered a success. The dictionary was created with the advisory support of the relevant leading experts of the Republic of Armenia, the US National Defense University and the Harvard University, the Russian Academy of State Service, Moscow State Institute of International Relations (MGIMO) of the Russian Federation, and NATO. Compiling the dictionary promoted the introduction of the conceptual and terminological apparatus of the military-political culture of the West and Russia into the defense security academic environment of the Republic of Armenia without prejudice to the Armenian language.

ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տեր ՎՐԹԱՆԵՍ եպիսկոպոս ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
ՀՀ ՁՈՒ-ի հոգևոր առաջնորդ

Հայոց ազգային-եկեղեցական արժեհամակարգն ու գաղափարախոսությունը կարելի է ամփոփել հայ մեծերի մի քանի նախադասությունների մեջ:

Ոգու պակասի արդյունք է մեր ժողովրդի օրվա հոգևոր անշարժունակությունը: Ով հեռանում է իր կրոնից, անձնասպանորեն կտրում է իր հոգևոր զարկերակը: Իր արաչի դեմ գործողը պիտի չքաշվի գործել և իր նմանների դեմ: Կրոնը միայն արարածի և արարչի հարաբերություն չէ, այլև՝ մարդու և մարդու, անհատի և հավաքականության, անձի և ճշմարտության հարաբերություն:

Նա, ով ընդունում է ԱՍՏԾՈ գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության՝ ազգ, հայրենիք, պետություն:

«Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի դառնա»:
Գարեգին Նժդեհ

«Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք,
ձե՛ր անունին մեռնիմ, ձե՛ր հոգուն ղուրբան,
տասը լեզու սովորեցեք, ձե՛ր լեզուն, ձե՛ր հավատը դային բռնեցեք»:
Խ. Աբովյան

«Տվե՛ք ինձ մեկ Ղևոնդ և ես ձեզ կտամ յոթը Վարդան»:
Ծերենց, «Երկունք Թ դարու»

«Չորրորդ դարում Հայաստանը քրիստոնեացավ, իսկ հինգերորդ դարում
քրիստոնեությունը հայացավ»:
Նիկոլ Ադբալյան

«Ի վերայ աջոյն սրբոյն Գրիգորի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»:
Առաքել Դավրիժեցի

«Հայ պետությունը քրիստոնեության սահմանապահն է»:
Լևոն Շանթ, «Օշին Պայլ»

Բոլոր ժամանակներում և հասարակություններում կրոնական գիտակցությունը, ընկալվելով որպես աքսիոմատիկ ճշմարտություն, եղել է անհատի կյանքի կարգավորող ուժն ու հասարակական կյանքի առաձգական կենտ-

րոն, իսկ սկսած Քրիստոսի ծննդից՝ քրիստոնեական աստվածաճանաչությունը կազմել է քրիստոնյաների կյանքի իմաստն ու օրինապահ քաղաքացի լինելու առանցքը: Քրիստոսի հարությունից անմիջապես հետո զինվորական և պետական ուժով հաստատված և հազարամյակների ընթացքում հասարակության անբաժանելի մաս կազմող բազմաթիվ հեթանոսական մշակույթներ վերափոխվեցին քրիստոնեական կյանքի ու կենցաղի՝ հակառակ Քրիստոնյաների նկատմամբ ամենուր ձեռնարկված և երբևիցե եղած ամենադառը կրոնական հալածանքներին. քրիստոնեական կրոնական դրույթներն ու Սուրբ Գիրք Աստվածաշունչն ավելի քան 16 դար միակ օրենսդրական ակտն էին ոչ միայն եվրոպական, այլև բազմաթիվ արևելյան երկրների և ժողովուրդների համար*:

17-րդ դարում Եվրոպայում քրիստոնեական համայնքների և Եկեղեցիների իրավունքների վրա «լուսավորիչների» հարձակումներին** ի պատասխան՝ Անգլիայի կրոնափիլիսոփայության ներկայացուցիչ պահպանողականներն*** առաջինը հակադարձեցին «լուսավորականներին»՝ միաբերան պնդելով, թե կրոնն ու Քրիստոնեությունը ոչ միայն մեծ կարևորություն ունեն անհատի կյանքում, այլև պետականության պահպանման, մարդկության պատմության սակրալ (սրբազան) բնույթի, հասարակության և պատմության ըմբռնման համար Աստծո և աստվածային կարգի ելակետն է: Ի հակադրություն «լուսավորականների»՝ Եկեղեցու և հոգևորականների իրավունքներն ամբողջությամբ ջնջելու մարմաջի՝ պահպանողականները, ավելի առաջ գնալով, ստորադասում էին սահմանադրությունն ու օրենքները և գերակա հռչակում ազգային Եկեղեցու մեծ դերը պետության մեջ[1]: Հետաքրքրական է, որ նույնիսկ աստվածամերժ փիլիսոփաներն են ընդունում բարոյականության պահպանման համար կրոնի ուժականության անհրաժեշտությունը[2]:

Այս են հաստատում նաև 19–20-րդ դարերի հայ կրոնական փիլիսոփայության ներկայացուցիչները (Հ. Տերոյենց, Հ. Չերքեզյան, Ստ. Մանդինյան, Գ. Աշըգյան, Գ. Այվազովսկի, Մ. Մսերյան, Ա. Գուրգենյան, Պ. Էմմանուելյան, Է. Սիրունյան, Ա. Տէր-Միքելեան), որոնք ուղղակիորեն դիմել են կրոնական,

* Այսօր էլ համաեվրոպական օրենսդրական գիտակցության հիմքում Աստվածաշունչ մատյանն է և կրոնական փորձառությունը: Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախության հռչակագրում ինքնապաշտպանության անհրաժեշտությունը հիմնավորվում է «Բնության աստծո օրենքներով»:

** Ֆրանսիայում հեղափոխականները կամքի ազատություն հայտարարելուց հետո կաթոլիկ քահանաներին անգթորեն և հաճույքով մահապատժի էին ենթարկում. փակվեցին Փարիզի բոլոր եկեղեցիները, իսկ Ֆրանսիայում հազարավոր եկեղեցիներ բռնությամբ վերածվեցին այլ հաստատությունների:

*** Պահպանողականներ՝ թորիականներ՝ էդմունդ Բյորկ, Սամուել Քոլրիջ, Բենջամին Դիզրայել, Սեմուել Ջոնսոն, Ռիչարդ Հուկեր, էդուարդ Հայդ, Նյուման, Ջորջ Սավիլ, Լորդ Բոլինգբրոկ, Դեվիդ Հյում, Լինկոլն Ալիսոն, Քվենտին Հոգ և ուրիշներ:

[1] Տես *Տիգրան Մկրտչյան,* Կրոնի դերը 18-19-րդ դդ. Բրիտանական պահպանողականների աշխատություններում: «Էջմիածին», 2004, Է-Ը:

[2] Տես *Աղասի Գևորգյան,* Փիլիսոփայություն բոլորի համար: Ե., 2007, էջ 34:

ազգային, պատմամշակութային, մարդաբանական խնդիրներին՝ հիմնավորելով հայ ազգի հոգևոր-բարոյական միասնության և անկախության գաղափարը. «Կրոնական փիլիսոփայությունն աշխարհայացքի այնպիսի մի ձև է, որի մեջ օրգանապես զուգորդվում և որոշակի կենսական միասնություն են կազմում կրոնական և ազգային ըմբռնումները»[3], «Կրոնն է բարոյականության աղբյուրը» և «կյանքի զարկերակը»»[4]:

20-րդ դարի կեսերին ապագաղափարականացման տեսության կողմնակիցները, շեշտելով գաղափարի ճշմարտացիության հիմնավորման համար կրոնի անհրաժեշտությունը, նշում են, որ հասարակական խմբերը կրոնական հիմնավորում չունեցող գաղափարախոսություններն օգտագործում են իրենց շահերը ներկայացնելու համար[5], իսկ վերագաղափարականացման կողմնակիցները շեշտում են, որ գաղափարախոսությունը հասարակության գոյության անբաժանելի բաղկացուցիչն է[6], և նշում են, որ գաղափարախոսությունը ծագում է հավատալու տարրական պահանջմունքից և ըստ այդմ ունի կրոնական բնույթ[*]: Ըստ Լեմբերգի՝ գաղափարախոսությունների ճշմարտացիությունը որոշվում է հավատով: Յուրաքանչյուր գաղափարախոսության հիմքում դրված են ոչ թե բանական եզրահանգումները կամ գիտական պատկերացումները, այլ հավատը, որը միշտ կրում է դոգմատիկ բնույթ: Աշխարհաճանաչումը գաղափարախոսության հիմքն է, որը աշխարհի և, մասնավորապես, մարդու գոյության իմաստի վերաբերյալ հայացքների համակարգ է: Սակայն, քանի որ կյանքի իմաստի հարցին գիտականորեն պատասխանելու համար գոյություն չունեն այնպիսի ապացուցված փաստարկներ, որոնց կարելի լիներ հենվել, ապա աշխարհաճանաչումը հիմնված է հավատի վրա և պահանջում է «հոգևոր ենթարկում»: Ինչպես պնդում է Բա-

[3] Տես *Ռիմա Միրումյան,* Կրոնական փիլիսոփայությունը արդի մշակույթի համատեքստում: «Էջմիածին», 2000, Ե, *նույնի՝* Օրենքի և կառավարության բնական (աստվածային) խորհուրդը Հովհաննես Տերոյենցի պատմափիլիսոփայության մեջ: «Էջմիածին», 2001, Բ-Գ:

[4] Տես *Արշակ Տէր-Միքելեան,* «Արարատի»-ի ժառանգությունը, հ. Զ: Ս. Էջմիածին, 2009, էջ 26–27:

[5] Տես *D. Bell.* The End of Ideology: On the Exhaustion of Political Ideas in the Fifties. New York, 1965; *նույնի՝* The Coming of Post-Industrial Society. New York, 1973; *F. Fukuyama.* The end of history? “The National Interest”, 1989, № 16; *Zbigniew Brzezinski.* Communist Ideology and International Affairs. “Conflict resolution”, 1960, Vol. IV, N 3; *Benjamin Disraeli.* Tancred: Or, The New Crusade. New York, 1927; *նույնի՝* Whigs and whiggism, political writings. London, 1913:

[6] Տես *Jakob Barion.* Was ist Ideologie? Studie zu Begriff und Problematik. Bonn, 1964, 2. erw. Aufl. 1971; *նույնի՝* Ideologie-Wissenschaft – Philosophie. Bonn, 1966; *Eugen Lemberg.* Ideologie und Gesellschaft. Stuttgart, 1974; *նույնի՝* Anthropologie der ideologischen Systeme (Studien zu Gesellschaft und Bildung). German Edition (German) Paperback, 1977:

[*] Ավելի վաղ համանման միտք է արտահայտել նաև Դավիթ Անհաղթ փիլիսոփան. «Ճշմարիտ փիլիսոփայությունը ճշմարիտ կրոնն է և հակառակը՝ ճշմարիտ կրոնը ճշմարիտ փիլիսոփայություն է» (տես *Աղասի Գևորգյան,* Նշ. աշխ., էջ 82):

րիոնը, քանի որ բացարձակ ճշմարտությանը տիրապետելուն հավակնող համակարգերը չի կարելի գիտականորեն ո՛չ ապացուցել, ո՛չ էլ ճշտել, ապա նրանք ոչ թե գիտության, այլ հավատի արդյունք են, և գաղափարախոսությունը, ծագելով հավատի զգացումից, բնութագրվում է ոչ թե ռացիոնալ եզրահանգումներով, այլ կարգախոսներով, ավանդույթներով, ցանկություններով, նախապաշարմունքներով, զգացմունքներով, հեղինակություններից կատարված մեջբերումներով[7]:

Այսուամենայնիվ, հոգևոր արժեքների պահպանությունը ոչ ճիշտ ընկալվելու դեպքում հանգեցնում է ավանդապաշտության (բացասական իմաստով), իսկ անտեսվելու դեպքում կամ նորը փնտրելու սկզբունքով մղված՝ հոգևոր արժեքների կորուստի: Այն, մի կողմից, առավելապես բարոյական սկզբունքների տեսքով մնում է մեր հասարակության անբաժան մասը և, մյուս կողմից, արտաքին և այլ ազդեցություններով պայմանավորված՝ մոռացության և նույնիսկ քննադատության ու մերժման է ենթարկվում: Երկրորդ դեպքում մենք հանդիպում ենք արժեքային հարաբերապաշտության, որի չափանիշը անհատն է (այլ կերպ ասած՝ սուբյեկտի կամայականը)[8]: Դրա դրսևորումներից է, ընդհանրապես, նաև կամայական կրոնական ընկալումը, օրինակ՝ աղանդավորությունը: Քրիստոնեության արժեքային համակարգի պահպանությունը երաշխավորվում է իր ակտիվությամբ՝ «կենդանությամբ»: Այն դուրս է գալիս պահպանողականության և ազատականության սահմաններից և գրավական դառնում արժեքների պահպանության այն ժամանակ, երբ ունի այդ արժեքները մարմնավորող կենդանի վկաներ:

Չնայած որ «հասարակական գիտակցություն», «ինքնություն» և նման տերմինները խորքում ունեն քրիստոնեական հիմքեր[9], այդուհանդերձ ժամանակակից հասարակագիտության սահմաններում դրանք ոչ կրոնական հասկացություններ են: Եթե Առաքելական Եկեղեցու համար հասարակության ինքնության կազմավորումը ընթացք է դեպի մի ինքնություն, այն է՝ Քրիստոս, Ով իր մեջ բովանդակում է հանուրց մարդկությունը և ըստ էության՝ Ինքն է որևէ հասարակության միակ ու ճշմարիտ ինքնություն տվողը, ապա բազմաթիվ արդի հասարակությունների բազմադիմության հաշվառմամբ որևէ հասարակական ինքնություն սահմանելը դառնում է անհնարին: Եկեղեցին, որ նպատակ ունի ավետարանելու և եկեղեցականացնելու բոլոր հասարակությունները, չի ենթադրում բոլոր մարդկանց անհատականությունների կորուստն ու նույնացումը, այլ բերում է դրանց ինտեգրումը մեկ Դեմքի մեջ՝ պահպանելով բոլորի ինքնությունները (երանգները)[10]: Այս իսկ պատճառով համայնա-

[7] Բերվում է ըստ՝ *Михаил Чернышевский.* К вопросу об идеологии и ее роли в жизни общества (http://tokadoka.com/novosti/knov/k_voprosu_ob_ideologii.html):

[8] Տես *W. Pannenberg.* When everything is permitted. “First Things”, February 1998 (https://www.firstthings.com/article/1998/02/002-when-everything-is-permitted):

[9] Տես *Max Weber.* The Protestant Ethic and the Spirit of Capitalism. New York, 2011:

[10] Տես *J. Zizioulas.* Being as Communion: Studies in Personhood and the Church. New York, 1997:

վարական և մեխանիկական, օգտապաշտական սկզբունքներով հասարակարգերն, ըստ էության, հակառակ են Եկեղեցու բնույթին: Հետևաբար, իրական հասարակական ինքնությունն անհատական ինքնության բացահայտումն է՝ որ է «պատկեր Աստծո», և մեկ անփոփոխ ինքնության մեջ համախմբումն է՝ որ է մարդացած և հարություն առած Քրիստոսը՝ լրումը և ամբողջացումը ամեն ինչի: Որևէ կեղծ-էկումենիկ համընդգրկում, որում չկա ճշմարիտ միություն կամ կա մեկ Դեմքը պառակտող աղանդավորություն, չի կարող նպաստել որևէ հասարակության ինքնության կայացմանը:

Պետության պահպանումը սերտ առնչակցության մեջ է որևէ պետության մեջ գոյություն ունեցող կրոնի կամ կրոնների հետ[11]: Եկեղեցու հաստատման օրերից սկսյալ՝ պետական իշխանությունը դիտվել է որպես ի վերուստ, Նախախնամությամբ կարգված միավոր: Հետևաբար պետությունը Եկեղեցուց միշտ աջակցություն է ստացել, սակայն հոռի բարքերն ու ոչ ավետարանական ընթացքն իրենց հերթին Եկեղեցու քննադատությանն ու շտկվելու կոչի են ենթարկվել:

Այսօր, չնայած Արևմուտքն ընդունել է կրոնի ու դավանանքի ազատության և հավասարության մասին կոնվենցիաներ, որոնք միտված են Եկեղեցուն հասարակական կյանքի կազմակերպմանը մասնակցելու իրավունքից զրկելուն, և որոնց իրենց համաձայնությունն են տվել նաև արևելյան պետությունները, այդուամենայնիվ, աշխարհի արևելյան հատվածում գերիշխում է բացարձակ կրոնական օրենքներով պետության կառավարումը: Միևնույն ժամանակ, Արևմուտքում, հակառակ Արևելքին հավատացնելու և պարտադրելու փորձերին, դե ֆակտո և դե յուրե առավելություն է տրվում և պետական համագործակցություն հաստատվում ավանդական Քրիստոնեական Եկեղեցիների հետ: Նաև՝ հակառակ կրոնների ու ենթամշակույթների իրավահավասարության մասին բարձրագույն ատյաններից անընդհատ հնչող հայտարարություններին, այնուամենայնիվ հուսալի օրենսդրական ակտերով կանխվում է այն կրոնական կազմակերպությունների երկարատև գոյությունը, որոնց պաշտոնական և պատմական Եկեղեցին ճանաչել է որպես ծայրահեղական[12]:

Չնայած հակասական այս իրականությանը՝ 21-րդ դարում տարբեր համապետական կազմակերպություններ պետություններից պահանջում են պետության գաղափարի շեշտման, անհատական բարոյականության, անհատի ինքնիշխանության և բարոյական պատասխանատվությունից դուրս նրա իրավունքների բացարձակեցման օրենքների ընդունում, որոնց հայեցակարգների ներքո թաքցվում է կրոնական և ազգային արժեքների անարգանքը: Սակայն ազգային բարոյականության օրենքների ոտնահարման պատճառով

[11] Տես *Carl Schmitt.* Political Theology: Four Chapters on the Concept of Sovereignty. Chicago, 2004:

[12] Հմմտ. *Վահե Ենգիբարյան, Արթուր Չախոյան,* Եկեղեցի, պետություն և հասարակություն: Ե., 2009, էջ 8–13, *Վալերի Պողոսյան,* Պետության և եկեղեցու հարաբերությունների սահմանադրական կարգավորումը: «Էջմիածին», 2002, Զ-է:

շատ ազգեր են վերացել պատմության էջերից: Ցանկացած մեղք գործելու և ցանկացած կրոնական սրբություն ոտնահարելու ու հրապարակավ անարգելու իրավունքների պարտադրման ներկայիս դարաշրջանում որևէ քաղաքացիական օրենքով հասարակությանը կենսունակ, միաբևեռ ու միասնական պահելն անհնար է. այսպես հասարակության յուրաքանչյուր անդամ դառնում է ազգայինից դուրս գտնվող մի անդեմ քաղաքացի: Մարդու իրավունքների բնազդային ազատության և բարու ու չարի մասին պատկերացումների քաոսի պայմաններում որևէ օրենքով անհնար են դառնում ընտանեկան հավատարմությունն ու զավակների բարոյական դաստիարակությունը, սակայն, Աստծո հետ փոխհարաբերությունը մարդուն ուսուցանում է ճանաչել ու մերժել չարը և ընտրել բարին:

Անհատին վերապահված բարոյականության և արժանապատվության կամայական մեկնաբանության ազատությանը զուգահեռաբար կրոնական կազմակերպությունների թվի անընդհատ ավելացմանը միտված օրենքների և ֆինանսավորման մեծացումը, հոգեորսության կատարելագործված տեխնիկական և հոգեբանական մեթոդների կիրառումը և տեղեկատվական միջոցներով առաքելական նվիրապետությունն ունեցող ավանդական ու ազգային Եկեղեցիների դեմ ուղղված քարոզչությունն ու դրա նկատմամբ հասարակության դյուրահավատությունը 21-րդ դարի բնորոշ գծերից են՝ կասկածի տակ դնելու ազգային միասնականության հիմնաքար դարձած սրբությունը՝ ազգային Եկեղեցին՝ հավատի դավանությունը:

Ի հակադրություն սրա՝ Առաքելական նվիրապետությունն ունեցող Քրիստոնեական առաքելահիմն ավանդական Եկեղեցիների ձևավորած «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը» կազմակերպում է էկումենիզմ կոչվող հանդիպումներ, որոնք միտված են նաև հակազդելու Քրիստոնեական իրավունքների վրա հարձակումներին, վերացնելու դարեր շարունակ Քրիստոնեական Եկեղեցիների միջև թվացյալ, հաճախ քաղաքականությամբ պայմանավորված և պարտադրված հակասությունները և թշնամանքը, շեշտելու Քրիստոնեական ճշմարիտ Եկեղեցիների միասնական գործունեությունը, Եկեղեցիների փոխադարձ հարգանքի և համբերության վրա հիմնված երկխոսությունը՝ առանց դավանաբանական, ազգային ու մշակութային ինքնությունը կորցնելու:

Հայաստանյան իրականության մեջ հոգևոր արժեքների պահպանության, հասարակական ինքնության և պետության պահպանման երևույթները դիտարկելով Հայ Առաքելական եկեղեցու հետ ունեցած իրենց սերտ կապով՝ կարող ենք առանձնացնել հայ հասարակության ինքնության կերտման ու պահպանման և հոգևոր անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներից պաշտպանելու հետևյալ գործառույթները.

Սոցիալ-քաղաքական: Ազգային-քրիստոնեական բարոյականության կերտման և հայ հասարակության միասնականության ամրապնդման գործում Հայ Եկեղեցու ունեցած դերը հաստատվեց Դ դարում պետականության քրիստո-

նեականացմամբ և Ե դարում՝ ժամանակի ամենահզոր պետություններից մեկի՝ կրակապաշտ Պարսկաստանի դեմ մղված Ավարայրի ճակատամարտում գաղափարական ու զինական այն դիմադրությամբ, որը փաստում է մեր պետության հետ Եկեղեցու (կամ Եկեղեցու հետ պետության) նույնացածությունը: «Ընդդիմանալով՝ հայ ժողովուրդը կարողացավ պաշտպանել մեր ազգային մնայուն, հավիտենական արժեքները, բայց մանավանդ՝ հայկական շեշտված քրիստոնեական ոգին և դիմագիծը»[13]: Սա առաջին պատմական փորձն էր՝ մեզ իբրև ազգություն ձուլելու և ոչնչացնելու հարցում: Ի սկզբանե պետության պահպանությունն Առաքելական Եկեղեցու համար եղել է գլխավոր առաքելություններից մեկը և Աստվածաշնչից էլ սնվել են պետական օրենքները[14]: Մեր պատմության ընթացքում պետականության բացակայության պայմաններում, ժողովրդի հոգևոր, մշակութային և ֆիզիկական կեցության ապահովման դերը հանձն է առել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ստանձնելով թշնամի պետությունների հետ բանակցությունները, ճակատամարտերի կազմակերպումը, կարիքավոր ժողովրդի պետքերի բավարարումը, կրթության, բժշկության և մշակութայնացման և այլ գործառույթների կատարումը: Ի տարբերություն Առաքելական Եկեղեցու՝ մեր պետականության գործերին որևէ հարանվանության, կրոնական կազմակերպության և նույնիսկ այլ ավանդական եկեղեցու միջամտությունը միշտ եղել է ապակառուցողական և այլոց քաղաքական շահերին հետամուտ:

Չնայած երկրորդ հազարամյակում հայոց պետականության երկարատև բացակայությանը, 20-րդ դարի սկզբի հայոց ցեղասպանության ընթացքում հազարավոր հոգևորականների կոտորածին, Եկեղեցիների ավերին ու ավարին ու հայրենիքից հայ ժողովրդի տարագրման դժվարություններին՝ 1918 թ. մայիսին Հայ Եկեղեցու գլխավորությամբ ու անմիջական մասնակցությամբ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց և կերտեց հաղթանակ Սարդարապատի ու մայիսյան այլ ճակատամարտերում՝ հռչակելով Հայաստանի առաջին հանրապետութունը[15]: Կուսակցական և արժեքային անմիասնականությունը պատճառ դարձավ ընդամենը երկու տարի անց եղբայրասպան պատերազմի և պետականության կորստի: Հայաստանը մտավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ: Սկսվեցին Հայ Եկեղեցու դեմ երբևէ եղած ամենաարմատական բռնաճնշումները, որոնք տևեցին Խորհրդային Միության գոյության գրեթե ամբողջ ընթացքում:

Անտարակույս, հայ ժողովրդի և նրա հոգևոր կենտրոն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունն ընդելուզված է միմյանց՝ անբաժանելի կեր-

[13] Տես *Հայկ ուրարակիր Բարսեղյան,* Հուշ-երեկո՝ նվիրված Վարդանանց հիշատակին: «Էջմիածին», 2004, Բ-Գ:

[14] Տես *Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյան,* Ռաֆայել Պապայանի «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» աշխատության հոգևոր արժեքը: «Էջմիածին», 2003, Ա:

[15] Տես *Լուսինե Թումանյան,* Չինվորյալ հոգևորականներ, մաս առաջին: Ե., 2017, *Ստեփան Կերտող,* Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին: Ս. Էջմիածին, 2018:

պով: Միայն այն, որ հայ ժողովրդի պատմության վերջին հազարամյակին Եկեղեցին եղել է հայ ժողովրդին օտար գերիշխանությունների ներքո հայ պահողն ու պահպանողը, նրա հոգևոր և նյութական իրավունքների երաշխավորն ու գրավականը՝ բավական է հաստատելու այս: Հայ Եկեղեցու հովանու ներքո հայ ժողովուրդը ոչ միայն դիմակայել է հազարամյա արհավիրքներին, այլև շարունակել է արարել և ստեղծագործել՝ պահպանելով իր Քրիստոնեական դիմագիծը: Այս ամենով հանդերձ վերապրել է Հայ հոգևոր կյանքն ու զարթոնք ապրել Հայաստանի Երրորդ անկախ հանրապետության տարիներին՝ զորավիգ ունենալով հայոց պետականությանը: Անկախության հռչակման առաջին իսկ օրերից Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Եկեղեցական մեծագույն տոնակատարություններին իրենց մասնակցությունն են բերել Հայոց պետական և մշակութային այրերը[16]: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ հայ ժողովրդի կյանքում առանձնահատուկ անփոխարինելի դերի հաշվառմամբ՝ 2015 թվականին ընդունված Սահմանադրության 18-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա մշակույթի զարգացման և ինքնության պահպանման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային Եկեղեցու բացառիկ առաքելությունը:

Հայ Եկեղեցու հաջորդ կարևոր սոցիալական դերակատարությունն աղքատախնամությունն է, որն իր հաստատուն ու կազմակերպված ընթացքն ստացել է Սուրբ Ներսես Ա Մեծ Պարթև Հայրապետից սկսած[17], սակայն այս առաքելությունն անշուշտ ունի ավելի խոր արմատներ. «Պատմականօրէն աղքատախնամութիւնը եղել է Քրիստոնէական հաւատի անբաժան մասը, որի վկայութիւնն այն բազմահազար տառապեալներն են, այրիները, որբերը, հիւանդները եւ այլ կարիքաւորները, որոնք ապաստան ու հոգեւոր մխիթարութիւն են գտել Եկեղեցու հովանու ներքոյ՝ վերագտնելով կարեւոր լինելու զգացումը, կեանքի հանդէպ ձգտումը»[18]: Սա է հենց Քրիստոնեական կյանքի գործնականացումը, որն աստվածաշնչյան բարոյականությունը դարձնում է կյանք և ապրում՝ նպաստելով ազգային բարոյական նկարագրի կերտմանը: Այժմ աղքատախնամությունը և կարիքավորների նկատմամբ հոգատարությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Սոցիալական ծառայության գրասենյակի» անմիջական ուշադրության կենտրոնում են. գործում է աղքատների համար նախատեսված անվճար ճաշարանների ցանց, տարեկան բազմաթիվ անվճար բուժօգնություն ցուցաբերող հիվանդանոց, զինծառայության ընթացքում վիրավորում ստացած զինհաշմանդամների համար արտասահմա-

[16] Տես *Էդուարդ Պողոսյան,* Հայաստանի նորանկախ հանրապետության հագևոր-եկեղեցական կյանքի վերաշինության պատմությունից (1990–2000 թթ.): «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք 2: Ե., 2016, էջ 55–67:

[17] Տես *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան,* Ազգապատում, հ. Ա, գիրք Ա Բ Գ: Պէյրութ, 1959, էջ 85–88:

[18] Տես *Գարեգին սարկաւագ Յովսէփեան,* Եկեղեցին եւ աղքատների խնամատարութեան գործը: «Սերմնացան» մատենաշար-Բ: Ս. Էջմիածին, 2017, էջ 10:

նում անվճար բարդ վիրահատական բուժօգնության կազմակերպում և այլն:

Հասարակական-անվտանգային: Եկեղեցին մեծածավալ աշխատանք է կատարում հոգևոր անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացման համար, որպիսիք կարող են լինել ռազմաքաղաքական, կրոնական, գաղափարախոսական, սոցյալ-մշակութային և այլ բնույթի: Տարբեր միջազգային կառույցների և թշնամական պետությունների ֆինանսավորմամբ Հայաստանը, ինչպես նախկինում, այսօր էլ թատերաբեմ է դարձել բազմաթիվ «լույս» տարածող կրոնական ուղղությունների և ենթամշակույթների համար, որոնք կատարում են հովանավորող պետության գաղտնի ծառայությունների հրահանգները և հետախուզական առաջադրանքները: Աղանդների քայքայիչ գաղափարախոսության մեջ չկա ազգային մտածելակերպ, չկան հայրենիք, հայրենասիրություն հասկացությունները և նույնիսկ իրենց հետևորդներին արգելում են զենք վերցնել ու ծառայել բանակում, պաշտպանել հայրենիքը: Այս ամենը մեծապես սպառնում է մեր երկրի անվտանգությանը, ժողովրդի միասնականությանը, ազդում մեր երկրի ռազմական ուժերի մարտունակության վրա: Հետևաբար, առաջնահերթ է դառնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջոցով փոխանցված ճշմարիտ քրիստոնեական հավատքը դարձնել ազգային գաղափարախոսության հիմք, որովհետև այդ հավատքը սիրում է հայրենիքը, հայ զինվորին, հայ շինականին, հայ մշակույթը: Ժամանակակից աղանդների գերակշիռ մասը, իր գաղափարախոսության հենքում դնելով ամբողջատիրությունը[*] և ուղղված լինելով համընդհանրացման արհեստական տարածմանը, շատ հեռու է աստվածաճանաչության ճանապարհից, իսկ մյուս մասը փորձում է թաքնվել և քողարկել իր ամբողջատիրական դրսևորումները[**]: Հայաստանում գործում են նաև անհատի առողջ բանականությանը վնաս հասցնող հակակրոնական կազմակերպություններ և սոցիալական խմբեր, որոնց քարոզչության առանցքն այլասերումն է և սանձարձակ կյանքը, իսկ գաղափարախոսության բարձրակետը՝ ինքնասպանության հանգելը[***]: Նմանատիպ սպառնալիքներ են նաև ընդունված բարոյական նորմերը խախտող կեղծ մշակութային արժեքները, խորթ գաղափարները, նախաձեռնությունները, հասարակական շարժումները և սրանց ներմուծումը բանակ՝ բարոյահոգեբանական անկայունություն առաջացնելու միտումով: Սրան հակառակ ազգային ինքնության ու հերոսականության դրոշմն ենք գտնում հայոց տոնացույցում, ուր Հայոց աշխարհի համար ընկածները տոնելի սրբեր են, և կանգնած զանազան ազգադավ և հավատուրաց, պարտադրվող այսպիսի հրովարտակների առջև՝ պարտավոր ենք ճանաչելու դրանք և վանելու մեր ազգային կյանքից: Այսօրվա բազմազան աղանդա-

[*] Եհովայի վկաներ, Մորմոններ, Ադվենտիստներ, Յոթերորդ օրվա ադվենտիստներ և ուրիշներ:

[**] Նոր էջ (Նոր սերունդ), Հոգեգալստականներ, Հիսուսականներ, Կյանքի խոսք, Ավետարանականներ, Ավետարանչականներ, Հայ Ավետարանական մկրտչականներ, Հիսուսի ավետարանի եկեղեցի և այլն:

[***] Էմոներ, գոթեր, սատանայապաշտներ, հակաքրիստոսներ:

վորական շարժումները ոչ այլ ինչ են, եթե ոչ նույն այդ հազկերտյան հրովարտակները: «Հազկերտները», զանազան դիմակներ հագնելով, միշտ մնում են նույնը՝ ոգով ու մտադրությամբ կործանող:

Հակաազգային այս գործունեությանը հակազդեցությունը Եկեղեցին իրականացնում է իր թեմական երիտասարդական ու ծխական կառույցների միջոցով՝ տեղեկատվական հարթակներով և համագործակից հասարակական կազմակերպությունների հետ փոխգործությամբ: Հակազդեցության կարևորագույն լծակներից է նաև ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության գնդերեցների միջոցով զինծառայողների շրջանում տարվող ամենօրյա ծառայությունը: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորականները գնդերեցի և ռազմիկի ծառայությամբ, Ավարայրի ճակատամարտին մասնակից հոգևորականներից սկսած, գործում են մեր ամբողջ պատմության ընթացքում: Երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի և լուսահոգի սպարապետ Վազգեն Սարգսյանի ջանքերով 1997 թ. ՀՀ ԶՈՒ-ի Հոգևոր ծառայությունն ստացավ իր ձևավորման առաջին տեսքը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս Հայրապետն իր հոգևոր խնամքի տակ առավ բանակը՝ շեշտադրելով զինվորի հոգեբարոյական ու ազգային հոգեկերտվածքի ձևավորումը: Դրան էին միտված Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հոգևոր գրականության բաշխումը զինվորներին, համապատասխան թեմաներով ռադիոհաղորդումների պատրաստումն ու ձայնասփռումը, Խաչվառերի տրամադրումը զորամասերին, եկեղեցական տոնական միջոցառումների ու սեմինարների կազմակերպումը, սոցիալական աշխատանքն ու օգնությունը վիրավորված զինծառայողներին ու նրանց կամ զոհված ընտանիքներին և բազմաթիվ այլ ծրագրեր:

Սպառնալիքներ են նաև հայ հասարակության մեջ և միջազգային ասպարեզում Հայ Եկեղեցու դեմ ուղղված մարտահրավերները՝ հոգևորականների վարկաբեկում, հերձվածների առաջացում, ծեսի աղավաղում և այլն, մինչդեռ Հայ Եկեղեցին խորհրդային կարգերից ազատագրումից ի վեր, հանդես բերելով աչալրջություն և հաստատունություն, հյուրընկալած և հյուրընկալված միջազգային քաղաքական շրջաններում, քաղաքական ու կրոնական գործիչների հետ անհատական կամ միջկրոնական հանդիպումների մակարդակով հայանպաստ գործունեություն է ծավալում քաղաքական հիմնախնդիրներով (Արցախյան հիմնախնդիր, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, Արցախում ապրիլյան ագրեսիա և այլն): Հայ Եկեղեցու թե՛ ներքին, թե՛ հատկապես արտաքին թեմերի միջոցով աշխատանքներ են տարվում (տեղեկատվական բնույթի, գիտաժողովների, սեմինար-քննարկումների, հանրահավաքների, առանձին հանդիպումների, տոնական միջոցառումների, քայլարշավների, բողոքների ու ցույցերի ձևով և այլն) ապատեղեկատվությունները հերքելու և Հայ Եկեղեցու ազգային-հոգևոր պատմական և արդի գործունեությունը ներկայացնելու համար: Այդ գործունեության արդյունքներից հիշարժան է նաև, որ Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի միջազգային կերպով տոնակատա-

րությանը մեծ աջակցություն ցուցաբերեց ՅՈՒՆԵՍԿՕ-ն: ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի գծով այդ կազմակերպությունը 1996 թ. հունվարին կայացած իր գլխավոր խորհրդաժողովում ընդունած բանաձևում նշեց, որ 301 թվականին քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, առաջինն ընդունվել էր Հայաստանում, և դարերի ընթացքում Քրիստոնյա Հայաստանը, Հայ Առաքելական Եկեղեցին նշանակալի ներդրում են ունեցել համաշխարհային արժեքների, համաշխարհային մշակույթի և քաղաքակրթության զարգացման գործում[19]:

Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես հայ ժողովրդին ներկայացնելու իրավասու մարմին, ակտիվ կերպով ներգրավված է նաև միջազգային հարաբերությունների ոլորտում, մասնակիցն է բազմաբովանդակ միջազգային և միջեկեղեցական ժողովների ու նախաձեռնությունների, Քրիստոնեական և միջկրոնական համաժողովների[20]: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր երկխոսության մակարդակով աշխուժորեն ներգրավված է նաև էկումենիզմի մեջ, գործնականորեն մասնակցում է բազմաթիվ էկումենիկ համագումարների, ժողովների և նմանատիպ հավաքների՝ ջանալով իր ներդրումը բերել Քրիստոսի Սուրբ Եկեղեցու միության գործում՝ մերժելով որևէ դավանաբանական միարարական հնարավորություն[21]: Այս առումով Հայ Առաքելական Եկեղեցու ազգային և համաքրիստոնեական դերակատարությունն ըստ արժանվույն գնահատել է նաև Եկեղեցիների Համաշխարային Խորհուրդը, և 2013 նոյեմբերի 4-ին Հարավային Կորեայի Բուսան քաղաքում անցկացվող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ համաժողովի պատվիրակների միաձայն քվեարկությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսն ընտրվել է ութ տարով նախագահ: Հայաստանի սահմաններից դուրս և համաքրիստոնեական աշխարհում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ունեցած մեծ դերակատարությունը նպաստում է նաև Հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի կազմակերպմանը: Հիշատակելի է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ կատարված վերջին տասնամյակում մեծ աշխատանքը՝ ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Սկսած 20-րդ դարի սկզբից՝ փորձեր են արվել բարեփոխման քողի տակ դուռ բացել զանազան կրոնական շեղումների առջև, կրճատել ծեսը և իրագործել այլ ուղղություններով ձեռնարկումներ, սակայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին անաղարտ և անսասան է մնացել Քրիստոնեական, Եկեղեցական, ազգային ու հոգևոր արժեքներն իրենց մեջ խտացնող և դարերի միջով փոխանցվող ծեսի ու սրբազան ավանդույթների պահպանմանը:

Մշակութային: Հայ Եկեղեցու գործունեության մեջ է խտանում նաև հայ ազգային նյութական մշակույթը (եկեղեցիներ, խաչքարեր և այլն), դպրությունը

[19] Տես *Էդուարդ Պողոսյան,* Նշ. աշխ., էջ 61–63:

[20] Տես նույն տեղում, էջ 57:

[21] Տես *Տ. Ադամ քահանա Մակարյան,* էկումենիզմի Անկեղծությունը: «Էջմիածին», 2010, Բ:

(Եկեղեցին՝ որպես հայ հին գրականության ուսումնասիրությունն ու սերունդներին փոխանցումն ապահովող հաստատություն) և ազգային ավանդույթների հասարակության մեջ պահպանությունը (Եկեղեցուն կից մանկական, երիտասարդաց միությունների ու խմբակների գործունեություն՝ ազգային պարերի, գորգագործության, ասեղնագործության, այլ ժողովրդական արհեստների ուսուցմամբ):

Չնայած անկախության տարիներին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով վերականգնված, վերանորոգված և կառուցված մեծ թվով Եկեղեցիներին ու Եկեղեցապատկան կառույցներին, և չնայած հակազգային տարրերի խանգարիչ ջանքերին՝ այդուհանդերձ աշխույժ համայնքային կյանքով ապրող Հայաստանում և Հայ Եկեղեցու Սփյուռքի թեմերում դեռ կարիք կա նոր Եկեղեցիների կառուցման, ինչը շինարար Հայրապետի ուշադրության կիզակետում է: Եկեղեցիներին կից գործում են մանկական կիրակնօրյա դպրոցներ, երիտասարդաց և տիկնանց միություններ, տարբեր մշակութային խմբեր և ծխական խորհուրդներ, որոնք լծված են ազգային-քրիստոնեական արժեհամակարգի պահպանման սուրբ գործին: Նորին Սրբության ջանքերով բոլոր թեմերում բացված բարեգործական Հայորդյաց տներում հազարավոր դպրոցականներ ուսանում են ազգային երգ ու պար, նվագարաններ և այլն:

Ե դարի արշալույսին Սուրբ Սահակ Պարթև կաթողիկոսի աջակցությամբ մեր լուսեղեն թարգմանիչ Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի կատարած Գրերի գյուտով և հայացրած Աստվածաշունչ մատյանով արմատավորվեց հայկական դրոշմով ու բնավորությամբ մի քրիստոնեություն, որը հետագա ձիգ դարերի ընթացքում հոգևոր զրահի դեր կատարեց մեր մարդկային տեսակի պահպանման և ինքնահաստատման ուղղությամբ: Սկսվեց հայ դպրությունը և դրսևորվեց հայ ժողովրդի ստեղծագործ հանճարեղ ոգին՝ ծնունդ տալով բազմադարյան հարուստ հոգևոր, գրական ու գիտական ժառանգությանը: Հայ ժողովրդի համար, հատկապես՝ կորսված պետականության ժամանակներում, նրա հոգևոր և մշակութային արժեքները դարձան հայ ինքնության կերտման և պահպանման երաշխիքներ: Աստվածաշունչ մատյանը հայոց դպրության սկզբնավորման ժամանակներից մուտք է գործել մեր կյանք և խոր հետք թողել հայ մարդու աշխարհայեցողության վրա՝ ծառայելով նաև որպես գրաճանաչության և մայրենի լեզվի ուսուցման ձեռնարկ: Հայոց հին ու միջնադարյան մատենագրության, նաև նոր գրականության էջերն առատ են Սուրբ Գրքից քաղված խորիմաստ արտահայտություններով և բնութագրումներով, ըստ որում, շատերն անհասցե, թաքնված մեջբերումների ձևով, որովհետև, ինչը ժամանակակից ընթերցող-ուսումնասիրողներին առեղծված ու խորհրդավոր է թվում, հների համար ծանոթ տեղեր էին՝ կես խոսքից հասկանալի[22]: Հայ ժողովրդի՝ դեպի Քրիստոնեական հավատքն ունեցած ջերմեռանդ վերաբերմունքը, Աստծո պատվիրանների համաձայն՝

[22] Տես *Պիոն Հակոբյան,* Գ. Սունդուկյանցի հերոսը՝ սաղմոսի «մեկնիչ»: «Էջմիածին», 1999, ԺԲ:

արդար և ազնիվ, մեծահոգի և բարեպաշտ ձևով ապրելու ձգտումն արտահայտվում է նույնիսկ հայ ժողովրդական հեքիաթներում[23]: Այսօր հայոց լեզվի «ղային բռնելու» երաշխավոր մեր նախնյաց լեզուն՝ հայոց ոսկեղենիկ գրաբարը, պահպանվում է հենց Հայ Եկեղեցու խորախորհուրդ ծեսի միջոցով: Հայոց Եկեղեցին՝ հավատարիմ հայոց դպրության պահպանման ավանդներին, հետամուտ է հոգևոր կրթարանների բացմանը և ուսման մակարդակի բարձրացմանը: Մայր Աթոռի հովանու ներքո բացվում են գիտական կենտրոններ ու գրադարաններ, հիմնվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարանը, Էջմիածնի տպարանում հրատարակվել են հազարավոր գրքեր: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հավատարիմ նախնյաց ժառանգությանը, անկախությունից հետո այս կարճ ընթացքում վերականգնել է Հայոց Եկեղեցու գիտական կյանքի երբեմնի փառքը:

Հոգեբանական և հոգևոր-կրոնական. Հոգևոր անվտանգության դեմ և անհատի ներաշխարհը խառնարկող սպառնալիքներ են խառնամուսնությունները, արտամուսնական կապերը, միասեռականությունը, թմրամոլությունը, հոգիության արհեստական ընդհատումները, հոգևոր դաստիարակության բացակայությունը, նոր ժամանակներին վերաբերող անձի ազատության սխալ ընկալումը, միջմարդկային հարաբերություններում բարոյական պատասխանատվություն չկրելու հանգամանքը և դեպի աշխարհիկացում տանող ընթացքը, որոնք լրջորեն խաթարում են նույնիսկ կայուն թվացող այնպիսի միավորը, ինչպիսին ընտանիքն է: Սրան հակառակ, եկեղեցական կյանքում ընտանիքի բոլոր՝ անկախ տարիքային տարբերության, անդամների ներգրավումը լավագույնս անդրադառնում է ընտանիքի ընդհանուր բարոյական, հոգևոր վիճակի վրա, երբ ամեն իրավիճակում հնարավոր է դառնում Աստծո կամքը տեսնելը, զգալը, հասկանալը և գոհությամբ Աստծուն փառք տալը: Եկեղեցու ծիսաարարողակարգային կյանքին մասնակցությունը, սրբությունների հետ հաղորդակից լինելը նպաստում են և՛ Աստծո հետ առանձին հարաբերության խորացմանը, և՛ համայնքային ընդհանուր աստվածապաշտական կյանքին ավելի գիտակից մոտեցմանը: Եկեղեցու հետ կենդանի կապն առողջ է պահում հավատքը, ճիշտ ճանապարհի վրա դնում հավատքային առաջընթացը՝ միաժամանակ կապող օղակ լինելով անցյալի հոգևոր ժառանգությունը ապագա սերունդներին ավանդած և հավատի կյանքով փայլող նախնիների հետ: Առողջ բարոյական ու հավատքային արժեհամակարգով ապրող ընտանիքը յուրովի դառնում է դեղատոմս հիվանդ հասարակության համար:

Հետևաբար *հոգևոր արժեքների, հասարակության ազգային ինքնության և պետության պահպանությունը* այն կարևոր ու անբաժան գործառույթներից է, որ իրականացրել և իրականացնում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին պատմության անանցանելի ճանապարհներին, առանց ինչի նոր արժեք, ինք-

[23] Տես *Նվարդ Վարդանյան,* Քրիստոնեական հավատքի արծարծումները հայոց իրապատում հեքիաթներում: «Էջմիածին», 2005, ԺԲ:

նություն և պետություն փնտրելը արմատականորեն փոփոխելու է փնտրման առարկան, ինչն էլ բերելու է միմիայն կորստի: Իր անցյալից այնքան մեծ ժառանգություն ստացած որևէ կրոնասեր ազգ, ինչպիսին հայ ազգն է, անհրաժեշտություն ունի ցանկացած իրավիճակում հետ նայելու՝ իրական ապագան տեսնելու համար:

Մեր ժողովրդի պատմության վերջին երկու հազար տարիներին հայոց երկնակամարը լի է եղել վանքերից, ժողովրդի, զինվորականների, իշխանների ու հոգևորականների սրտերից բարձրացող աղոթքով առ Աստված, որը նրանց պահել ու պահպանել է միակամ ու միասիրտ, և Ազգային Եկեղեցու ու արժեքների շուրջ այս միասնականությունն էլ հակիրճ կերպով արտահայտվել է Հայոց Հայրապետների կատարած Հանրապետական մաղթանքի աղոթքում.

Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիմք առաջի քո եւ հայցեմք յամենաբատ ողորմութենեդ քումմե քումմէ, Տէր, Աստուած մեր, զի պահեսցես եւ պահպանեսցես զՀանրապետութիւն Հայաստան աշխարհի ի խաղաղութեան, ի բարօրութեան եւ յանսասանութեան:

Օրհնեա Տէր զամենայն հաւատարի եւ նուիրեալ պաշտօնեայս սորա՝ զնախագահն, զխորհրդարանն, զնախարարս, զզօրապետս եւ զամենայն զինուորեալ մանկունս սորա:

Օրհնեա զամենեսեան որք ընդ իշխանութեամբ Հանրապետութեանս են՝ զեկեղեցականս եւ զաշխարհականս, զմեծս և զփոքունս, զարս եւ զկանայս եւ զամենայն հաւատացեալ ժողովուրդ քո ընդ հովանեաւ Աջոյ քո:

УГРОЗЫ НАЦИОНАЛЬНЫМ ДУХОВНЫМ ЦЕННОСТЯМ И РОЛЬ СВЯТОЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ДЕЛЕ СОХРАНЕНИЯ ДУХОВНЫХ ЦЕННОСТЕЙ, ИДЕНТИЧНОСТИ ОБЩЕСТВА И ГОСУДАРСТВА

Епископ Вртанес Абраамян, духовный предводитель ВС РА

РЕЗЮМЕ

Во все времена и во всех обществах религиозное сознание, будучи воспринимаемо как аксиоматическая истина, являлось основной регулирующей силой в жизни индивидуума и гибким средоточием общественной жизни, а от Рождества Христова христианское богопознание стало смыслом жизни христиан и стержнем их законопослушности.

На протяжении всей своей истории Армянская Апостольская церковь последовательно боролась и борется за торжество национальных духовных ценностей, освященных христианским вероучением, сохранение армянской национальной идентичности и независимой нацио-

нальной государственности. В этой борьбе церковь не только обеспечивала сохранность этих ценностей, традиций, знаний и культуры, языка и искусства, но и порой в силу обстоятельств – выступала как единственная организованная сила, способная на международной арене представлять наш народ, защищать наши национальные интересы.

С первых дней своего официального существования как главенствующая национальная религиозная организация Армянская Апостольская церковь принимала активное участие в национально-освободительной борьбе армянского народа, не только весомым и всепроникающим словом вдохновляя бойцов в сражениях, но и в лице отдельных своих представителей сражаясь мечом на поле битвы, как иерей Гевонд в Аварайрском сражении в 451 г. и епископ Гарегин Овсепян в Сардарапатском сражении в 1918 г. И эту традицию она пронесла через века и окончательно закрепила в лице духовной службы в Вооруженных силах нынешней Республики Армения, в формировании современного облика которой решающую роль сыграли блаженной памяти Католикос всех армян Гарегин I и спарапет (главнокомандующий) Вазген Саргсян.

И сегодня духовная служба армянской армии божьим словом укрепляет дух молодого армянского воина, наставляет его на истиный путь в духе вековых традиций служения Армянскому народу и Отчизне.

THE THREATS TO THE NATIONAL SPIRITUAL VALUES, AND THE ROLE OF THE HOLY ARMENIAN APOSTOLIC CHURCH IN PRESERVING THOSE VALUES, THE IDENTITY OF THE SOCIETY AND THE STATE

Bishop VRTANES ABRAHAMYAN, Spiritual Leader, RA Armed Forces

SUMMARY

At all times and in all societies, religious consciousness, perceived as an axiomatic truth, was the main regulatory power in the life of the individual, and the flexible focus of social life; and from the birth of the Christ the Christian knowledge of God became the meaning of the Christians' life and the core of their law-abidingness.

Throughout its history, the Armenian Apostolic Church has consistently fought and continues to fight for the sake of the triumph of the national spiritual values consecrated by the Christian doctrine, preserving the Armenian national identity, and for the independent national statehood. In this struggle, the Church not only ensured the integrity of these values,

traditions, knowledge and culture, language and art, but, due to circumstances, occasionally acted as the sole organized force capable of representing our people in the international arena, and protecting our national interests.

From the very first days of its official existence as the leading national religious institution, the Armenian Apostolic Church took an active part in the national liberation struggle of the Armenian people, not only with a weighty and pervasive word inspiring the fighters in battles, but also in the person of its own representatives, fighting with the sword in the hands on the battlefield, like Priest Ghevond in the battle of Avarayr in 451 did, and Bishop Garegin Hovsepyan in the battle of Sardarapat in 1918. And this tradition was carried through centuries and finally consolidated into the spiritual service in the Armed Forces of the present-day Republic of Armenia, in shaping the contemporary image of said service the late Catholicos of All Armenians Garegin A of blessed memory, and the Sparapet (Commander-in-Chief) Vazgen Sargsyan played a decisive role.

And today, the spiritual service of the Armenian Army strengthens the spirit of the young Armenian soldier with God's word, leads him up to the true path in the spirit of the centuries-old traditions of serving the Armenian people and the Motherland.

ՀԱՄԱՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի խորհրդական,
Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի գիտության գծով տեղակալ – Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ,
Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒՁՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահրատարակչական կենտրոնի պետի – «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մշակութային անվտանգության գոյություն ունեցող սահմանումները բազմաթիվ են*: Ընդ որում, կա մշակութային անվտանգությանն իմաստով մոտ մեկ այլ անվտանգային քաղաքագիտական հասկացություն՝ «հոգևոր անվտանգություն», և համաձայնություն չկա նաև այն հարցում, թե մշակութային անվտանգությունն է հոգևոր անվտանգության մաս, թե՞ հակառակը[1]: Ուստի նպատակահարմար ենք համարում ներկայացնել երկուսի սահմանումն էլ:

«Հոգևոր անվտանգությունը ազգային անվտանգության բաղադրիչ է, որը բնութագրում է հասարակության կենսակերտվածքի, պատմության և մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաև առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը»[2]: Մինչդեռ «մշակութային

* Մշակութային անվտանգության սահմանումների մեծ թիվը պայմանավորված է բուն «մշակույթ» հասկացության բազմանշանակությամբ: Դեռ 1952 թ. ամերիկացի մարդաբաններ Ա. Լ. Քրեբերը և Կ. Քլակհոնը հիշատակել են մշակույթի 164 սահմանում: Այսօր այդ թիվը բազմապատկվել է (տես «Культура». «Энциклопедический словарь по культурологии». М., 1997, с. 209):

[1] Տես *Ю. В. Верминенко, Н. В. Ершов*. Культурная безопасность общества и государства и ее основные угрозы. «Управленческое консультирование», 2017, № 12; *А. П. Романова, В. О. Мармилова*. Культурная безопасность как важнейший фактор национальной безопасности. «Человек. Сообщество. Управление», 2008, № 2:

[2] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների

անվտանգությունը ազգային անվտանգության բաղադրիչ է, հասարակության մշակույթի պաշտպանվածության մի այնպիսի վիճակ, որն ապահովում է կրոնական և էթնիկական հակամարտությունների, հասարակության հոգևոր անկման, նրա սոցիալական խմբերի, անձնավորության քայքայման, մշակութային ժառանգության կործանման կանխումը, ինչպես նաև ժողովրդի մշակութային ինքնագիտակցության հետագա զարգացումը»[3]:

Թեև երկու սահմանումների արժեքային տիրույթները մեծապես համընկնում են, այնուամենայնիվ, մեր ընկալմամբ, մշակութային անվտանգությունը ներառվում է հոգևոր անվտանգության տիրույթում, քանի որ հոգևորը (հոգևոր կյանքը) պարտադիր չէ, որ լինի մշակույթի տարր (այսինքն՝ հասարակական), մինչդեռ մշակույթն անպայման ինչ-որ սոցիալական խմբի հոգևոր կյանքի բաղադրիչ է:

ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում, առաջին հերթին՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, ռազմական, իրավական ու հոգևոր կյանքում, տեղի ունեցող փոփոխությունները, համընդհանրացմամբ պայմանավորված ազգային սոցիալական* և մշակութային համակարգերի ձևախախտման միտումները նպաստավոր են ազգային գաղափարական-արժեքային վակուումի առաջացման, համընդհանուր կարծրատիպային մտածելակերպի տարածման համար: Դա էապես բարդացնում է բացասական տեղեկութահոգեբանական ներգործություններից անհատի, խմբի ու հասարակության հոգեբանության և ինքնության, ինչպես նաև զանգվածային գիտակցության պաշտպանությունը, հակառակորդի համար ստեղծում է ձեռնածվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման մեծ հնարավորություններ[4]:

Մշակութային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքը, որպես կանոն, և՛ անհատի ինքնության, և՛ ազգի ինքնության դեմ ուղղված սպառնալիք է: Պատճառները մի քանիսն են: Նախ. մշակույթը յուրաքանչյուր մարդու, յուրաքանչյուր հասարակության և նրա առանձին տարրերի կենսագործունեության որակական բնութագիրն է: Երկրորդ. ինչպես նկատել է ռուս փիլիսոփա Ն. Բերդյաևը, հասարակության նպատակներն իրականացվում են ո՛չ քաղաքականության և ո՛չ էլ նույնիսկ տնտեսության ոլորտներում, այլ՝ մշակույթում[5]:

բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 74:

[3] Տես *Յու. Վ. Վերմինենկո, Ն. Վ. Երշով*, Նշ. աշխ.:

* Սոցիալական համակարգ ասելով նկատի ունենք փոխկապված ու միմյանց առնչվող այն սոցիալական երևույթների ու գործընթացների համախումբը, որոնք ձևավորում են որոշ սոցիալական օբյեկտ:

[4] Տես *Վ. Հ. Մարգարյան*, Բացասական տեղեկատվական-հոգեբանական ներգործությանը հոգեբանական հակազդեցության հարցի շուրջ: «ՀԲ», 2016, հմ. 1:

[5] Տես *Н. Бердяев*. Философия неравенства. М., 1990, с. 247:

Երրորդ. միայն մշակույթի միջոցով է իրացվում մարդու հոգևոր աշխարհը, և դրանով է նա հաղորդակցվում հանրության հետ: Չորրորդ. յուրաքանչյուր ժողովրդի մշակույթը առանձնահատուկ է և անկրկնելի՝ արտահայտելով միայն տվյալ ժողովրդի աշխարհընկալումը[6]: Մարդկության պատմությունը վկայում է, որ իրենց ազգային մշակույթը կորցրած ժողովուրդները կործանվել են, և ընդհակառակը, պատերազմներում պարտություններ կրած, տարածքներ կորցրած և մասնատված, բայց մշակույթը պահպանած ժողովուրդները՝ անգամ ի պատասխան եղեռնական ճգնաժամներին, գոյատևել են, ինչպես, օրինակ, հրեաները և հայերը[7]:

Ազգային մշակույթի նոր հայեցակարգային իմաստավորումը ենթադրում է ոչ միայն դրա՝ որպես ազգային ինքնագիտակցության օբյեկտացման[*] ձևի վերլուծություն, այլև ազգային ինքնագիտակցության դիտում որպես ազգային մշակույթի զարգացման կարևոր գործոնի[8]:

Հոգևոր մշակույթի գործառման, հասարակության մարդկայնացման, միջանձնային և ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակման ընթացքում մեծ դեր ունի արվեստը, որի նշանակությունը հասարակության կենսագործունեության համար հաճախ թերագնահատվում է: Այն ոչ թե հասարակական կեցության գեղարվեստական արտացոլման պարզ արդյունք է, մշակույթի ենթակառուցվածք, այլ արվեստի փիլիսոփայական իմաստավորումը ենթադրում է դրա վերլուծություն որպես գործունեության սուբյեկտների ինքնագիտակցության ձևի, այդ թվում և նրանց ազգային կողմերի:

Ընդսմին մարդու ինքնագիտակցությունն ու գիտակցությունը կարող են ենթարկվել փոփոխման: Դա հնարավոր է գիտակցության վրա կանոնավոր կերպով կատարվող նպատակաուղղված ներգործության միջոցով, ինչը կարող է հանգեցնել տվյալ մարդու աշխարհայացքային կողմնորոշումների, նրա հոգևոր արժեքների (հավատարմություն իր ազգին, իր պետությանը, ավանդույթներին, հավատամքներին և այլ ազգային խորհրդանիշների) էական փոփոխման: Եվ քանի որ մարդու վարքի համար մշակույթը նույնն է, ինչ ծրագրային ապահովման համար օպերացիոն համակարգը[9], դա, վերջին հաշվով, կազդի նրա վարքի վրա՝ արտացոլվելով ենթագիտակցականի

[6] Տես *А. Сапрыкин*. Культура – фундамент национальной безопасности России. «Обозреватель», 1997, № 7 (http://old.nasledie.ru/oboz/N07_97/7_10.HTM):

[7] Տես նույն տեղում, նաև՝ *Հ. Ս. Քոթանջյան,* Ազգային աղետների դասերի մասին. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին: «ՀԲ», 2015, հմ. 1–2:

[*] *Օբյեկտացում*՝ մտածողական պրոցես, որի շնորհիվ որպես սուբյեկտիվ վիճակ ծագած զգայությունը կերպափոխվում է օբյեկտի ընկալման: – *Խմբ.:*

[8] Տես *Ю. А. Серебрякова.* Национальное самосознание и национальная культура: сущность, специфика и взаимодействие (социально-философский аспект). Автореф. док. дисс. Иркутск, 1997 (http://cheloveknauka.com/natsionalnoe-samosoznanie-i-natsionalnaya-kultura-suschnost-spetsifika-i-vzaimodeystvie):

[9] Տես «Психология и культура». Под ред. Д. Мацумото. Пер. с японского под ред. А. С. Кармина. СПб., 2003, с. 14:

մակարդակում կատարվող փոփոխությունների ձևով[10]: Նշենք, որ մարդու գիտակցության կառուցվածքում մասնագետները առանձնացնում են երկու հարթություն՝ օբյեկտիվ (Աշխարհ) և սուբյեկտիվ (Ես): Մարդու վարքը այս կամ այն կերպ միշտ զուգակցվում է նրա այն պատկերացումների հետ, թե ինչ է ինքը («Ես» կերպար») և ինչպիսին կուզենար լինել:

Արդի աշխարհում ազգային մշակույթների վրա ազդում է մի այնպիսի հզոր գործոն, ինչպիսին համընդհանրացումն է, որը վերջին տասնամյակների ընթացքում էապես փոխել է մարդկանց աշխարհայացքային պատկերացումները՝ նպաստելով սպառողական հասարակության գաղափարախոսության և ստոր մղումների առաջացմանը նպատակաուղղված զանգվածային մշակույթի տարածմանը, ինչի հետևանքով գնալով մեծանում է բնապահպանական և մարդաբանական ճգնաժամների վտանգը[11]:

Ներկայումս ժողովուրդների մշակույթների վրա համընդհանրացման ազդեցության հիմնական եղանակներն են. ա) տեխնոլոգիական գործոնները, որոնք հանգեցնում են հասարակության արտադրական հարաբերությունների նոր մշակույթի ձևավորմանը, բ) տնտեսական գործոնները, նախևառաջ՝ վերազգային ընկերությունների գործունեությունը, որը հանգեցնում է արտադրական վարքի միօրինակացված նորմերի, աշխատանքային կոլեկտիվների կառավարման միօրինակացված մշակույթի ձևավորմանը, գ) տեղեկատվական գործոնները, որոնք կապված են տեղեկատվական ցանցերի ու տեխնոլոգիաների զարգացման հետ, երբ հասարակության տեղեկութացումը վերածվում է մի համաշխարհային սոցիոտեխնոլոգիական պրոցեսի, իսկ մարդու հաղորդակցային հնարավորությունները ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ունենում նրա արժեհամակարգի (անհատական մշակույթի) ձևավորման վրա, դ) աշխարհաքաղաքական գործոնները, էկոլոգիական մարտահրավերների դեմ պայքարը, միգրացիան և այլն[12]:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում համընդհանրացմամբ պայմանավորված զարգացումները հանգեցնում են ազգային սոցիալական և մշակութային համակարգերի ձևախախտմանը, երիտասարդ սերունդների դաստիարակության և կրթման համակարգերի պարզունակեցմանը, ինչպես նաև ազգային մտածելակերպից, բարոյական նորմերից և սկզբունքներից, ազգային մշակույթից (այդ թվում՝ ավանդույթներից ու ծեսերից), հայ ժողովրդի դրական ավանդական բարքերից հրաժարմանը: Ազգային ավանդույթներին անհարիր սոցիալական, հոգևոր-մշակութային, կենցաղային արժեքների՝ համընդհանրացմամբ

[10] Տես *Յու. Ա. Սերեբրյակովա,* Նշ. աշխ.:

[11] Տես *Բ. Բ. Պիж*. Духовная безопасность общества и проблемы ее обеспечения в Российской Федерации (http://www.rusnauka.com/33_DWS_2013/Politologia/2_149672.doc.htm):

[12] Տես *Ռ. Պ. Кошкин*. Влияние культуры, образования и воспитания на национальную безопасность. «Культура и безопасность», 11.04.2017 (http://sec.chgik.ru/vliyanie-kulturyi-obrazovaniya-i-vospitaniya-na-natsionalnuyu-bezopasnost/):

պայմանավորված տարածումն սպառնալիք է ազգային ինքնության, այսինքն՝ հային բնորոշ հատուկ գծերի ամբողջության պահպանման համար:

Ներկայումս հասարակությունում խորանում են արատավոր երևույթները, տարածում են ստանում վնասակար ու դատապարտելի սովորություններ: Խոսքը վերաբերում է հարբեցողությանը, քրեածին վարքին ու բնակչության քրեականացմանը, մարմնավաճառությանը, համասեռամոլությանը, թմրամոլությանը, խաղամոլությանը, եսամոլությանը և այլն[13], որոնք սպառնում են արժեքային համակարգին, ուստի և հոգևոր, ներառյալ՝ մշակութային, անվտանգությանը:

Ներկայումս հասարակության առաջընթացը հնարավոր չէ պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ներգրավման: Սակայն այդ ոլորտի զարգացումը և դրա միջոցով մշակութային շփումների ընդգրկույթի մեծացումը հնարավորություն են տալիս էապես ներգործելու մշակույթի վրա: Ուստի և մշակութային անվտանգության ապահովման հիմնական օբյեկտներն են դարձել անհատական ու հասարակական գիտակցությունները, մասնավորապես՝ ազգային ինքնագիտակցությունը, և ազգային կենսակերպը (ավանդույթները)[14]:

Ըստ այդմ՝ արդի տեղեկութային հասարակության մշակութային անվտանգության դեմ ուղղված հիմնական սպառնալիքներն են մշակույթի միջոցներով ապազգային արժեքների սերմանումն ու տարածումը, անհատին և հասարակությանը կյանքի ապակառուցողական նպատակների, խնդիրների ու գերակայությունների պարտադրումը[15]: Այդ սպառնալիքները պայմանավորված են հետևյալ հիմնական պատճառներով[16].

– օտարերկրյա տեղեկատվական ենթակառուցվածքներից հասարակական կյանքի հոգևոր-մշակութային, տնտեսական ու քաղաքական ոլորտների մեծ կախվածություն,
– հոգևոր արժեքների արժեզրկում,
– բռնության պաշտամունքի, նյութապաշտության, գռեհկության, մշակույթի ցածրարժեք նմուշներով տեղեկատվական տարածության հեղեղման վրա հիմնված զանգվածային մշակույթի քարոզչություն,

[13] Տես *Վ. Հ. Մարգարյան*, ՀՀ ԶՈՒ-ում ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի կենսունակությունը պայմանավորող գործոնների հարցի շուրջ: «ՀԲ», 2014, հմ. 3–4:

[14] Տես *А. В. Тонконогов*. Духовная безопасность российского общества в условиях современного геополитического соперничества (социально-философский анализ). Автореферат диссертации на соискание ученой степени доктора философских наук. М., 2011 (http://www.dissercat.com/content/dukhovnaya-bezopasnost-rossiiskogo-obshchestva-v-usloviyakh-sovremennogo-geopoliticheskogo-s):

[15] Տես *Վ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 229:

[16] Տես *О. Бакланова*. Духовная безопасность современного российского общества и пути ее укрепления (http://rk-culture.ru/duhovnaya_bezopasnost/):

– պետության բնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի նվազում, «նպատակն արդարացնում է միջոցները» փիլիսոփայության տարածում (առօրեականացում),
– ձեռնածություն տեղեկույթով (ապատեղեկատվություն, տեղեկույթի աղավաղում, տեղեկութահոգեբանական պատերազմներ),
– ընտանիքի և ամուսնության հաստատության քայքայում, ժողովրդագրական ճգնաժամ,
– երիտասարդների շրջանում ծայրահեղականության և քրեական բարքերի տարածում, նրանց կրթվածության ու դաստիարակվածության մակարդակների նվազում,
– ավանդական կրոնական կազմակերպությունների հեղինակության անկում, ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների, կրոնական անհանդուրժողության տարածում,
– հաստատութենական ճգնաժամ և հասարակության սոցիալականացման համակարգի թուլություն, ինչի հետևանքով հասարակությունն ունակ չի լինում հակազդեցություն գործելու հոգևոր-մշակութային կյանքում նկատվող ապակառուցողական միտումներին,
– սոցիոմշակութային պառակտում և սերունդների միջև հարաբերությունների ճգնաժամ, որի արտահայտություններ են ազգային արժեքների, կուտակված սոցիոմշակութային փորձի մոռացությունը և երիտասարդ սերնդի գիտակցության «ամբոխացումը»,
– պառակտված և մասնատված հասարակությանը համախմբող գաղափարներ չլինելը, այլակարծության նկատմամբ անհանդուրժողականություն, այլատեցության, ռասիստական գաղափարների ու տրամադրությունների տարածում,
– սոցիալական անհավասարության և բևեռացվածության աստիճանի մեծացում, որը երկփեղկում է հասարակությունը, հանգեցնում միասնական մշակույթի քայքայման, հարուստների և աղքատների «ենթամշակույթների» ստեղծման ու տարանջատվածության խորացման, ժողովրդից հասարակության վերնախավի օտարման,
– բնության օրենքների միասնությունը, ճշմարտության, բարոյականության և գեղագիտության կարգախմբերի օբյեկտիվությունը ժխտող, բարոյական և արժեքային հարաբերականություն հռչակող հետարդիականության կեղծ քաղաքակրթության տարածում[17]:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Մշակութային անվտանգության հիմնական պրոբլեմներն են՝ *ինչն* է մշակութային անվտանգության օբյեկտը, *ում* անվտանգությունը և *ումից* կամ *ինչից* պետք է պաշտպանել, *ինչպես* պետք է պաշտպանել[18]:

[17] Տես *Сергей Черняховский*. О перспективах развития государственной политики России в области культуры. «Изборский клуб», 08.08.2016 (https://izborsk-club.ru/9981):

[18] Տես *А. П. Романова*. Культурная безопасность и страх перед Чужим. «Каспийский регион: политика, экономика, культура», 2013, № 2:

Մշակութային անվտանգության պրոբլեմները մենք դիտարկում ենք համատեղայնացման (գլոկալիզացում) տեսանկյունից: Ինչպես վերը նշվեց, համընդհանրացումն (գլոբալիզացիա) առաջացնում է ազգային արժեհամակարգի և ինքնության դեմ ուղղված մշակութային դիմազրկման սպառնալիքներ: Սակայն հնարավոր է նաև համընդհանրացման պրոցեսների արդյունքները, այսինքն՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտներում նորամուծությունները, ծառայեցնել տվյալ հասարակության ինքնության պահպանմանն ու զարգացմանը, ինչի իրագործումը հենց համատեղայնացման քաղաքականությունն է: Դրանում գոյակցում են երկու հակադիր միտումներ՝ համապիտանիացում և մասնավորեցում[19]: Ներկայացնենք մշակութային համատեղայնացման օրինակներ:

Արագ սննդի ծառայություն մատուցող ամերիկյան «Մակդոնալդս» ընկերության հիմնական արտադրանքը՝ տավարի մսով համբուրգերը, Հնդկաստանում չէր վաճառվում, քանի որ տեղի բնակչության մեծ մասի համար կովը սրբազան կենդանի է: «Մակդոնալդսը» իր ճաշացանկն արագորեն հարմարեցրեց տեղի մշակութային առանձնահատկություններին և առաջարկեց բուսակերի բուրգեր՝ պանրով և բանջարեղենով հաց, իսկ սև սուրճն ու թեյը՝ միայն կաթով, ինչպես ընդունված է Հնդկաստանում[20]:

Մյուս օրինակը. տղամարդկանց ամերիկյան «Էսկվայր» *(Esquire)* հանդեսը Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում կիրառում է հրատարակչական միասնական ռազմավարություն, բայց ձևավորումը և բովանդակությունը համապատասխանեցնում է տեղի առանձնահատկություններին: Օրինակ՝ հանդեսի ռուսական տարբերակին բնորոշ են «սառը» գույները, իսկ նյութերի վերաբերյալ ծանուցումներ (անոնս) չեն հրապարակվում, մինչդեռ բրիտանական տարբերակը ձևավորվում է գույների արտասովոր համադրությամբ և ինչ-որ հայտնի մարդու լուսանկարով[21]:

Ներկայացված օրինակները վկայում են, որ համատեղայնացումը նպաստում է տեղային մշակութային առանձնահատկությունների պահպանմանն ու զարգացմանը:

«Համընդհանուր մշակույթը պետք է լինի մեր մոլորակի ամբողջ մակերևույթով հավասարաչափ բաշխված՝ ստեղծելով ոգեղենության կայուն ցանցսարդոստայն, իր տարածաշրջանների, շրջանների, ավանների, քաղաքների սահմաններում ձևավորելով նյութականի ու հոգեղենի, իդեալականի ու իրա-

[19] Տես *Н. И. Фокин*. Глокализация. «Экономика: в начале было Слово». Словарь (http://dictionary-economics.ru/word/%D0%93%D0%BB%D0%BE%D0%BA%D0%B0%D0%BB%D0%B8%D0%B7%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F):

[20] Տես *М. С. Касабуцкая*. Глокализация и особенности межкультурного взаимодействия. «Труды Санкт-Петербургского государственного института культуры», 2015, т. 206, ч. 1 (https://cyberleninka.ru/article/n/glokalizatsiya-i-osobennosti-mezhkulturnogo-vzaimodeystviya):

[21] Տես նույն տեղում:

կանի ներդաշնակ փոխլրացնող փոխգործություն»[22]: Այս պայմաններում անհատն ու անձնավորությունը պետք է օժտված լինեն իրենց ավանդական մշակույթին համապատասխանող «շերտով» և այլ մշակույթների ու համաշխարհային արժեքների հետ փոխգործել ցանց-սարդոստայնի, միջմակարդակների միջոցով: Դա հնարավորություն կտա շտկելու համընդհանրացման զարգացումների հետևանքով արդեն առաջացած խոտորումները[23]: Մեր կարծիքով՝ հենց դրան պետք է նպատակաուղղված լինի համատեղայնացման քաղաքականությունը:

Մշակութային անվտանգության ապահովման նկատմամբ գոյություն ունի երեք հիմնական մոտեցում, որոնք միմյանցից տարբերվում են նաև համատեղայնացման նկատմամբ վերաբերմունքով:

ա) Մշակութային անվտանգության «պահպանողական» մոտեցման համաձայն՝ մշակույթում ցանկացած նորամուծություն կապված է մշակույթի ապակայունացման և կործանման վտանգի հետ[24]: Ուստի պետությունը, այս մոտեցման կողմնակիցների կարծիքով, պարտավոր է կարգավորել մշակույթի ոլորտը՝ հակազդեցություն գործելով զանգվածային մշակույթի տարածմանը, ազգի բարոյական ու մշակութային արժեքների քայքայմանը: Ըստ տվյալ մոտեցման՝ պետության այդ գործունեությունն էլ հենց մշակութային անվտանգության ապահովումն է[25]: Դա նշանակում է կանխել համընդհանրացման ազդեցությունը տեղայինի վրա, այսինքն՝ արգելել և՛ համընդհանրացումը, և՛, հետևաբար, համատեղայնացումը: Ակնհայտ է, որ ներկայիս պայմաններում դա պարզապես անհնար է:

բ) Մշակութային անվտանգության «ժխտողական» մոտեցման կողմնակիցները «մշակութային անվտանգություն» տերմինը համարում են ավելորդ, քանի որ մշակութային անվտանգության ապահովումը համարում են քաղաքական և կազմակերպական մեթոդներով միջամտություն մշակույթի բնականոն զարգացման ընթացքին: Ռուսաստանցի մշակութաբան Կ. Ռազլոգովի կարծիքով՝ մշակութային անվտանգության ապահովման կոչերն ըստ էության փորձ են ազգային մշակույթը պահածոյացնելու անցյալի լավագույն օրինակների սահմաններում, ինչը տանում է դեպի ժամանակակից զանգվածային մշակույթի արմատական ժխտում, մշակույթի լճացում և, ի վերջո, կործանում: Ռազլոգովի կարծիքով՝ մշակույթն այդպիսի «օգնության» կարիք չի զգում և ունակ է «ինքն իրեն փրկելու»[26]: Այլ կերպ ասած՝ այս մոտեցմամբ

[22] Տես *Н. Н. Кожевников, Н. А. Пашкевич*. Глокализация: концепция, характерные черты, практические аспекты. «Вестник ЯГУ», 2005, т. 2, № 3:

[23] Տես նույն տեղում:

[24] Տես, օրինակ, *Т. Душина, И Бокачев*. Актуализация безопасности духовной культуры Российского общества. «Власть», 2011, № 1:

[25] Տես *А. П. Романова, М. М. Бичарова*. Проблема культурной безопасности в научном дискурсе. «Человек. Сообщество. Управление», 2015, № 2 (https://cyberleninka.ru/article/n/ problema-kulturnoy-bezopasnosti-v-nauchnom-diskurse):

[26] Տես *К. Э. Разлогов*. Культурная опасность. «Компания» (еженедельник). М., 08.12.2008: Մեջբերվում է ըստ՝ *Ա. Պ. Ռոմանովա, Մ. Մ. Բիչարովա*, Նշ. աշխ.:

որդեգրվում է համընդհանրացմանը *չմիջամտելու, չհակադրվելու,* հետևաբար՝ համատեղայնացումը ժխտելու դիրքորոշում:

գ) Մշակութային անվտանգության նկատմամբ «համալիր» մոտեցման համաձայն՝ ցանկացած ազգային մշակույթ ունի երկակի բնույթ: Մի կողմից՝ նա, որքան էլ եզակի և ինքնատիպ լինի, միշտ այս կամ այն չափով բաց է մշակութային փոխառությունների համար, այս կամ այն կերպ կապված է ուրիշ ժողովուրդների մշակույթների հետ, հարստանում է դրանց արժեքներով, փորձով, գաղափարներով, նորամուծություններով: Սրան համապատասխանում է մշակույթի զարգացող, փոփոխական բաղադրիչը: Մյուս կողմից՝ մշակութային փոխառությունը պետք է կատարվի այն պայմանով, որ պահպանվեն ազգային մշակույթի եզակիությունը, ինքնուրույնությունը, որոնց համապատասխանում է մշակույթի համեմատաբար անփոփոխ, հաստատուն բաղադրիչը («միջուկը»): Այս մոտեցման կողմնակիցների կարծիքով՝ մշակութային անվտանգության հասկացությունը գործառութային է, ունի բազմաթիվ կողմեր և արտացոլում է հասարակության այն սոցիոմշակութային հնարավորությունները, որոնք ուղղված են ինչպես բոլոր տեսակների վտանգների (ռիսկ, մարտահրավեր, սպառնալիք) հաղթահարմանը, այնպես էլ հասարակության մշակութային կյանքի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը[27], ինչի ապահովումը հնարավոր է միայն համատեղայնացման միջոցով: Այս տեսակետից ուսանելի կարող է լինել Իսրայելի փորձը, որը հաջողությամբ օգտագործում է համընդհանրացման էներգետիկան իր մշակույթի, լեզվի ու կրոնի դիրքերի ամրապնդման ու զարգացման համար՝ օգտվելով խելացի կերպով ծրագրված համատեղայնացման քաղաքականությունից և ազգային դիտանկյունից ծառայեցնելով ի նպաստ ազգային շահերի[28]:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Մշակութային անվտանգության գլխավոր պրոբլեմներից ամենակարևորը դրա ապահովման եղանակների հարցն է: Համատեղայնացման պայմաններում մշակութային անվտանգությունը ապահովվում է մշակութային ոլորտում պետության արդյունավետ կառավարմամբ կամ, այլ խոսքով, վարած մշակութային քաղաքականությամբ: Սահմանումներից մեկի համաձայն՝ վերջինս «այնպիսի օպերացիոն սկզբունքների, վարչական ու ֆինանսական գործունեության ու ընթացակարգերի համալիր է, որոնք ապահովում են մշակույթի ոլորտում պետության գործողությունների հիմքը»[29]: Մշակութային քաղաքա-

[27] Տես *Ա. Պ. Ռոմանովա, Մ. Մ. Բիչարովա*, Նշ. աշխ.:

[28] Տես “The Jewish People in the Age of Globalization”. “A Journal of Jewish Ideas”, 1 January 2006 (http://shma.com/2006/01/the-jewish-people-in-the-age-of-globalization /); “Globalization and the Jews – Jerusalem Post”, 5 May 2004 (http://www.wilf.org/ English/2004/05/05/globalization-and-the-jews-jerusalem-post/):

[29] Տես *Л. Е. Востряков*. Государственная культурная политика: понятия и модели. СПб., 2011, с. 9 (https://www.cultpol.ru/app/download/11219479793/Монография+ 2011.pdf?t...):

կանության մշակման նախապայմանը մշակութային զարգացման նպատակների գերակայության հարցում պաշտոնական մարմինների և ստեղծագործական ու հասարակական ուժերի միջև համաձայնության ձեռքբերումն է[30]:

Մշակութային քաղաքականությունը մեթոդաբանական առումով կարելի է բաժանել երեք մակարդակի.

ա) *գաղափարախոսական-հայեցակարգային*, որում ձևակերպվում են հասարակության ու պետության արժեքներն ու իդեալները արտահայտող հիմնական դրույթները, մշակույթի զարգացման նպատակները,

բ) *ծրագրային-քաղաքական*, որում սոցիալ-փիլիսոփայական սկզբունքներն ու իդեալները կերպափոխվում են կոնկրետ ծրագրերի ու կարգախոսների՝ ձևավորելով կառավարչական որոշումների ընդունման և քաղաքացիների մշակութային վարքի խթանման համար նորմատիվային հիմք,

գ) *հոգևոր-գործնական*, որը բնութագրում է տվյալ մշակութային քաղաքականության նպատակների ու սկզբունքների ըմբռնման և իրացման աստիճանը, մարդկանց գործերում և արարքներում դրանց մարմնավորման չափը[31]:

Արտասահմանյան մշակութաբաններն առանձնացնում են մշակույթի բնագավառի կառավարման ոլորտում պետության հետևյալ հիմնական գործիքները.

– *իրավական մեթոդներ*, որոնց կիրառման օրինակ է «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքը[32], որը կարգավորում է «գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները»[33],

– *կազմակերպական մեթոդներ*, օրինակ՝ մշակույթի բնագավառի կառավարման հատուկ մարմինների ստեղծում: Այդպիսի մարմնի օրինակ է ՀՀ Մշակույթի նախարարությունը, ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, «որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաև հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության վերահսկումը»[34],

– *ֆինանսական մեթոդներ*, օրինակ՝ կոնկրետ մշակութային ծրագրերի ֆինանսավորումը, ինչպիսիք են՝ «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2012–2015 թվա-

[30] Տես նույն տեղում:

[31] Տես նույն տեղում, էջ 7–8:

[32] Տես «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ 2012 թ. մարտի 21-ի հմ. ՀՕ-90-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75198):

[33] Տես նույն տեղում, հոդ. 1:

[34] Տես «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» (խմբ. 10.06.2010 ՀՕ-100-Ն) ՀՀ 2000 թ. հոկտեմբերի 9-ի հմ. ՀՕ-97 օրենքը, հոդ. 35, կետ 1 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73839):

կանների պետական ծրագիրը»[35], ««Խոսրովի անտառ» պետական արգելոցի պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման և օգտագործման ծրագիրը»[36] և այլն,

– *փորձագիտական մեթոդներ*, օրինակ՝ մշակութային քաղաքականության արդյունավետության գնահատում, մշակութային կյանքի մշտազննում, մշակութային հաստատությունների մանրամասն հաշվետվությունների համակարգի ներդրում,

– *մշակութային քաղաքականության վարման մասնագիտացում*, ինչի օրինակ է միջազգային փորձը, երբ մշակույթի գծով մասնագետները՝ վարչարարները, առաջնորդվելով մասնագիտական համերաշխությամբ և մասնագիտական ինքնագիտակցությամբ, ձգտում են լինելու պետական միասնական մշակութային քաղաքականության կրողներ ու ջատագովներ[37]:

Այսպիսով՝ պետության արդյունավետ մշակութային քաղաքականությունը մշակութային անվտանգության ապահովման հիմնական միջոցն է: ՀՀ-ում մշակութային քաղաքականության արդյունավետության մեծացման համար առաջնահերթ նշանակություն ունեն պաշտոնական մարմինների և ստեղծագործական ու հասարակական կազմակերպությունների ու անհատների միջև քննարկումները, որոնց արդյունքներով պետք է սահմանվեն կամ ճշգրտվեն ազգային մշակույթի զարգացման գերակա նպատակները: Հարկ է նշել, որ դա (նպատակների ճշգրտումը) անընդհատ պրոցես է, քանի որ մշակույթն ինքն էլ անընդհատ զարգանում է: Նպատակների ճշգրտումից հետո պետք է որոշվեն դրանց իրագործման սկզբունքները և եղանակները, այսինքն՝ այն մոդելը, ըստ որի պետությունը կառավարելու է մշակույթի բնագավառը, ընդսմին հիմնական հարցը մշակույթի զարգացմանը պետության միջամտության աստիճանի որոշումն է: Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք կարծում են, թե մշակութային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին հիմնական հակազդեցությունը պետության աջակցությամբ մշակույթի բարձրարվեստ նմուշների զանգվածային ստեղծումն ու տարածումն է[38], այսինքն՝ ոչ թե մշակույթը զանգվածային սպառողի պահանջմունքներին համապատասխանեցնելը, այլ զանգվածային սպառողի ճաշակը բարձրարժեք մշակույթի մակարդակի հասցնելը:

---

[35] Տես «Նպատակային ծրագրեր»: «ՀՀ Մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջ» (http://mincult.am/target-programs.html):

[36] Տես նույն տեղում:

[37] Տես *Լ. Ե. Վոստրյակով,* Նշ. աշխ., էջ 25:

[38] Տես *Սերգեյ Չեռնյախովսկի*, Նշ. աշխ.:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ КУЛЬТУРНОЙ БЕЗОПАСНОСТИ РА В УСЛОВИЯХ ГЛОКАЛИЗАЦИИ

В. Г. МАРГАРЯН, полковник, доктор психологических наук, доцент, советник Начальника НИУО МО РА, Б. П. ПОГОСЯН, кандидат исторических наук, заместитель Начальника НИУО МО РА по научной работе–начальник Института национальных стратегических исследований, А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель Начальника научно-издательского центра НИУО МО РА–главного редактора военно-научного журнала «Айкакан банак»

РЕЗЮМЕ

Культурная безопасность представляет собой состояние защищенности культуры общества, обеспечивающее предотвращение религиозных и этнических конфликтов и упадка духовности общества, социальных групп и личности, разрушение культурного наследия, а также дальнейшее развитие культурного самосознания народа.

Основные проблемы культурной безопасности – это определение ее объекта и субъекта (*что* и *кого* защищать), источника угрозы (*от кого или чего* защищать) и способа защиты (*как* защищать). Глобализационные процессы создают множество угроз культурной безопасности. В современном информационном обществе основными угрозами культурной безопасности являются: внедрение и распространение антинациональных ценностей; навязывание личности и обществу неконструктивных и ложных целей. Действенным инструментом нейтрализации этих угроз является глокализация, т. е. эффективная адаптация глобализационных процессов к местным условиям с использованием их инновационных возможностей для сохранения и развития национальной культуры и идентичности.

Использование глокализационных процессов в качестве «умной силы» для обеспечения культурной безопасности осуществляется национальным государством посредством тщательно разработанной культурной политики, содержанием которой является стимулирование массового создания и распространения образцов высокой культуры, а инструментами – правовые, организационные, финансовые и другие рычаги управления культурной сферой общества. При этом важной проблемой является определение оптимальной степени вмешательства государства в процесс развития культуры.

SOME ISSUES OF ENSURING THE RA CULTURAL SECURITY IN TERMS OF GLOCALIZATION

V. H. MARGARYAN, Colonel, Doctor of Psychology, Associate Professor, Advisor to the Head, NDRU, MOD, RA, B. P. POGHOSYAN, PhD in History, Deputy Head for Research, NDRU, MOD, RA – Head, Institute for National Strategic Studies, A. K. YALANUZYAN, Colonel, Deputy Head, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA – Deputy Editor-in-Chief, "Haikakan Banak" Defense-Academic Journal

SUMMARY

Cultural security represents a state of immunity of the society's culture, ensuring the prevention of religious and ethnic conflicts; the decline of the society's mentality, its social groups and the individual; the destruction of cultural heritage, as well as the further development of cultural self-consciousness of the nation.

The main problems of cultural security are the definition of its object and subject (*what* and *whom* to protect), the source of the threat (*from whom* or *from what* to protect) and the way of protection (*how* to protect). Globalization processes pose numerous theats to the cultural security. The main threats to cultural security in contemporary information society are: the introduction and promotion of anti-national values, the imposition of nonconstructive and false goals on the individual and the society. An efficient tool of neutralizing these threats is glocalization, i.e., the effective adaptation of globalization processes to the local conditions via using their innovative capacities in order to preserve and develop the national culture and identity.

The use of glocalization processes as a "smart power" for ensuring the cultural security is carried out by the nation state via the minutely elaborated cultural policy, the content of which is the stimulation of mass creation and dissemination of high culture models, and the tools are the legal, organizational, financial and other levers of managing the cultural sphere of society. Withal, the important issue is the definition of the optimum degree of government intervention in the process of cultural development.

ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԳԼՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ

Հանրապետության հրապարակը
«Թավշյա հեղափոխության» օրերին
Երևան, 2018 թ. մայիսի 2

«Շանթ-2018» ռազմավարական հրամանատարաշտաբային
զորավարժությունների շրջանակներում
ՀՀ անվտանգության խորհրդի նիստը
ՀՀ Վարչապետ, ՀՀ անվտանգության խորհրդի նախագահ
Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ

Երևան, 2018 թ. սեպտեմբերի 11

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը
իր օրհնությունն է բերում ՀՀ հարավարևմտյան
սահմանագոտու մարտական հենակետերում
հերթապահություն իրականացնող զինվորներին

Երևան, 2018 թ. հուլիսի 7

Հայրապետական Սրբատառ կոնդակով
որպես Հայոց բանակի պահապան հռչակված
Աշոտ Երկաթ թագավորի Սուրբ Խաչի տեղադրումը
ՀՀ ՊՆ վարչական համալիրում

Երևան, 2012 թ. մայիսի 18

ՀՀ ՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.
ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ՋՈՒ-ՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՕՐՅԱՅԻՑ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Երիտասարդության քաղաքական սոցիալականացման և ազգային ինքնության արդիականացման փոխպայմանավորվածության **հաստատութենական հիմքերի համալիր ուսումնասիրությունը** այն պրոբլեմն է, առանց որի հնարավոր չէ ՀՀ-ում ապահովել հոգևոր անվտանգություն և հաստատել ժողովրդավարական համախմբում: Ինչպես գրում է Ս. Հանտինգտոնը, «Համախմբված ժողովրդավարությունը միայն գյուղի, համայնքի կամ քաղաք-պետության ժողովրդավարություն չէ. դա ազգային պետության ձևավորման և հաստատման հետ սերտորեն կապված ժողովրդավարություն է: Ժողովրդավարությունը միայն խոսքի ազատություն, ընտրություններին մասնակցելու իրավունք չէ: Դա օրենքի իշխանություն է: Ժողովրդավարության հաստատած ազատությունը առանց պատասխանատվության մահանում է»[1]:

Հանտինգտոնի այս ելակետային մոտեցման համատեքստում ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում «թավշյա հեղափոխության» հաղթանակը ժողովրդավարական անցման ձգձգվածության հետևանք է, իսկ օտարումը, աղքատությունը, կոռուպցիան, արտագաղթը դարձել են ազգային անվտանգության համար սպառնալիք: Այս դիտանկյունից անհրաժեշտ է օբյեկտիվորեն վերլուծել ՀՀ-ում հոգևոր անվտանգության պրոբլեմները, քանի որ միայն այդպես է հնարավոր ազգ-պետության գործառման տիրույթներում վերաարժեքավորել քաղաքական իշխանության իրականացման մշակույթը՝ «թավշյա հեղափոխությունը» հիմնավորելով որպես քաղաքական փոփոխություն:

Հոգևոր անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ, ներառում է ազգային ինքնագիտակցությունը՝ արտացոլելով հասարակության կենսագործունեության ավանդույթները, նրա մշակույթը և պատմությունը, ինչպես նաև հասարակության բարոյաքաղաքական միասնության աստիճանը: Հոգևոր անվտանգության հիմքում դրված են պետական ազգային անվտանգությունն ապահովող բոլոր այն բարոյահոգեբանական և

[1] *С. Хантингтон.* Третья волна. Демократизация в конце XX века. Пер. с англ. Л. Ю. Пантиной. М., 2003, с. 120.

հայրենասիրական նորմավորված արժեքները, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է կառավարող ընտրանու քաղաքականության նկատմամբ ոչ միայն իր վստահությունն ու աջակցությունը, այլև պատրաստությունը պաշտպանելու իրեն և իր պետությունն ու պետականությունը: Քաղաքակրթության փորձը վկայում է, որ ազգերի և պետությունների դժբախտությունն սկսվում է այն ժամանակ, երբ քայքայվում է ժամանակի ընթացքում ձևավորված նրանց մշակութանորմատիվային և բարոյահոգեբանական համակարգի քաղաքական էությունը, երբ իշխանական հարաբերությունների ցածր մակարդակի լեգիտիմությունը օտարում և եզրահանում է հասարակությանը, քաղաքացուն և հատկապես երիտասարդությանը՝ տրոհելով (փոշիացնելով) ազգի ոգին և ազգի իշխանությունը:

Ըստ Ս. Հանտինգտոնի՝ ժողովրդավարության «երրորդ ալիքի» շրջանակում սոցիալ-քաղաքական արդիականացումը տեղի է ունենում անհավասար չափով, քանի որ «...արդի հասարակությունները կարող են իրար ավելի նման լինել, քան ավանդականները, երկու պատճառով: Նախ. արդի հասարակությունների միջև ավելի մեծ փոխազդեցությունը կարող է չծնել ընդհանուր մշակույթ, սակայն այն հեշտացնում է տեխնոլոգիաների, գյուտերի և կազմակերպվածքի փոխանցումը մի հասարակությունից մյուսին մի այնպիսի արագությամբ և աստիճանով, որոնք ավանդական աշխարհում հնարավոր չէին: Երկրորդ. ավանդական հասարակությունը հիմնված էր գյուղատնտեսության վրա, մինչդեռ արդի հասարակությունը հիմնվում է արդյունաբերության վրա, որը կարող է արհեստներից վերաճել դասական ծանր արդյունաբերության, իսկ այնուհետև՝ գիտութենահենք տեխնոլոգիաների և արտադրությունների»[2]: Այս դիտանկյունից, երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինքնությունը մարդու վարքահոգեբանական ունակությունն է խտացված ձևով արտահայտելու տարբեր մասնագիտական, սոցիալական, ազգային, լեզվական, քաղաքական, ռասայական, կրոնական և այլ խմբերին կամ հանրույթներին իր պատկանելությունը: Նման մոտեցումն անհրաժեշտ պայման է, որպեսզի փոփոխվող աշխարհում մարդը պահպանի իր տեսակի մրցունակությունն ու հոգևոր անվտանգությունը, քանի որ «մինչ մարդիկ հարաբերվում են շրջապատի մարդկանց հետ, նրանք այլ ելք չունեն, քան իրենց սահմանելու մյուսների հետ հարաբերությունների միջոցով և հիմնվելու նմանությունների ու տարբերությունների վրա: Ինքնությունը կարևոր է, քանի որ թելադրում է մարդու պահվածքը»[3]:

Ազգային ինքնությունը պատմության հոլովույթում ձևավորված և քաղաքական ժամանակի մեջ պարբերաբար կերպափոխվող սոցիալ-քաղաքական տեքստ է: Այն ներառում է ազգի ծագումը, զարգացումը, ազգային հոգեկերտ-

[2] *С. Хантингтон.* Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова. М., 2003, сс. 94–95.

[3] *С. Хантингтон.* Кто мы?: Вызовы американской национальной идентичности. Пер. с англ. А. Башкирова. М., 2004, с. 51.

վածքն ու պատմական հիշողությունը, ազգային խորհրդանիշներն ու սոցիոմշակութային ժառանգությունը, ինչպես նաև քաղաքական ինքնակազմակերպման և ինքնակառավարման արժեքային համակարգի այն հիմնարար բնութագրիչները, որոնք ձևավորում են քաղաքական ազգը: Վերջինս, միմյանց զուգամիտելով ռացիոնալը և իռացիոնալը, արդիականանում է միայն գոյություն ունեցող ազգ-պետության միջոցով. «Ազգայնականությունն ունի ինտեգրող քաղաքական ուժի դեր, եթե մի ժողովուրդ կամ ազգ պետք է հաստատվի ի հակադրություն մեկ ուրիշի: Ազգայնականությունը անձեռնմխելի լեգիտիմություն է ստանում այնտեղ, որտեղ ուղղված է ուրիշի գերիշխանությունից ազատմանը»[4]:

Որպես ինքնիշխանության վրա հիմնված երևույթ, ազգ-պետությունում գերակա է ընդհանուր մշակույթ, լեզու, էթնիկություն և կարծր պատմական հիշողություն ու մեծ ազդեցություն ունեցող մեկ ազգ, որը կառավարությունների լեգիտիմության և քաղաքական կայունության ապահովման երաշխիքն է[5]: Լինելով քաղաքական կազմակերպություն՝ ազգ-պետությունն ինքնիշխանություն է ապահովում թե՛ աշխարհագրական սահմաններում, թե՛ այլ ինքնիշխան պետությունների հետ հարաբերվելիս՝ կարևորելով ոչ միայն լեգիտիմության և արդյունքի կառավարման անհաղթահարելի զուգամիտումը, այլև մշակութաստեղծությունը՝ կառավարող ընտրանու իշխանության իրականացման մշակույթի ժողովրդավարացման համար: Ըստ Ս. Հանտինգտոնի՝ եթե ազգը պատրաստ չէ պատասխանելու մարտահրավերներին, անորոշությամբ հղի մեծ շեղումով փոփոխվում է նրա հոգևորի արժեքային առանցքը (միջուկը), որի պատճառով ազգը կա՛մ կորցնում է իր ինքնությունը և ձուլվում, կա՛մ դրսևորում է արդիականանալու քաղաքական կամք՝ իր քաղաքակրթական ինքնատիպությունը կենսունակ (մրցունակ) պահելու նպատակով, կա՛մ էլ պարբերաբար հայտնվելով անորոշությունների մեջ՝ չի կարողանում ինքնակազմակերպվել իր **«անփոփոխ միջուկի» շուրջ**՝ հանուն ժողովրդավարական համախմբման[6]: Ինչպես տեսնում ենք, ազգային ինքնության գիտակցված և բնականոն արդիականացումը ազգ-պետության կառուցման և ամրապնդման համար հզոր ռազմավարական ռեսուրս է: Ավելին. նրա անտեսումը խոչընդոտում է ազգային անվտանգության հիմնախնդիրների, հատկապես՝ հոգևոր անվտանգության ապահովմանը:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի և հայության համար, երբ սոցիալ-քաղաքական համակարգի կերպափոխումը հղի է տարաբնույթ անորոշություններով, երբ արմատապես փոխվել է ինքնության արդիականացման արտաքին միջավայրը, հոգևոր անվտանգության ապահովման պրոբլեմի ուսումնասիրությունն ունի և՛

[4] *У. Альтерматт*. Этнонационализм в Европе. М., 2000, с. 44.

[5] Տես *Iain McLean, Alistair McMillan*. The Concise Oxford Dictionary of Politics. New York, 2009, P. 360:

[6] Տես «Многоликая глобализация». Под ред. П. Бергера и С. Хантингтона. Пер. с англ. В. В. Сапова. М., 2004, с. 90:

գիտատեսական, և՛ գործնական նշանակություն: Հենց դա էլ հիմք է դառնում երիտասարդության քաղաքական սոցիալականացումը դիտելու որպես հոգևոր անվտանգության ապահովման համակարգի արդիականացման եղանակ: Կարծում ենք, որ այս մոտեցման շրջանակում էլ որոշիչ է Հայաստանի «թավշյա հեղափոխությունից» հետո երիտասարդության քաղաքական սոցիալականացման արժեքաբանությունը: Այն, որ հայ երիտասարդությունը պատրաստ է պայքարելու հանուն իր ազատության և գոյատևման, ապացուցում են Արցախյան հերոսամարտը, 2016 թ. ապրիլի 2–6-ը Արցախի վրա Ադրբեջանի ձեռնարկած լայնածավալ հարձակմանը դիմակայելու, ինչպես նաև «թավշյա հեղափոխության» գլխավոր դերակատարի գործառույթ ստանձնելու փաստերը:

Հոգևոր անվտանգության խնդիրներով պայմանավորված՝ մարդն արժեքավորում է իր անհատական ինքնությունը՝ այն գիտակցելով որպես ինքնապահպանման, հանրության մեջ գտնվելու, համակեցություն մշակելու, զարգացման գոյաբանությունն ապահովելու, եզրահանության իրավիճակից դուրս գալու և ավանդույթների կերպափոխում ձեռնարկելու գործընթաց: Հենց այս մոտեցմամբ էլ Կ. Յունգը հիմնավորեց մարդու անգիտակցական միտքը, ինչպես նաև նրա մարմինը՝ որպես անցյալի հիշողությունների և հետքերի պահեստարան[7]: Ըստ այդմ էլ՝ մարդու էթնիկական նախակերպարը (նախատիպը) ունի բարոյահոգեբանական և սոցիալ-քաղաքական արժեքային ծանրաբեռնվածություն, որի բազմամակարդակության հիմնավորմամբ Կ. Յունգը եզրակացրել է, որ ազգային բնավորության գիտակցականի կողքին գոյություն ունի նաև անգիտակցականը: Դրանց վրա հիմնված անհատականի ու սոցիալականի զարգացման մեջ գերիշխող սոցիալականը ենթադրում է ընդհանուր փորձի, տեղեկատվության ընդհանուր աղբյուրների միջոցով իրականացվող սոցիալականացում:

Ակնհայտ է, որ Հայաստանի «թավշյա հեղափոխությունը» հնարավորություն է տալիս վերանայելու հայ հասարակության հոգևոր անվտանգության ապահովման հրամայականները՝ արդյունքի կառավարման և ժողովրդավարության որակի հաստատումը կարևորելով որպես համագործակցության մշակույթի գործառման պայման: Փորձելով հասկանալ, թե ով է ինքը, մարդը հարաբերվում է ուրիշ «Եսի» հետ և ըստ այդմ ընդարձակում իր ճանաչողության ու իմացության տիրույթը՝ ստեղծելով համապիտանի մշակույթ: Փաստորեն, հոգևոր անվտանգությունը, վերոնշյալ օբյեկտիվ գործոնների հետ մեկտեղ, առաջին հերթին իմացազգայական և մտածելակերպային զգացողություն է: Ըստ դրա էլ անձը, գիտակցելով իր քաղաքական և քաղաքացիական ազատության աստիճանը, գնահատում է իր էթնոազգային պատկանելությունն «այս» կամ «այն» խմբին: Այս դիտանկյունից հենց ծագման ընդհանրության՝ հավատի, մշակույթի, լեզվի, սովորությունների, ավանդույթների, առասպելների և խորհրդանիշների ընդունման ազդեցությամբ էլ

[7] Տես *Կ. Գ. Юнг.* Архетипы коллективного бессознательного. Перевод А. М. Руткевича, 2014 (http://wanderer.org.ua/book/psy/jung/ob_arhetipah.html):

տեղի է ունենում անհատի սոցիալականացումը[8]: Սակայն, եթե «Ես»ի և «Մենք»ի սոցիալականացումը չի հենվում պատմականորեն ձևավորված իր արժեքաշահային համակարգի վրա, ապա ազգը և հասարակությունը քայքայվում են: Հետևաբար՝ ազգային նպատակները և ռազմավարական տեսլականը զարգացման հարացույցում ընդգրկելուց առաջ պետք է հստակ կերպով պատասխանել **«Ո՞վ ենք մենք»** հարցին[9]: Իսկ «Մենքը» հոգևոր անվտանգության ապահովման նպատակով պետք է հաղորդակցվի և համագործակցի այլ խմբերի հետ: Որպես ազգի անցյալի, ազգային կերպարի, նկարագրի ու կեցության, հոգեդրվածքի, ինչպես նաև ճանաչողության և իմացության ամբողջություն հոգևոր անվտանգությունը համակարգում է.

- տվյալ հասարակության գոյաբանության փորձը, որը **անցյալ–ներկա–ապագա** եռաչափության մեջ պատմության կարևորագույն իրադարձությունների ընկալման և արժեքների վերարտադրման հարատև գործընթաց է,
- պետութենաշինության մշակույթի զարգացման շնորհիվ ձևավորված և համագործակցության համար իրական պայմաններ ապահովող ստեղծարար գործունեությունը՝ օտարման ու եզրահանման չեզոքացմամբ,
- պետության և հասարակության անվտանգ ապագայի կանխատեսումն ու ռազմավարական տեսլականի մշակումը՝ ապահովելով ազգի ժողովրդավարական համախմբման և քաղաքացիավարական պատասխանատվության զարգացումը: Այս համատեքստում հոգևոր անվտանգության ապահովումը ոչ միայն պատասխան է նոր մարտահրավերներին, այլև կարող է իր տեսակի մրցունակությունն ապացուցելու համար ձևավորել նոր որակի համագործակցության մշակույթ: Փաստենք, որ պատմության մեջ կան բավական մեծ թվով օրինակներ, երբ պետությունները իրադարձությունների բերումով ի վիճակի չեն եղել պահպանելու իրենց հոգևոր անվտանգությունը, ինչին մշտապես հաջորդել է քաղաքական քարտեզից այդ պետության անհետացումը: Ասվածի վառ օրինակ է պատմության թատերաբեմից ԽՍՀՄ անհետացումը:

Ազգային ինքնության ձևավորման գործում կարևոր դերը պատկանում է ընտրախավին, սակայն կարող ենք պնդել, որ արդի տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների և քաղաքական զարգացումների պայմաններում նրա գլխավոր կրողը քաղաքականապես սոցիալականացված երիտասարդությունն է: Հենց երիտասարդությունն է, որ իրեն նետված մարտահրավերների պայմաններում վերաարժեքավորում է **անցյալի–ներկայի մասին** ընդհանուր պատկերացումները, ինչպես նաև անվտանգ ռազմավարական ապագայի համար պատասխանատվության զգացումը: Իսկ երիտասարդության քաղաքական սոցիալականացումն արդյունավետ է, եթե շարու-

[8] Տես *Г. Алмонд, С. Верба*. Гражданская культура. Политические установки и демократия в пяти странах. Пер. с англ. Е. Генделя. М., 2014, с. 145:

[9] Տես *С. Хантингтон.* Кто мы?: Вызовы американской национальной идентичности, с. 31:

նակական բարեփոխումների և մարդկային կապիտալի կառավարման հիմքում դրվում է կապիտալի **մարդկայնացման (հումանիզացման) քաղաքականությունը: Այն ենթադրում է** հայ հասարակությունում ժողովրդավարական արժեքների գործառման այնպիսի համակարգի ներդրում, որի շրջանակներում կարելի է յուրացնել զարգացած երկրների մասնակցային մշակութային նորմերը, կարգավիճակային վարքի պահանջները և քաղաքացիական համագործակցությունը: Փաստորեն, **ՀՀ-ում «թավշյա հեղափոխությունը»,** մասնակցային ժողովրդավարության զարգացման միջոցով ակտիվացնելով երիտասարդությանը, բարձրացրել է նրա մրցակցային պատասխանատվության շեմը՝ հանրային քաղաքականության մարդկայնացման համար:

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

ՀՀ-ում «թավշյա հեղափոխության» հաղթանակից հետո ծավալված սոցիալ-քաղաքական կերպափոխումները պահանջում են մարդկայնացման նոր նախագիծ, համաձայն որի՝ կենսագործունեության կազմակերպումը և սոցիալականացումը պետք է կատարվեն սոցիալական խավերի միջև համագործակցության մշակույթի զարգացման միջոցով: Այդ առումով ուշագրավ է հոլանդացի տնտեսագետ Յան Տինբերգենի մոտեցումը, ըստ որի՝ հանրային բարեկեցության և պետության անվտանգության կարողությունների արդիականացման համար անհրաժեշտ է, որ մարդկային կապիտալի կառավարումը հիմնվի **ազգային հոգևոր առաջնայնությունների, մրցունակության և ազգի բնական մարդկային ներուժի փուլային զարգացման ռազմավարության հիման վրա[10]:**

Այս համատեքստում անհրաժեշտ է թվում մշակել ՀՀ նոր պետական քաղաքականություն, որը պետք է նպատակաուղղված լինի մենաշնորհի և գերշահույթի մերժմանը՝ ապահովելով **«բարեգործության» սկզբունքից անցում «համագործակցության» սկզբունքի: Դրան զուգահեռաբար** նոր սերնդի սոցիալականացումը պետք է ուղեկցվի պատմական հիշողության վերաիմաստավորմամբ և պատմական անցյալի օբյեկտիվ գնահատմամբ: Այլ կերպ ասած՝ հոգևոր անվտանգության ապահովումը ներառում է **ինքնաճանաչողություն,** հասարակական-քաղաքական երևույթները փոխադարձ կապի մեջ ընկալելու և համակեցությունը պահպանելու ունակություն, ինչպես նաև նյութականի և հոգեմտավորի փոխներդաշնակման միջոցով ազգային արժեքների մրցունակությունը բարձրացնելու «Եսի» կարողություն: Ըստ պատմական հիշողության գիտակ ֆրանսիացի Պ. Նորայի՝ ազգային ինքնության կարևոր բաղադրիչ է միասնության գաղափարի ամրապնդմանը նպաստող պետականորեն տոնական և հիշատակման օրերի նշումը[11]: Ակնհայտ է, որ ժամանակային պարույրում միայն այդ ձևով կարելի է կանխել պատմական

[10] Տես *Я. Тинберген*. Пересмотр международного порядка. М., 1980; *Я. Тинберген, Д. Фишер*. Война и благоденствие. Интеграция политики обеспечения безопасности в социально-экономическую политику. М., 1988, сс. 85–88:

[11] Տես *П. Нора, М. Озуф, Ж. де Пюимеж, М. Винок*. Франция-память. Пер. с фр. Д. Р. Хапаевой. СПб., 1999, сс. 15–60:

հիշողության մեջ ապակառուցողականություն մակածող կոլեկտիվ գիտակցականի և անգիտակցականի խզումները, որոնք հոգևոր անվտանգության ապահովման գործում ստեղծում են քաոս:

Հայ երիտասարդի պատմական հիշողության մեջ որոշիչ տեղ ունի Հայոց ցեղասպանությունը: Կարծում ենք, որ այժմ հայ երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործում տեղի են ունենում արմատական փոփոխություններ ցեղասպանության զոհի բարդույթից ազատվելու, թույլ ու անօգնական ներկայանալու, հովանավորներ փնտրելու քաղաքականությունից հրաժարվելու և համամարդկային մարդասիրական գործունեություն վարելու ուղղությամբ: Ակնհայտ է, որ «թավշյա հեղափոխությունից» հետո երիտասարդության սոցիալականացումն ունի գրեթե անսահմանափակ համացանցային տարածությունում արժեքային բազմաչափության փաստարկման խնդիր, քանի որ համացանցում առավելապես տարածվում ու մեծ լսարանի են արժանանում բացասական, ագրեսիվ տեղեկությունները, որոնց տարածումն էլ, բնականաբար, սոցիալականացման վրա գործում է բացասական ազդեցություն: Համացանցում շփումների, տեղեկատվության, հնարավորությունների չափազանց դյուրին մատչելիության հետևանքով երևակայական (վիրտուալ) իրականությունը դառնում է նախընտրելի, ինչի հետևանքով սրվել է թվային միջավայրի զարգացման և անվտանգության ապահովման պրոբլեմը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հոգևոր անվտանգության ապահովման գործում առավել քան առանցքային է «թավշյա հեղափոխության» շնորհիվ ձևավորված կառավարող վերնախավի դերը: Լինելով քաղաքական որոշումների ընդունման, իրագործման և վերահսկման գլխավոր դերակատար՝ ազգային վերնախավերն են պատասխանատու պետության պաշտպանական քաղաքականության, ազգային ավանդույթների արդիականացման, ինչպես նաև համագործակցության մշակույթի զարգացման համար: Այս դիտանկյունից, ՀՀ-ում անհրաժեշտ է դաստիարակել այնպիսի վերնախավ, որն ի վիճակի լինի ցուցաբերելու բարձր պրոֆեսիոնալիզմ և, հրաժարվելով մեխանիկական արևմտականացումից, նպատակադրված կերպով վարի բնաշխարհիկացման *(Indigenization)* քաղաքականություն[12], այսինքն՝ յուրային մշակութային հիմքերը նորովի մեկնելու միջոցով ապահովի հոգևոր անվտանգություն:

Քաղաքակրթությունների զարգացման փորձը վկայում է, որ եթե հոգևոր անվտանգության համակարգի բնականոն արդիականացում տեղի չի ունենում, ապա «ես» և «մենք» բևեռները եզրահանվում են և, կորցնելով իրողության մեջ կատարվող սոցիալ-քաղաքական փոփոխությունները գնահատելու ունակությունը, սկսում են կատարել հոգևոր անվտանգության համար վտանգավոր ուծացման (ասիմիլյացիոն) կառավարում: Ըստ այդմ՝ հայ հասարակության հոգևոր անվտանգության ապահովման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

[12] Տես *С. Хантингтон.* Столкновение цивилизаций, с. 192:

1. քաղաքական և տնտեսական վերնախավերի միջև «համաձայնություններ» կնքել՝ հիմնված նոր հանրային կառավարման սկզբունքների ներդրման վրա,
2. քաղաքացիական հասարակության հաստատությունները՝ որպես հոգևոր անվտանգության ապահովման պատասխանատուներ, պետք է վարեն գործունեություն՝ հանրային ու խմբային շահերի զուգամիտմամբ,
3. դեպի տարբեր քաղաքակրթություններ և աշխարհաքաղաքական կենտրոններ կողմնորոշված խմբերն ու անհատները արդի մարտահրավերներին պատասխանելու համար պետք է ոչ թե մեխանիկորեն կողմնորոշվեն դեպի այդ կենտրոնները, այլ ինքնորոշվելով մշակեն ազգակենտրոն ու պետութենակենտրոն գործողությունների համակարգ, ընդսմին այդ գործողությունների կատարման համար որոշիչ է ՀՀ – Սփյուռք – ԱՀ ցանցային համագործակցությունը: Դա կստեղծի բարենպաստ պայմաններ, որպեսզի Սփյուռքի հայ գործարարները ՀՀ-ում կատարեն ներդրումներ: Ընդսմին նրանք պետք է **բարեգործից** վերածվեն **ներդրողի:** Նման պետական քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ է ՀՀ-ում հստակեցնել օրենսդրական դաշտը, հակամենաշնորհային քաղաքականության և **պետություն–գործարար հարաբերությունների հաստատութենացման միջոցով** ստեղծել հավասար մրցակցային պայմաններ, ինչի շնորհիվ ոչ միայն կնվազեցվեն կոռուպցիան և նեպոտիզմը, այլև կիրականացվի կյանքի որակի ու մակարդակի բարձրացման քաղաքականություն: Հայության միավորումը և **բարեկեցիկ, կայուն զարգացող և անվտանգ ապագա ունեցող Հոգևոր Հայաստանի ստեղծումը** հնարավոր են միայն հոգևոր անվտանգության ապահովման պայմաններում:

«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԳԱՂԱՓԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՔ

Անցյալ – ներկա – ապագա եռաչափության մեջ արդիականացող հայ ազգային ինքնության հիմքի վրա հայ մեծերը, ցանկանալով պետություն չունենալու պայմաններում ապահովել աշխարհով մեկ դեգերող և հայրենազուրկ հայ մարդու հոգևոր անվտանգությունը, ստեղծել են «Հոգևոր Հայաստանի» լուսավոր կերպարը. «Հայության հավաքում կամ «հայության կազմակերպում» գաղափարական իմաստով. ահա թե ինչ եմ ես հասկանում «Հոգևոր Հայաստան» ասելով: Դա այն կուլտուրան է, կուլտուրապես կազմակերպված այն ժողովուրդը, որի գալուն մենք կուզեինք հավատալ: … Ազգը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կապով: Պետք է, բացի արտաքին հնարավորությունից, լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց Համախմբումը ազգ է դարձնում»[13]:

[13] *Վահան Տերյան,* Երկեր (բանաստեղծություններ, գրականագիտական հոդվածներ, նամակներ): Առաջաբանը՝ Է. Մ. Ձրբաշյանի: Ե., 1989, էջ 336–337:

Ելակետ ընդունելով հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանի այս և հայ այլ մեծերի նմանօրինակ մոտեցումները՝ կարող ենք հիմնավորել, որ հայ գաղափարական «Եսի» արարման մեխանիզմի համակարգումն սկսվել է հայկական ժայռապատկերներից, մաշտոցյան այբուբենից, Քերթողահոր «Պատմությունից», ազգային էպոսից, Նարեկացու «Մատյանից», Շնորհալու «Ողբից», Մոմիկի խաչքարերից, ապա շարունակվել Ռաֆֆու ու Մուրացանի պատմավեպերում, Ռափայել Պատկանյանի, Հովհաննես Թումանյանի, Եղիշե Չարենցի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի ստեղծագործություններում, այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր հիշում են, որ իրենք **հավատի, արդարության, յուրօրինակության** կրողներ են, այն է՝ **ՀԱՅ,** իսկ իրենց հայրենիքը՝ **ՀԱՅՔ,** այսինքն՝ **հավատի, արդարության, յուրօրինակության, քերթության վայր**: Ասվածի առումով ուշագրավ են Մ. Խորենացու ազգային գոյաբանությունը բյուրեղացրած Գ. Նարեկացու մոտեցումները, որոնք դիտում ենք որպես հայկական քաղաքակրթության կենսունակության աղբյուր[14]:

Ըստ երևելի այրերի՝ «Հոգևոր Հայաստանի» գործառման կարևորագույն նախապայմանը միայն նյութական և հոգեմտավոր արժեքների փոխներդաշնակման ճանապարհն է, ինչով երկրի բնական տարածքն ի զորու է վերածվելու Հայրենիքի, իսկ պետությունը՝ անվտանգության ապահովման երաշխավորի: Այս դիտանկյունից հայ իրականության սոցիալ-քաղաքական արդիականացման հիմնախնդրում վճռորոշ գործոններ են **հայկական պետության և հայոց բանակի հզորացումը, առաքելական եկեղեցու մարդակենտրոնությունը և երիտասարդության շրջանում ազգային լեզվի պահպանման ու օգտագործման կարևորումը:** Այստեղ որոշիչ տեղ ու դեր է վերապահվում ռացիոնալի և իռացիոնալի միասնությանը, երբ Հայոց «Եսի» նյարդային համակարգի ուժը պատմական դրսևորում է ունենում, մասնավորապես՝ ճգնաժամային պայմաններում, երբ նրա մտավոր եռանդը կարողանում է ապահովել անվտանգության հիմնախնդիրների արագ լուծում (Ջիրավ, Ավարայր, Սարդարապատ, Շուշի…): Այս առումով էլ համակարգելով հայ մշակութային տեքստի քաղաքական էությունը՝ եզրակացնում ենք, որ ազգի հոգևոր անվտանգության ապահովման ակնկալիքներով դարերի մեջ հայ ռազմավարական ընտրախավի տաղանդով (Մաշտոցից մինչև Սևակ) հեղինակված և մեր ջանքերով համակարգված է հայ ոգու՝ «Հոգևոր Հայաստանի» Սահմանադրությունը, որի սկզբունքներն են՝ **ազատ անհատ, անկախ հայրենիք, արդարադատ պետություն, պատիժ չարին, ոգու հաղթանակ՝ հանուն Աստծո և հանուն մերձավորի:**

«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ազատ անհատ: Աստծո տաճար դարձած նրա ոգուն բնորոշ են.

ա) անսահման հարատևող՝ իր արարման և ազատության հավատով հագեցած ինքնարժեքավորումը, այսինքն՝ հավատն առ Աստված և իր էության պահպանումը,

[14] Տես *Մ. Մարգարյան, Մ. Զաքարյան,* Նարեկյան մշակույթը որպես հայ ինքնության անվտանգության ապահովման համակարգ: «Հանրային կառավարում», 2009, հմ 2:

բ) անսահման հարատևող ինքնատիպ հոգևոր-մշակութային արժեքների արարումը՝ հանուն մերձավորի, հասարակության, աշխարհի, այսինքն՝ էությունդ արարելն է և արդարամիտ լինելը:

Ազատ, անկախ հայրենիք: Հայրենիքը կենսաուժ է, ոգին՝ կենարար պահելու քերթության վայր: Քերթել քրիստոնեաբար, ոգեշահ արարմամբ օգտակար լինել Հայրենիքին–Պետությանը–Մարդկությանը. սա է հայ մարդու հոգևոր անվտանգության ապահովման արժեքաբանությունը:

Արդարադատ պետություն: Պետությունը անհատի և հասարակության անվտանգության ապահովման պատասխանատուն է: Հայը պետություն ասելով հասկանում է նախ արտաքին ավտանգություն և ուրիշների հետ հարաբերությունների պահպանում *մոդուս վիվենդիի* կանոններով, այնուհետև՝ հասարակական դաշինքի գոյություն:

Պատիժ չարին: Չարը պատժելի է հավատի, արդարություն քերթելու ձգտման յուրօրինակ ունակությամբ, ասել է թե՝ ոգեղենությամբ: Անհրաժեշտ է վերացնել չարի պատճառը, որը աշխարհը միաչափ, միայն նյութականի մեջ տեսնելու արդյունք է: Չարին հաղթում են արարմամբ. դրանով ոգին ավելի է գոտեպնդվում, իսկ ոգու կրողը՝ ավելի հզորանում:

Ոգու հաղթանակ: Երանելի է նա, ով իր հավատով, արդարությամբ և յուրօրինակ ձևի արարմամբ հաղորդակցվում և համակեցություն է պահպանում իր ներքին ու արտաքին աշխարհների հետ: Այսպես է հնարավոր հաղթահարել քո (և ուրիշների) ոգու մեջ տեղ գտած նյութապաշտությունն ու անհանդուրժողականությունը՝ բոլորին գերազանցել ոգեղենականության քերթության ոգով:

Ընդհանրացնենք. «Հոգևոր Հայաստանի» գործառման գերակա հատկանիշն ազգային համերաշխությունն է, որի դրսևորման լավագույն ձև կարող է լինել ազգի և պետության պաշտպանական հզորությունը առավելագույն արդյունավետությամբ համախմբող հոգևոր անվտանգության ապահովումը: Դրա հիմքը իրավատեր, մտավոր, հոգևոր և ֆիզիկական առումներով առողջ, զենք կրելու ցանկություն ունեցող զինավարժ քաղաքացի-զինվորն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ հոգևոր անվտանգության ապահովման հրամայականներն են, նախ՝ սոցիալ-քաղաքական կերպափոխումների վերաարժեքավորումը, ապա՝ քաղաքական զարգացման ճգնաժամների հաղթահարման նպատակով սեփականության լեգիտիմության ապահովումը, նպաստումը սոցիալական երկխոսությանը, կրթության նորամուծացումը, հասարակության ապրելակերպի մարդկայնացումը, սերունդներին պատմության ներկայացումը **անցյալ–ներկա–ապագա** եռաչափության մեջ, քաղաքական և քաղաքացիական մշակույթի փոխհարաբերությունների միջոցով ազգային ինքնագնահատականի բարձրացումը:

Վերը շարադրվածի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում.

ա) հոգևոր անվտանգության ապահովման քաղաքականության և երիտասարդության քաղաքական սոցիալականացման արդյունավետությունը ուղիղ համեմատական է «Մենք»–«Նրանք» ցանցային հաղորդակցման միջոցով սոցիալ-քաղաքական արդիականացմանը և ազգային մրցունակության մեծացմանը,

բ) երիտասարդության քաղաքական սոցիալականացման ընթացքում անհրաժեշտ է դաստիարակել նոր սերնդի վերնախավ, որը, նպատակադրված կերպով բարելավելով ժողովրդավարության որակը, կվարի ազգային ինքնության արդիականացման վրա հիմնվող անվտանգային քաղաքականություն՝ բարձրացնելով անվտանգ ապագայի ռազմավարության մշակման և իրականացման համար իր պատասխանատվության մակարդակը,

գ) աշխատանքի միջազգային բաժանմանը մրցունակ կերպով մասնակցելու համար բարձրացնել ազգային կապիտալի մարդասիրության մակարդակը և կյանքի որակը,

դ) մրցունակությունն ու հոգևոր անվտանգությունը զարգացնելու նպատակադրմամբ անհրաժեշտ է ապահովել Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և Արցախի Հանրապետության հայության միասնականությունը:

Արված եզրակացության շրջանակներում առաջարկում ենք.

1. Երիտասարդության քաղաքական սոցիալականացման քաղաքականություն մշակելիս հիմնվել կառավարման որակի բարձրացման, երիտասարդության բազմադերային սոցիալականացման և մրցակցային մասնակցության վրա:

2. «Թավշյա հեղափոխությունը» իր խարիզմատիկ լեգիտիմությունը պահպանելու համար պարտավոր է երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործառույթն իրականացնել ժողովրդավարության որակի բարձրացման պայմանով:

3. Արդի տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների անմիջական ազդեցության հետևանքով սոցիալականացման գործում գերակա է սոցիալ-քաղաքական համակարգի հաստատությունների միջև կուտակված տեղեկույթի չպատվիրակված **վերլուծության ապահովումը**:

«Թավշյա հեղափոխությամբ» ստեղծված նոր իրողություններում երիտասարդության քաղաքական սոցիալականացման քաղաքականությունը պետք է կարևորի սոցիալական ցանցային տարածության ընդարձակման անհրաժեշտությունը: Այս դիտանկյունից հարկ է վերաարժեքավորել հոգևոր անվտանգության վերաբերյալ եղած գիտելիքները՝ հիմնվելով **ազգային ոգին** արտահայտող լեզվամտածողության, իմացաբանական, ճանաչողական, առասպելային, խորհրդանշանային, տեղեկատվահաղորդակցային մեխանիզմների բնականոն արդիականացման վրա:

4. Երիտասարդության քաղաքական սոցիալականացման արդյունավետությունը հիմնված է քաղաքացիական կրթության վրա, որը, ներառելով քաղաքացիական գիտելիքները, հմտությունները և արժանիքները, հիմնվում է ինքնակարգապահության, հանդուրժողության և այլակարծության վրա:

ПОЛИТИЧЕСКАЯ СОЦИАЛИЗАЦИЯ МОЛОДЕЖИ КАК ПРОЦЕСС МОДЕРНИЗАЦИИ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ: ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

М. М. МАРГАРЯН, доктор политических наук, профессор, заведующая кафедрой политического управления и публичной политики Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

В статье обосновывается подход, согласно которому духовная безопасность – это многослойный культурно-цивилизационный текст, сформировавшийся в ходе исторического развития и периодически модернизирующийся в разрезе политического хода времени. В частности, в процессе глобализации и локализации, а также развития новых информационно-коммуникационных технологий духовная безопасность трансформирует социально-политическое пространство и время, с одной стороны, подразумевая новую ценностную систему политической социализации молодежи, а с другой – модернизацию национальной идентичности.

В процессе модернизации национальной идентичности и политической социализации молодежи ключевым фактором является обеспечение духовной безопасности. Данный подход обоснован императивами пересмотра после «бархатной революции» в Армении ценностной системы первого этапа социально-политической модернизации (линейной либерализации) и управления результатом.

С данной точки зрения обосновано эффективное функционирование нации-государства как системы обеспечения духовной безопасности Армении и внедрения качественно новых ценностей консолидации Армянской диаспоры.

Предлагается положить в основу обеспечения духовной безопасности принцип нового гуманизма, согласно которому духовная безопасность должна обеспечиваться путем развития сотруднической культуры, а также исключения сверхприбылей и монополий. С этой целью разработана конституция «Духовной Армении», зиждущаяся на принципах «свободы личности», «независимости родины», «верховенства закона», «наказания зла», «торжества духовности».

POLITICAL SOCIALIZATION OF YOUTH AS A PROCESS OF MODERNIZATION OF THE NATIONAL IDENTITY: MENTAL SECURITY

M. M. MARGARYAN, Doctor of Political Science, Professor, Head, Chair of Political Governance and Public Policy, Public Administration Academy of the Republic of Armenia

SUMMARY

This article substantiates the approach, according to which the mental security is a multilayer cultural-civilizational text, formed in the process of historical development and regularly modernizing from the perspective of political course of time. Particularly, in the process of globalization and localization, as well as development of new information-communication technologies the mental security transforms social-political space and time, presuming, on the one hand, a new value system of political socialization of youth and, on the other hand – modernization of the national identity.

A key factor in the process of modernization of the national identity and political socialization of youth is the importance of ensuring mental security. This approach is grounded by the imperatives to review the value system of the first stage of social-political modernization (linear liberalization) and results management after the “Velvet Revolution” in Armenia.

In these terms, the effective functioning of a nation-state as a system of ensuring Armenia’s mental security and introducing qualitatively new values of the consolidation of the Armenian Diaspora is grounded.

It is suggested that ensuring mental security be based on the principle of new humanism, according to which mental security should be provided by the development of cooperative culture, as well as the exception of excess profits and monopolies. For this purpose, the Constitution of the “Spiritual Armenia” has been developed based on the principles of “freedom of the individual”, “independence of the homeland”, “rule of law”, “punishment of the evil”, and “victory of the spirituality”.

ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ԱՊԱՐԱՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՈՇ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի հայցորդ, ՊԱՀՀ-ի ավագ սպա, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի պատասխանատու

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. «ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ԱՊԱՐԱՏՆԵՐԻ» ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տեխնոլոգիաների և ռազմական տեխնիկայի զարգացման և դրանց նկատմամբ հետաքրքրության մեծացման համատեքստում վերջին շրջանում մեր հանրության լուրջ ուշադրության առարկա են դարձել հեռակառավարվող անօդաչու թռչող ապարատները (ՀԿԹԱ-ներ): Դրանց հնարավորությունների և կիրառման հետևանքների մասին պատկերացումներն ավելի առարկայական դարձան հատկապես Ապրիլյան պատերազմի ժամանակ, երբ հակառակորդը կիրառեց այդպիսի միջոցներ: Դրան հաջորդեցին հայ հանրությունում ծավալված մի ամբողջ շարք քննարկումներ, հատկապես՝ ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում, հնչեցին ինչպես մասնագիտական գնահատումներ, այնպես էլ ոչ մասնագիտական որակումներ ու կարծիքներ: Սույն հոդվածը նպատակ ունի հեռակառավարվող ԱԹԱ-ների վերաբերյալ տրամադրելու ստույգ տեղեկույթ, ինչը հնարավորություն կտա խուսափելու ապատեղեկույթից, չդառնալու տեղեկութային ահաբեկչության զոհ և գիտելիքի դիրքերից քննադատաբար ընկալելու զանազան ասեկոսեներն ու հակառակորդի տեղեկատվական գրոհները:

«Անօդաչու թռչող ապարատ» (ԱԹԱ՝ *Unmanned Aerial Vehicle, UAV, беспилотный летательный аппарат, БПЛА)* տերմինն այսօր համարվում է հնացած ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Ռուսաստանում: 2009 թվականից դրա փոխարեն ԱՄՆ-ում գործածում են «հեռակառավարվող թռչող ապարատ» (ՀԿԹԱ՝ *Remotely Piloted Aircraft, RPA)* տերմինը, քանի որ հին տերմինն ստեղծում էր կառավարման և տեղեկույթի մշակման պրոցեսում մարդու մասնակցության կարիքը չունեցող լիովին ինքնավար համակարգի մասին կեղծ պատկերացում[1]: 2015 թվականից Ռուսաստանում ԱԹԱ-ի փոխարեն գործածման մեջ են դրվել երկու տերմին՝ «անօդաչու ավիացիոն համակարգ» *(беспилотная авиационная система)* և «հեռակառավարվող ավիա-

[1] Տես *С. Корчагин*. Стратегические дистанционно пилотируемые авиационные системы США. «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2017, № 8:

ցիոն համակարգ» *(телеуправляемая авиационная система):* Առաջինը օդանավ է և նրա հետ կապված տարրեր, որոնք շահագործվում են առանց օդաչուի: Երկրորդը տարրերի համալիր է, որը ներառում է՝ հեռակառավարվող օդանավ, դրան կառավարող օպերատորի կայան, կառավարման ու վերահսկման անհրաժեշտ կապուղիներ, ինչպես նաև համակարգի այլ տարրեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել թռիչքի ընթացքում ցանկացած պահի[2]: Ստորև կօգտագործենք «հեռակառավարվող թռչող ապարատ» տերմինը:

ՀԿԹԱ-ների ստեղծումը հնարավոր դարձավ էլեկտրականության և ռադիոյի հայտնագործումից հետո[3]: 1899 թ. հայտնի ֆիզիկոս և գյուտարար Նիկոլա Տեսլան Նյու Յորքում ցուցադրում է իր ստեղծած ռադիոկառավարվող նավակը: 1900 թ. ԱՄՆ-ի ռազմական գերատեսչության ֆինանսավորմամբ գյուտարար Չառլզ Քետերինգն ստեղծում է անօդաչու թռչող ապարատ, որը բարձրանում էր օդ և ժամացույցի մեխանիզմի կիրառմամբ որոշակի ժամանակ անց դեն նետում թևերը և ընկնում թշնամու վրա: Այս ապարատին պայթուցիկ հավելելու ուղղությամբ աշխատում էին նաև գյուտարարներ ամերիկացի էլմեր Սպերին և բրիտանացի Արչիբալդ Լոուն, որոնցից առաջինը նաև հոլակային կողմնացույցի, իսկ երկրորդը՝ հեռակառավարվող հրթիռի ապագա ստեղծողներն էին[4]:

Գերմանիայում ՀԿԹԱ-ներ ստեղծվում են 1920-ական թվականներին[5]:

Ամերիկյան «Քուրտիս էֆ5էլ» երկկենցաղ ՀԿԹԱ-ն 1924 թ. կատարում է առաջին լիովին ռադիոկառավարվող թռիչքը: 1933 թ. բրիտանացի ռազմական ճարտարագետներն ստեղծում են «Դիէյչ-82Բի Քուին Բի» ՀԿԹԱ-ն, որը շուրջ մեկ տասնամյակ կատարում է ուսումնավարժական շարժական օդային թիրախի դեր, ընդսմին եթե կուրսանտները չէին կարողանում խոցել ՀԿԹԱ-ն, այն վերադառնում էր ելման կետ և կրկին օգտագործվում[6]:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ակտիվորեն կիրառվում են հարվածային ՀԿԹԱ-ներ. գերմանական «Ֆաու-1» և «Ֆաու-2» հրթիռները՝ լիցքավորված պայթուցիկով, «Հենսչել էյչէս-293» և «Ֆրից Իքս» ռումբերը, «Էնզիան» զենիթային ՀԿԹԱ-ն: Այդ ժամանակ ԱՄՆ-ում մշակվում էին մեկանգամյա օգտագործման «ավիացիոն տորպեդներ»: 1944 թ. հուլիսի վերջին ԱՄՆ-ը

[2] Տես «Национальный стандарт Российской Федерации. Воздушный транспорт. Беспилотные авиационные системы. Общие требования» (ГОСТ Р 56122-2014), пп. 2.1.3; 2.1.10 (http://docs.cntd.ru/document/1200113342):

[3] Տես “Remote Piloted Aerial Vehicles: An Anthology”. Centre for Telecommunications and Information Engineering, Monash University (http://www.ctie.monash.edu.au/hargrave/rpav_home.html):

[4] Տես «БПЛА: Эпоха дронов». «Планета», 2017, № 3 (https://planeta.by/article/1745):

[5] Տես *H. R. Everett.* Unmanned Systems of World Wars I and II. Cambridge, 6 November 2015, PP. 282–283:

[6] Տես *John F. Keane, Stephen S. Carr*. A Brief History of Early Unmanned Aircraft. “Johns Hopkins APL Technical Digest”, 2013, Vol. 32, N 3:

հաջողությամբ կիրառում է բազմակի օգտագործման *(“Interstate TDR-1”)* «Ինտերստեյտ ԹիԴիԱր-1» հարվածային ՀԿԹԱ-ն, որը նախատեսված էր տորպեդների կամ ռումբերի տեղափոխման ու նետման համար: 1930-1940-ական թվականներին ԽՍՀՄ-ում կատարվում էին «ՊՍՆ-1» և «ՊՍՆ-2» անօդաչու ապարատների՝ «հատուկ նախանշանակման սավառնակների» նախագծման աշխատանքները[7]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը դառնում է ՀԿԹԱ-ների ոլորտում առաջատար: Ստեղծվում են տարբեր տեսակների հարվածային և հետախուզական ՀԿԹԱ-ներ, «Քյուէյչ-50 Դիէյէսէյչ» հակասուզանավային անօդաչու ուղղաթիռը: Վիետնամական պատերազմում ամերիկյան ՀԿԹԱ-ները կատարում են շուրջ 3,5 հազար թռիչք՝ կորցնելով 500-ից ավելի նմուշ: ՀԿԹԱ-ները՝ որպես հետախուզական միջոց, առաջին անգամ մեծ մասշտաբներով կիրառվել են Վիետնամում սակայն, միաժամանակ օդ են բարձրացվել սահմանափակ թվով ՀԿԹԱ-ներ՝ առանձին զորատեսակների համար, թեև դրանցով կորզված տեղեկույթն օգտագործել են բոլոր հրամանատարությունները: Հետագայում ՀԿԹԱ-ները նման եղանակով կիրառվել են ավելի ու ավելի հաճախ[8]: ԽՍՀՄ-ում ստեղծվում են «Տու-123 Յաստրեբ», «Տու-141 Ստրիժ» և «Տու-143 Ռեյս» ՀԿԹԱ-ները[9]:

20-րդ դարի կեսին Իսրայելը նույնպես ակտիվորեն ստեղծում է ՀԿԹԱ-ներ: Դրանք ապացուցում են իրենց արդյունավետությունը արաբական պետությունների դեմ Իսրայելի վարած պատերազմներում: 20-րդ դարի վերջին Իսրայելն աշխարհի առաջատար պետությունն էր ՀԿԹԱ-ների արտահանման ոլորտում[10]:

Համընդհանուր դիրքորոշումային համակարգի *(GPS)* ստեղծումը ՀԿԹԱ-ների համար բացում է նոր հորիզոններ: Աշխարհի բազմաթիվ թեժ կետերում (Կոսովո, Աֆղանստան, Իրաք և այլն) ՀԿԹԱ-ների կիրառումը անհրաժեշտություն է առաջացնում վերանայելու ավիացիայում դրանց խաղացած դերը[11]: Հաճախ այդ կիրառումը կանխորոշում է հնարավոր գործողությունների ելքը կամ զգալիորեն փոխում կողմերից մեկի առավելությունը: Օրինակ՝ 1982 թ. Բեքաա հարթավայրում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ Իսրայելը կիրառել է մեծ թվով ՀԿԹԱ-ներ, որոնք օգտագործվում էին հետախուզման ու տեղազննման նպատակով, ինչպես նաև որպես կեղծ թի-

[7] Տես նույն տեղում:

[8] Տես *Ա. Կ. Հովհաննիսյան,* Օդային գերակայություն: Ե., 2010, էջ 251–252:

[9] Տես «БПЛА: Эпоха дронов» (https://planeta.by/article/1745):

[10] Տես *Charles Levinson*. Israeli Robots Remake Battlefield. “The Wall Street Journal”, 13 January 2010 (https://www.wsj.com/articles/SB126325146524725387); *Ted Shelsby*. Iraqi soldiers surrender to AAI's drones. “The Baltimore Sun”, 2 March 1991 (http://articles.baltimoresun.com/1991-03-02/business/1991061100_1_rpv-aai-drones):

[11] Տես *Gheorghe Udeanu, Alexandra Dobrescu, Mihaela Oltean*. Unmanned aerial vehicle in military operations. “Scientific research and education in the air force – *AFASES*”, 2016 (www.afahc.ro/ro/afases/2016/RP/UDEANU_DOBRESCU_OLTEAN.pdf):

ռախներ: Իսրայելական «էյԱյէյ Սկաուտ» և փոքր չափերի «Մաստիֆ» ՀԿԹԱ-ները հայտնաբերում և գրանցում էին սիրիական ՀՕՊ-ի զենիթահրթիռային համակարգերի դիրքերն ու զորքերի տեղաշարժը: Սկզբում իսրայելական ՀԿԹԱ-ներին մեծ կորուստներ էին պատճառում հատկապես արաբական «ՄիԳ-21» և «ՄիԳ-23» կործանիչներն ու ցամաքային ՀՕՊ-ի ուժերը: Սակայն ՀԿԹԱ-ներից ստացված տեղեկության միջոցով իսրայելական ավիացիայի շեղող խումբը, գլխավոր ուժերի հարվածից առաջ, սիրիացիներին հարկադրում է միացնել իրենց զենիթահրթիռային համակարգերի ռադիոտեղորոշումային կայանները, որոնց իսրայելցիները հարված են հասցնում հակառադիոտեղորոշումային հրթիռներով: Իսկ այն միջոցները, որոնք չեն ոչնչացվում, ճնշվում են ռադիոխանգարումներով: Որպես արդյունք՝ իսրայելական ավիացիան հասնում է տպավորիչ հաջողության. Սիրիան կորցնում է 18 զենիթահրթիռային մարտկոց և 86 ինքնաթիռ: Փաստացի սիրիական ՀՕՊ-ի ուժերը շարքից դուրս են գալիս ՀԿԹԱ-ների արդյունավետ աշխատանքի շնորհիվ: Իսրայելական ավիացիայում ՀԿԹԱ-ների այդօրինակ հաջող կիրառումը առաջացնում է Պենտագոնի հետաքրքրությունն ու բերում համատեղ ամերիկա-իսրայելական «Արքյու-2 Փայանիեր» համակարգի մշակմանը[12]:

2000-ական թվականներին ՀԿԹԱ-ների ստեղծման և կիրառման ոլորտում շեշտը հետախուզությունից տեղափոխվում է ինքնուրույն հարված հասցնելու կարողության վրա[13]: Պատճառն այն է, որ ամբողջ փուլաշրջանը՝ ՀԿԹԱ-ից տվյալների ստացում, հաղորդում կենտրոն, վերլուծություն, որոշման ընդունում և հիմնական միջոցով (ինքնաթիռ, ռազմանավ, հրետանային մարտկոց և այլն) հարվածում, պահանջում էր շատ ժամանակ, ուստի որոշվում է ՀԿԹԱ-ները հագեցնել թիրախների ոչնչացման համար անհրաժեշտ ամեն ինչով: Այդպես են ստեղծվում ամերիկյան «էմՔյու-1 Փրեդատոր», «էմՔյու-9 Ռիպեր», «Արքյու-4 Գլոբալ Հոուկ» հարվածային ՀԿԹԱ-ները[14]: Մասնավորապես՝ «Փրեդատոր» ՀԿԹԱ-ի արդիականացված տարբերակը՝ ռեակտիվ շարժիչով «Ավենջեր» ՀԿԹԱ-ն[15], մեծացնում է ավիակիր նավախմբի մարտական հնարավորությունները[16]:

---

[12] Տես *Charles Levinson.* Israeli Robots Remake Battlefield. “The Wall Street Journal”, 13 January 2010 (https://www.wsj.com/articles/SB126325146524725387); նաև՝ «Авиация в локальных конфликтах» (http://www.skywar.ru/antiuav.html):

[13] Տես *Elizabeth Bone, Christopher Bolkcom*. Unmanned Aerial Vehicles: Background and Issues for Congress. Report for Congress, 25 April 2003 (https://fas.org/irp/crs/RL31872.pdf); *Reg Austin*. Unmanned Aircraft Systems: UAVs Design, Development and Deployment. John Wiley and Sons, 2010:

[14] Տես «БПЛА: Эпоха дронов» (https://planeta.by/article/1745):

[15] Տես *Valerie Insinna.* “General Atomics targets first big international Avenger drone sale”, 17.08.2018 (https://www.defensenews.com/air/2017/08/17/general-atomics-targets-first-big-international-avenger-drone-sale/); նաև՝ «Беспилотный аппарат Avenger» (http://bpla.ru/avenger/); “Avenger (Predator C)” (http://www.airwar.ru/enc/bpla/predatorc.html):

[16] Տես *Ա. Կ. Հովհաննիսյան,* Ռազմարվեստ. Օդային գերակայություն, հ. 1: Ե., 2016, էջ 234:

2010 թ. ԱՄՆ-ի բյուջեում ՀԿԹԱ-ների համար նախատեսված գումարը 2000 թ. համեմատ ավելանում է 5 անգամ՝ ավիացիայի համար նախատեսված բյուջեի 5 տոկոսից հասնելով 25 տոկոսի: Ռազմական ՀԿԹԱ-ները կազմում են նրա ռազմաօդային նավատորմի մոտ կեսը[17]: 2010–2013 թվականներին միայն ԱՄՆ-ում ՀԿԹԱ-ների արտադրության շնորհիվ ստեղծվում է 70 հազար աշխատատեղ[18]: 2014 թ. ԱՄՆ-ի Զինված ուժերն կիրառել են 10 հազար փոքր (7362 հատ «Արքյու-11 Ռավեն», 990 «Վոսպ III», 1137 «Արքյու-20 Պում» և 306 «Արքյու-16 Տե-Հոուկ») և շուրջ 1000 միջին ու մեծ ՀԿԹԱ-ներ (246 «Էմքյու-1» և «Էմքյու-1Սի», 126 «Էմքյու-9 Ռիփերr», 491 «Արքյու-7 Շեդոու» և 33 «Արքյու-4 Գլոբալ Հոուկ»)[19]:

Ամերիկյան արտադրության «Արքյու-11 Ռավեն» («RQ-11 Raven») փոքր չափի ՀԿԹԱ

Թևի բացվածքը՝ 1,5 մ, երկարությունը՝ 0,96 մ, առավելագույն վերթիռային զանգված՝ 1,7 կգ, առավելագույն արագությունը՝ 95 կմ/ժ, թռիչքի բարձրության շեմը՝ 5000 մ, գործողության շառավիղը՝ 10 կմ, շարժիչի տիպը՝ էլեկտրական, թռիչքի տևողությունը՝ 45–60 ր

Իրենց զինված ուժերում ՀԿԹԱ-ների թվաքանակն արագորեն ավելացնում են նաև Իսրայելը, Չինաստանը, Կանադան և Մեծ Բրիտանիան: 2008 թվականից ՀԿԹԱ-ների ստեղծման աշխատանքներն ակտիվացրել է Ռուսաստանը, և դրա արդյունքն են «Ֆորպոստ», «Զաստավա», «Օռլան-10», «Դոզոր-600», «Ալտիուս» և այլ ՀԿԹԱ-ներ[20]:

[17] Տես «БПЛА: Эпоха дронов» (https://planeta.by/article/1745):

[18] Տես *Ս. Կոչչաքին*, Նշ. աշխ.:

[19] Տես “Pentagon Plans for Cuts to Drone Budgets”, 02.01.2014 (https://www.military.com/dodbuzz/2014/01/02/pentagon-plans-for-cuts-to-drone-budgets):

[20] Տես «Армия может получить первые малые отечественные БПЛА в 2013 году». «РИА Новости», 09.10.2012 (https://ria.ru/defense_safety/20121009/769887466.html); *Алексей Никольский*. Облик секретного беспилотника раскрыт в ходе фотосессии с Шойгу. «Ведомости», 08.02.2013 (https://www.vedomosti.ru/technology/articles/2013/02/08/oblik_sekretnogo_bespilotnika_raskryt_izza_fotosessii_shojgu):

ՀԿԹԱ-ՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռազմական ՀԿԹԱ-ների ոլորտի սրընթաց զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք հնարավորություն են ընձեռում մարտական խնդիրների լուծման ժամանակ փոխարինելու օդաչուավոր ավիացիան և կանխելու մարդկային կորուստները, ինչպես նաև կատարելու խնայողություն, քանի որ ՀԿԹԱ-ների արտադրությունը օդաչուավոր թռչող ապարատների արտադրությունից պակաս աշխատատար ու ծախսատար է[21]:

ՀԿԹԱ-ների համընդհանուր դասակարգում առայժմ չկա: Սովորաբար դրանք բաժանվում են երեք խմբի՝ ռազմավարական, մարտավարական և հատուկ նախանշանակման: Յուրաքանչյուր խումբն իր հերթին բաժանվում է ենթախմբերի՝ ըստ զանգվածի, թռիչքի բարձրության, հեռահարության և ժամանակի[22]:

ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերում ընդունված է ՀԿԹԱ-ների հետևյալ դասակարգումը[23].

Աղյուսակ 1

ՀԿԹԱ-ՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԱՄՆ-Ի ՌՕՈՒ-ՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ

Դաս	Խումբ	Զանգված, կգ	Թռիչքի բարձրություն՝ մինչև, մ	Արագություն՝ մինչև, կմ/ժ	ՀԿԹԱ-ի նմուշ
Փոքր չափի անօդաչու ավիացիոն համակարգեր (մարտավարական)	1-ին	0 - 9	370	185	«Արքյու-11Բի Ռավեն», «Արքյու-12Էյ Ռիոսպ»
	2-րդ	9.5 - 25	1070	465	«Սկեն Իգլ»
	3-րդ	600	5500	465	«Արքյու-21»
Թռիչքի մեծ տևողությամբ ՀԿԹԱ-ներ (օպերատիվ և ռազմավարական)	4-րդ	600-ից ավելի	5500	Ցանկացած	«Էմքյու-1Բի Փրեդատոր»
	5-րդ	600-ից ավելի	5500	Ցանկացած	«Էմքյու-9Էյ Ռիպեր», «Արքյու-4Բի Գլոբալ Հոուկ»

[21] Տես “Air Force Unmanned Aerial System (UAS) Flight Plan 2009-2047”. U.S. Air Force (http://www.avcs-au.com/library/files/markets/090724.pdf):

[22] Տես *Ա. Կ. Հովհաննիսյան,* Օդային գերակայություն, էջ 246–249:

[23] Տես “United States Air Force RPA Vector: Vision and Enabling Concepts 2013-2038” (https://www.af.mil/Portals/.../USAFRPAVectorVisionandEnablingConcepts2013-2038.pdf); նաև՝ *Д. Стрельников*. Концептуальные взгляды командования ВВС США на развитие беспилотной авиации. «ЗВО», 2017, № 5:

Հեռանկարում նախատեսվում է ստեղծել այնպիսի ՀԿԹԱ-ներ, որոնք իրենց մարտական կարողություններով չզիջեն օդաչուավոր թռչող ապարատներին: Այդպիսի ՀԿԹԱ-ներին ներկայացվող հիմնական պահանջներն են ցածր մակարդակի ռադիոտեղորոշումային նկատելիությունը, մարտական գործողությունների ավելի մեծ շառավիղը, քան ունեն ժամանակակից մարտավարական կործանիչները, մեծ տարաշարժունությունը, մերձձայնային արագությունը, դիմացկունությունը, կառուցվածքի մոդուլայնությունը, տարբեր տեսակների օգտակար բեռներ կրելու կարողությունը, արդիականացման հնարավորությունը, սերիական արտադրության և տեխնիկական սպասարկման ցածր ինքնարժեքը[24]: Որպես սպառազինության համակարգ՝ ՀԿԹԱ-ն պետք է բնութագրվի մարտական գործողությունների գոտում անձնակազմի բացակայությամբ, նախանշանակման շրջանում վրագետնյա թիրախներին հարվածներ հասցնելիս խնդիրները լրիվ փուլաշրջանով կատարելու հնարավորությամբ (թիրախների հայտնաբերում, դասակարգում, ուղեկցում և կրակային խոցում), հետախուզության (դիտման) անընդհատության ապահովման համար թռիչքի մեծ տևողությամբ, բարդ իրավիճակներում գործելու կարողությամբ[25]:

Ընդսմին ՀԿԹԱ-ների հիմնական խնդիրներն ապագայում պետք է լինեն.

ա) հետախուզությունը,

բ) վրագետնյա և վրաջրյա թիրախների խոցումը: Ծրագրվում է, որ ՀԿԹԱ-ները պետք է հրթիռներով ու ռումբերով հարվածներ հասցնեն մեծ բարձրություններից՝ գտնվելով հակառակորդի զորային ՀՕՊ-ի միջոցների հասանելիության գոտուց դուրս: Տվյալ խնդրի կատարումից հետո ՀԿԹԱ-ները պետք է մնան նախանշանակված շրջանում, շարունակեն հետախուզությունը և սպառազինության առկայության դեպքում ունակ լինեն հարվածելու նոր հայտնաբերված թիրախներին,

գ) ռադիոէլեկտրոնային պայքարի վարումը, ինչի համար ՀԿԹԱ-ները կարող են ռադիոէլեկտրոնային օբյեկտների դեմ կիրառվել զանգվածայնորեն,

դ) հակառակորդի ՀՕՊ-ի ճեղքումը, ինչի ուղիներից մեկը ՀԿԹԱ-ները միաժամանակ այնպիսի թվաքանակով կիրառելն է, որը հակառակորդի ՀՕՊ-ը ունակ չէ խոցելու:

Բացի այդ, ակտիվորեն ուսումնասիրվում են այնպիսի օժանդակ գործառույթներ կատարելու ՀԿԹԱ-ների հնարավորությունները, ինչպիսիք են բեռների տեղափոխումը (հաջողությամբ փորձարկվել է Աֆղանստանում), վառելիքով ինքնաթիռների և ուղղաթիռների օդում լիցքավորումը[26]:

---

[24] Տես “United States Air Force RPA Vector: ...” (https://www.af.mil/Portals/.../USAFRPAVectorVisionandEnablingConcepts2013-2038.pdf):

[25] Տես *Ս. Կոչագին*, Նշ. աշխ.:

[26] Տես նույն տեղում:

ՀԿԹԱ-ՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՈՇ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՀԿԹԱ-ները կարող են ՀՕՊ-ի համար լինել ինչպես իրական, այնպես էլ կեղծ թիրախ: Այսինքն՝ մարտական ՀԿԹԱ-ները կարող են կիրառվել թե՛ որպես հարվածող, թե՛ որպես խանգարող միջոցներ: Ավիացիայի հիմնական հարվածներից առաջ կիրառելով ՀԿԹԱ-ները որպես կեղծ թիրախներ՝ հնարավոր է հակառակորդին ստիպել բացահայտել իրեն, անիմաստ ծախսել հրթիռային և հրանոթային զինամթերքի պաշարները[27]:

Միջին չափի իրանական «Հեսա Աբաբիլ» ՀԿԹԱ

Թևի բացվածքը՝ 3,25 մ, երկարությունը՝ 2,88 մ, քաշը՝ 30 (դատարկ վիճակում) և 83 (թռիչքային առավելագույն) կգ, արագությունը՝ 370 կմ/ժ, թռիչքի հեռավորությունը՝ 120 կմ, թռիչքի տևողությունը՝ 1,15-2 ժ

Ապագայում ՀԿԹԱ-ները նախատեսվում է կիրառել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ խմբերով: Թեպետ այսօր դրանց կիրառման հիմնական ձևը առաջին եղանակն է, ապագայում ՀԿԹԱ-ների խմբային կիրառումը կստանա ավելի մեծ տարածում, ընդսմին քննարկվում է երեք տեսակի խմբային կիրառման հարցը:

1) Օդաչուավոր և անօդաչու թռչող ապարատների համատեղ կիրառում, երբ խմբի օդաչուավոր ապարատի անձնակազմը կառավարում է անօդաչու ապարատները, կամ վերջիններս գործում են ինքնավար կերպով: Ամերիկյան մասնագետների կարծիքով՝ դա ունի միայն օդաչուավոր թռչող ապարատի կիրառման համեմատությամբ մի շարք առավելություններ, որոնք են՝ թիրախների հայտնաբերման ավելի մեծ հեռավորությունը, խոցման ավիացիոն միջոցների ավելի մեծ պաշարը (որը հավասար է օդաչուավոր և անօդաչու թռչող ապարատների խոցման միջոցների պաշարների գումարին), ինչպես նաև օդաչուավոր թռչող ապարատի խոցման ավելի փոքր հավանականությունը, ինչը պայմանավորված է հակառակորդի ՀՕՊ-ի խոցման մի-

[27] Տես *Ա. Կ. Հովհաննիսյան,* Ռազմարվեստ. Օդային գերակայություն, հ 1, էջ 500–501:

ջոցների հասանելիության գոտում գտնվելու ժամանակահատվածի նվազեցմամբ կամ այդ գոտում գտնվելու իսպառ բացառմամբ[28]:

2) Մեկ կամ մի քանի տեսակի ՀԿԹԱ-ներից կազմված խմբի ինքնուրույն (ավտոնոմ) գործունեություն, ընդսմին խմբի և դրա տարրերի գործունեությունը պլանավորում, առաջադրանքները բաշխում և դրանց կատարումը վերահսկում է «թռիչքի ղեկավար ՀԿԹԱ-ն»: Մարդու կառավարող դերը հասցվում է նվազագույնի, սակայն խմբի կառավարման նրա գործառույթը պահպանվում է:

«էյՋիէմ-114» հրթիռներով զինված մեծ չափի ամերիկյան «էմՔյու-1 Փրեդատոր» բազմանպատակային ՀԿԹԱ

Թևերի բացվածքը՝ 14,84 մ, երկարությունը՝ 8,23 մ, քաշը՝ 512 (դատարկ վիճակում) և 1020 (թռիչքային առավելագույն) կգ, արագությունը՝ 217 կմ/ժ, թռիչքի բարձրության շեմը՝ 7920 մ, թռիչքի հեռավորությունը՝ 740 կմ, թռիչքի տևողությունը՝ 20 ժ-ից ավելի (նորմալ թռիչք) և 40 ժ (առավելագույն)

3) ՀԿԹԱ-ների ինտեգրված կիրառում՝ միասնական պլանի և զինված հակամարտության նպատակների համաձայն գործող զինված ուժերի տարբեր տեսակներին պատկանող ռոբոտացված միջոցների՝ ըստ տեղի և ժամանակի համաձայնեցված գործողությունների կազմակերպում[29]:

ՀԿԹԱ-ի կիրառման եղանակն ընտրում է հրամանատարությունը՝ հաշվի առնելով մարտական իրավիճակը, անօդաչու ապարատների առկայությունը և այս կամ այն խմբին պատկանող ՀԿԹԱ-ների նմուշների առանձնահատկությունները: Այսպես. 1-ին աղյուսակի 1-ին խմբի (նանո-, միկրո- և մինի-) ՀԿԹԱ-ները կարող են կիրառվել քաղաքային տեղանքում զինծառայողի կամ զինծառայողների խմբի համար (շինությունների դրսից և ներսից) հետախուզական տեղեկույթի ձեռքբերման նպատակով: 2-րդ խմբի ՀԿԹԱ-ները, որոնք ունեն գործողության մինչև 10 կմ շառավիղ, կարող են կիրառվել հիմնականում ավիացիոն զորակայանների, հրթիռային հարձակման մասին նա-

[28] Տես *Д. Стрельников, А. Сидоров, Ю. Мгимов*. Совместное применение пилотируемой и беспилотной авиации США в первой половине 21-го века. «ЗВО», 2018, № 4:

[29] Տես *Դ. Ստրելնիկով*, Նշ. աշխ.:

խազգուշացնող կայանների, միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների արձակման հարթակների պահպանության, զորքերի (ուժերի) շփման գծի դիտարկման, քիմիական ու ճառագայթային հետախուզության համար և այլ նպատակներով: 3-րդ խմբի ՀԿԹԱ-ները ներկայումս չեն կիրառվում ԱՄՆ-ի ՌՕՈՒ-ում, սակայն դրանց մշակումը փոքր չափի անօդաչու ավիացիոն համակարգերի զարգացման հիմնական ուղղությունն է: Այս խմբի բազմանպատակային ապարատներում համատեղվելու են 2-րդ խմբի ՀԿԹԱ-ներին բնորոշ ցածր ինքնարժեքը, շահագործման պարզությունը, ծավալման կարճ ժամկետներն ու արձակման հարմարավետությունը և 4-րդ ու 5-րդ խմբերի ՀԿԹԱ-ներին բնորոշ օգտակար բեռի մեծության ու թռիչքի բարձրության պարամետրների հետ համեմատելի ցուցանիշները: 3-րդ խմբի ՀԿԹԱ-ները նախատեսվում է օգտագործել առբերման ճանապարհների շրջափակման պայմաններում վիրավորների տարահանման, նյութատեխնիկական միջոցների, պարենի, դեղորայքի և այլ իրեղենի փոխադրման համար[30]:

ՀԿԹԱ-ՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայումս ՀԿԹԱ-ների կատարելագործման աշխատանքները նպատակաուղղված են՝

– թռիչքի հեռահասության, տևողության և բարձրության մեծացմանը՝ խիստ խնայողական ուժային կայանքների, վառելիքի, սնուցման աղբյուրների և ՀԿԹԱ-ների նոր տեսակի այլ տարրերի կիրառման միջոցով,
– կառավարման միասնական համակարգում ՀԿԹԱ-ների միավորմանը (ինտեգրմանը)՝ հայտնաբերման և օդում բախումների կանխման համակարգերի կիրառման միջոցով,
– կապի օպտիկական միջոցների ներդրմանը, հատկապես՝ բարձրաթռիչ ՀԿԹԱ-ների համար, ինչը հնարավորություն կընձեռի էապես ընդլայնելու աշխատանքային հաճախականությունների միջակայքը և մեծացնելու խանգարումների նկատմամբ կայունությունը,
– կառավարելի գերճշգրիտ զենքով զինված ՀԿԹԱ-ների ստեղծմանը, որոնք նախանշանակված են հակառակորդի ՀՕՊ-ի հաղթահարման կամ վրագետնյա թիրախների ոչնչացման համար,
– հեռանկարային հետախուզական-հարվածային ՀԿԹԱ-ների ստեղծմանը, որոնց հարվածային միջոցների հիմքը լինելու են ոչ միջուկային մարտագլխիկով բալիստիկ հրթիռները և մեծ հեռահարությամբ գերձայնային հրթիռները: Հեռանկարում նախատեսվում է հարվածների համար օգտագործել նաև տիեզերական հարթակներ[31],

[30] Տես նույն տեղում:

[31] Տես *Ս. Կոչագին*, Նշ. աշխ., նաև՝ *Hongzhuan Cai, Qingkai Geng*. Research on the Development Process and Trend of Unmanned Aerial Vehicle. “International Industrial Informatics and Computer Engineering Conference (IIICEC)”, 2015 (https://download.atlantis-press.com/php/download_paper.php?id=17304):

– ՀԿԹԱ-ների կիրառման եղանակների մշակմանն ու տեսական հիմնավորմանը,
– ՀԿԹԱ-ների կառավարման և տեխնիկական սպասարկման մասնագետների պատրաստմանը[32]:

Ակնկալվում է, որ 2050 թվականին ԱՄՆ-ը կունենա գործնականում միայն ՀԿԹԱ-ներից բաղկացած ավիացիա, որը կղեկավարվի արհեստական բանականության միջոցով: Հենց անօդաչու ավիացիան է որոշելու ապագայի բարձրտեխնոլոգիական պատերազմներում զինված պայքարի ընթացքն ու ելքը[33]:

[32] Տես *Դ. Ստրելնիկով*, Նշ. աշխ.:

[33] Տես *Դ. Ստրելնիկով, Ա. Միդորով, Յու. Մգիմով*, Նշ. աշխ.:

ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

НЕКОТОРЫЕ СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ К ПРИМЕНЕНИЮ ТЕЛЕПИЛОТИРУЕМЫХ ВОЕННЫХ ЛЕТАТЕЛЬНЫХ АППАРАТОВ

А. М. ШАХВЕРДЯН, подполковник, соискатель НИУО МО РА, старший офицер НИУО, ответственный за информационные и общественные связи

РЕЗЮМЕ

Использование азербайджанским агрессором во время Апрельской четырехдневной войны беспилотных летательных аппаратов (дронов) резко повысило интерес в РА к перспективам развития военных беспилотников в передовых странах мира. С этих позиций в статье рассматривается краткая история их создания и развития по сегодняшний день, а также научно-технические прогнозы на перспективу. В частности, отмечается, что в настоящее время в американской специальной литературе они именуются *“Remotely Piloted Vehicles”* (телепилотируемый летательный аппарат, ТПЛА), а в российской – «телеуправляемая авиационная система» или «беспилотная авиационная система».

Приведена таблица классификации дронов с указанием их основных параметров. В числе основных направлений усовершенствования и развития дронов указываются: повышение дальности, высоты и времени полета; охват в единой системе управления; внедрение оптических систем связи; оснащение системами управляемого сверхточного оружия; создание перспективных образцов ТПЛА разведывательно-ударного типа; подготовка специалистов по управлению и техническому обслуживанию.

ARMAMENT AND MILITARY EQUIPMENT

SOME MODERN APPROACHES TO THE APPLICATION OF REMOTELY PILOTED VEHICLES

A. M. SHAHVERDYAN, Lieutenant Colonel, Applicant, NDRU, MOD, RA,
Senior Officer, NDRU, Information and Public Relations Officer

SUMMARY

The use of unmanned aerial vehicles (UAVs, i. e. the drones) by the Azerbaijani aggressor during the Four-Day April War sharply increased the interest in the RA in the perspectives of the development of the military UAVs in advanced countries of the world. From this point, the article introduces the brief history of creation of the UAVs and their development up to date, as well as the scientific and technical forecasts for the prospective. In particular, it is noted that at present in the US specialized literature they are named *"Remotely Piloted Vehicles"* (RPV), and in the Russian milieu – "Remote-Controlled Air System" or "Unmanned Aircraft System".

The article shows a table of classification of drones with indexes of their main parameters. Among the main directions of improving and developing the drones are: the increase in the flight range, altitude and time; the scope of the joint Command and Control system; implementation of the optical communication system; equipping with precision-guided control systems; engineering the perspective RPV reconnaissance-strike models; and training command and control, and maintenance specialists.

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան,
Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային տնտեսությունների զարգացման ժամանակակից իրողություններում առավել հաճախ է անհրաժեշտություն առաջանում համաշխարհային տնտեսությանն արդյունավետ կերպով ինտեգրվելու նկատմամբ մոտեցումները դարձնելու ազգային առաջնահերթություններին համահունչ: Այդ խնդիրը ավելի է բարդանում, երբ խոսքը վերաբերում է սպառազինությունների և ռազմական տեխնիկայի (ՍՈՏ) արտադրության ոլորտում միջազգային համագործակցությանը, քանի որ հակասություն է ծագում ազգային անվտանգության ապահովման, տնտեսական զարգացման հնարավորությունների և պետության տնտեսաքաղաքական անկախության միջև:

Սույն հոդվածում ներկայացնում ենք ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության նախադրյալներն ու առանձնահատկությունները, ռազմական դիվանագիտության՝ որպես ռազմատնտեսական համագործակցության ապահովման մեխանիզմի հարցը և ՀՀ արտաքին ռազմատնտեսական ու ռազմաքաղաքական կողմնորոշիչներին՝ փորձելով նախանշել ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության հնարավոր ուղղությունները:

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության առաջին օրինակները վերագրվում են Եվրոպային, որտեղ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեխնոլոգիական առաջընթացը հնարավորություն տվեց նախագծելու սպառազինության ավելի բարդ, հետևաբար նաև՝ ավելի թանկ համակարգեր, մինչդեռ զարգացած պետություններում

տնտեսական աճման տեմպը նկատելիորեն նվազեց[1]. եթե տնտեսական աճը կազմում էր 2 %, ապա սպառազինության համակարգերի վրա ծախսերն աճում էին տարեկան 6-10 %-ով[2]: Նման պայմաններում միջազգային կոոպերացիան դիտվում էր որպես եվրոպական պետությունների համար լավ հնարավորություն տնտեսական արդյունավետության պայմանով ունենալու առաջադիմական սպառազինություն՝ միևնույն ժամանակ իրենց ռազմաարդյունաբերական բազայի և թողարկման ինքնուրույնության պահպանմամբ: Հիմնախնդրի հետազոտողների կարծիքով՝ անդրատլանտյան կոոպերացիան, օրինակ, կարող էր մեծացնել Եվրոպայում պաշտպանական ծախսերի եկամտաբերությունը 25 %-ով[3], իսկ միջեվրոպական ռազմաարդյունաբերական համագործակցության շնորհիվ ոլորտի արդյունավետությունը կարող էր աճել 10-20 %-ով[4]:

Նման միջազգային համագործակցության նախնական ձևը այլ երկրներին արտադրության լիցենզիայի տրամադրումն էր, որը և նախադրյալներ ստեղծեց հետագա գիտաարտադրական կոոպերացիայի համար: Վերջինս ներառում էր ամբողջ արտադրական փուլաշրջանը՝ նոր սպառազինության համատեղ նախագծումից մինչև դրանց թողարկումը, արդիականացումը և նորոգումը[5]: Ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային կոոպերացիան ուղեկցվում է պետությունների միջև ռազմական տեխնոլոգիաների, ինչպես նաև ռազմական արդյունաբերության կառավարման ոլորտում ձեռք բերված արդյունավետ փորձի փոխանակման ինտենսիվացմամբ: Դա էլ հանգեցնում է համագործակցող պետությունների միջև փոխկախվածության աճման:

Դեռ 90-ական թվականների վերջին մի շարք զարգացող պետությունների ռազմաարդյունաբերական համալիրներում սկսեց զգալի մասնաբաժին կազմել օտարերկրյա սեփականությունը, իսկ Արևմտյան Եվրոպայում ձևավորվեցին ռազմաարդյունաբերական կոնսորցիումներ, որոնք բնորոշվում են համագործակցության պայմանագրերի երկարաժամկետությամբ և կայունությամբ, ինչը նպաստում է այդ պետությունների փոխկախվածության խորացմանը: Հատկանշական է, որ նման փոխկախվածության հետևանքով

[1] Տես *Marc R. DeVore.* Organizing international armaments cooperation: institutional design and path dependencies in Europe. “European Security”. September 2012, Vol. 21, N 3:

[2] Տես *N. Augustine.* Augustine’s laws. Reston, 1983, PP. 104–110:

[3] Տես *T. A. Callaghan.* US-European economic cooperation in military and civil technology. An issues-oriented report. Washington, DC, 1975, P. 34 (http://www.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a009049.pdf):

[4] Տես *K. Hartley.* A single European market for defence equipment. “The Organisation of the Firm: Iinternational Business Perspectives”. Ed. by R. Mudambi, M. Ricketts. London,1998, PP. 148–166:

[5] Տես *А. Н. Ваучский.* Направления развития международной кооперации при создании вооружения (на примере кораблестроения). «Военная мысль», 2008, № 10:

հաճախ ռազմական հակամարտության կողմ դառնում են ոչ այնքան քաղաքական, որքան տնտեսական նկատառումներով[6]: Սա կարևոր հանգամանք է ժամանակակից ռազմատնտեսական համագործակցության վեկտորների հստակեցման համար:

Ընդհանրացնելով վերը ասվածը՝ կարող ենք համակարգել ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության նախադրյալները.

- արդիական սպառազինությունների նոր նմուշների, համակարգերի, համալիրների աստիճանական բարդացում, գիտատարության աճում,
- դրանց արտադրության ծախքերի աճում,
- սերիական արտադրության հնարավորությունների սահմանափակում և արտադրության ծավալների կրճատում,
- քաղաքական դրդապատճառներ:

Փաստորեն, ներուժային տնտեսական օգուտների հավանականությունն ինքնին բավարար չէ ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային կոոպերացիայի նախաձեռնման համար: Բանն այն է, որ դա պահանջում է մի քանի տարբեր պետությունների կառավարությունների գործունեության համաձայնեցում, ընդսմին դրանցից յուրաքանչյուրն ունենում է կորուստների (կամ պակաս օգուտների) մտավախություն: Բացի այդ, միջազգային գիտաարտադրական կոոպերացիան ռազմական նշանակություն ունեցող արտադրություններում, դրական կողմերից բացի, ենթադրում է նաև որոշակի վտանգների և խնդիրների առկայություն, մասնավորապես՝ արտաքին ռազմատնտեսական կապերի ոչ խելամիտ ինտենսիվացումը կարող է հանգեցնել ռազմատեխնոլոգիական անվտանգության մակարդակի նվազմանը, արդիական սպառազինությունների արտադրման տեխնոլոգիաների անթույլատրելի տարածմանը: Ուստի որոշ պետություններ նախընտրելի են համարում սպառազինությունների և դրանց բաղադրամասերի արտադրությունը կազմակերպել միայն իրենց ներքին շրջանակներում, ինչը պայմանավորված է ոչ միայն արտասահմանյան մատակարարումներից թույլ կախվածություն ունենալու պահանջով և, անհրաժեշտության դեպքում՝ արագ մոբիլիզացման հնարավորություններով, այլև հովանավորչական քաղաքականությամբ, որի հիմքում տնտեսական շարժառիթներն են:

Համաեվրոպական ռազմաարդյունաբերական համագործակցության օրինակով կարելի է փաստել, որ այս բնույթի համագործակցության ժամանակ ի հայտ եկող խնդիրների հաղթահարման լավագույն տարբերակը հարաբերությունները կարգավորող այնպիսի վերազգային մարմինների (միջազգային կազմակերպությունների) ձևավորումն է, որոնց գործունեությունը միտված լինի գործընկեր-պետությունների միջև տեղեկատվական անհամաչափության նվազեցմանը, երկարաժամկետ համագործակցության մեխանիզմ-

[6] Տես *А. А. Фатьянов.* Проблема международной кооперации на рынке военной техники. «Российский внешнеэкономический вестник», 2012, № 6:

ների մշակմանը, օպորտունիստական վարքագծին հակազդեցությանը և այնպիսի ներդրումների խրախուսմանը, որոնք կարող են շահավետ լինել բոլոր կողմերի համար[7]:

Ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցությունը բնորոշվում է հնարավորությունների մեծ բազմազանությամբ, բայց և դրանց իրացման մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր համաձայնության գալու նկատելի դժվարություններով: Տեսաբանների կարծիքով՝ խնդրահարույց են հատկապես համագործակցության հաստատութենական կառուցվածքին առնչվող հետևյալ չորս տարրերը՝ կազմակերպության կարգավիճակը, անդամների թիվն ու ընտրությունը, շահերի ներկայացումը և ռեսուրսների աղբյուրները[8]: Կարևոր է նաև համագործակցության ուղղության հստակեցումը, քանի որ, օրինակ, արտադրության տարբեր փուլերում (առանձին դետալների, բաղադրիչների արտադրություն) կոոպերացման հարցում մեծ պատրաստակամություն ցուցաբերող երկրները կարող են դեմ լինել համատեղ հետազոտություններին ու մշակումներին՝ խուսափելով տեխնոլոգիական լուծումներն այլ պետություններին հասու դարձնելուց: Որոշ դեպքերում էլ հակառակը՝ ռազմատնտեսական համագործակցության մեջ երկրները ներառվում են առավելապես ինքնուրույնաբար հետազոտական և փորձարարական աշխատանքներ կատարելու անկարողությունից դրդված:

Առանձնացնենք ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները.

- ոչ արտադրական կոոպերացիա՝ ռազմական նշանակություն ունեցող հետազոտությունների և մշակումների համատեղ կատարում,
- արտադրական կոոպերացիա, երբ երկրներից յուրաքանչյուրը մասնագիտանում է արտադրական փուլաշրջանի այն հատվածում, որտեղ ունի համեմատական առավելություն (օրինակ՝ դետալների և բաղադրիչների, կառավարման ավտոմատացված համակարգերի կամ անհրաժեշտ նյութերի արտադրություն),
- ընդհանուր տեխնիկական ստանդարտների ընդունում, որպեսզի գործընկեր պետությունների սպառազինությունները լինեն փոխադարձաբար համատեղելի,
- ռազմական արդյունաբերության ու ռազմական արտադրանքի միջազգային շուկայի համատեղ կարգավորում և այդ կարգավորման նկատմամբ մոտեցումների միասնականացում,
- համագործակցության շրջանակներում համատեղ ապահովումային (լոգիստիկական) ցանցի ձևավորում և տեխնիկական սպասարկման համակարգի ստեղծում,

[7] Տես *D. North.* Institutions, institutional change and economic performance. Cambridge, 1990:

[8] Տես *Մարկ Ռ. ԴեՎորե,* Նշ. աշխ.:

- ռազմական նախանշանակման արտադրական նախաձեռնությունների համատեղ ֆինանսավորում կամ ֆինանսավորման միասնական աղբյուրի (օրինակ՝ հիմնադրամի) ձևավորում:

Ակնհայտ է, որ ձևավորվող վերազգային կազմակերպության կարգավիճակը մեծապես պայմանավորված է այն բանով, թե համագործակցությունը գործունեության ինչ ուղղություն ունի, և որ պետությունները պետք է անդամակցեն այդ կազմակերպությանը: Տեսականորեն՝ որքան մեծ լինի անդամ պետությունների թիվը, և որքան տարբեր լինեն դրանց մասնագիտացման հնարավորությունները, այնքան շահավետ կլինի կոոպերացիան, սակայն գործնականում ֆունկցիոնալ համագործակցության ժամանակ փոխհամաձայնության ձեռքբերման գործում ի հայտ են գալիս բազմաթիվ խոչընդոտներ, ընդ որում, դրանք հիմնականում պայմանավորված են տվյալ պետությունների ռազմատնտեսական ներուժի անհամաչափությամբ: Նման խնդրի բախվել են անդրատլանտյան ռազմատնտեսական համագործակցության պետությունները, որտեղ գերիշխող է ԱՄՆ-ը, որի ռազմական ծախսերը մոտ 10 անգամ գերազանցում են եվրոպական զարգացած պետությունների ռազմական ծախսերը[9], հետևաբար նրա շահերն ու նախապատվությունները մյուսների նկատմամբ առաջնային են[10]: Սովորաբար, անհամատեղելի են լինում նաև համագործակցող խոշոր և փոքր պետությունների նախապատվությունները. խոշոր պետությունները նախընտրում են ազատական շուկաները, իսկ փոքրերը կողմնակից են հովանավորչական քաղաքականությանը: Այդ իսկ պատճառով առավել նպատակահարմար է, որ ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցեն սահմանափակ թվով, բայց տնտեսական զարգացման ու ռազմական ներուժի մակարդակով միմյանց մոտ պետությունները[11]:

Քանի որ ռազմաարդյունաբերությունը, լինելով մասնավոր ձեռնարկատիրության ոլորտ, միևնույն ժամանակ գտնվում է պետության խիստ վերահսկողության ներքո, բավական կարևոր է նաև այն, թե ով պետք է ներկայացնի տվյալ պետությունը վերազգային կարգավորման մարմնում՝ գործարարները, ռազմական ոլորտի պաշտոնյաները (սպայական անձնակազմ), թե քաղաքական իշխանության մարմինները: Ակնհայտ է, որ թեև հնարավոր գործարքների շահավետությունը գնահատելու և համագործակցությունից առավելություններ քաղելու համար մասնավոր ոլորտի ներկայացուցիչները և ռազմական ոլորտի պաշտոնյաները ունեն տեխնիկապես ավելի մեծ փորձառություն և գիտելիքներ, այնուամենայնիվ, պետությունների շահերը կայացվող որոշումների քաղաքական բնույթով պայմանավորված, լավագույնս կարող են ներկայացնել քաղաքական իշխանությունները:

[9] Տես “Defence Data of EDA participating Member States in 2009”. European Defence Agency. Brussels, 2009:

[10] Տես *J. Caverley.* United States hegemony and the new economics of defense. “Security studies”, 2007, Vol. 16, N 4:

[11] Տես *Մարկ Ռ. ԴեՎորե,* Նշ. աշխ.:

Ինչ վերաբերում է միջազգային համագործակցությունը համակարգող կառույցի ֆինանսական ռեսուրսների ձևավորմանը, ապա այստեղ նույնպես կարևորվում է գործընկերության հավասար պայմանների ապահովումը, ինչը հնարավորություն կտա բացառելու առավել հզոր գործընկերոջ ազդեցությունը, որը կարող է ավելի մեծ միջոցներ հատկացնել կառույցի պահպանման և գործունեության ապահովման համար՝ դրանով իսկ ազդելով ղեկավար մարմինների որոշումների վրա: Մյուս կողմից՝ նման կառույցները կարող են գործել իրենց իսկ ֆինանսական միջոցների հաշվին, որոնք ձևավորվում են կնքվող գործարքների ժամանակ տրամադրվող խորհրդատվական, հաշվապահական, տեխնիկական սպասարկման և այլ ծառայությունների դիմաց կատարվող վարձատրության հաշվին: Սակայն նման մոտեցման դեպքում նույնպես առկա է մտավախություն, որ որոշ պետությունների շահերը կարող են անտեսվել:

Այսպիսով՝ ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցությունը կապված է բազմաթիվ բարդությունների հետ, որոնցից առավել կարևորն արտասահմանյան գործընկերներից օպտիմալ կախվածության խնդիրն է: Այն առավել սուր է դրված փոքր պետությունների դեպքում, որոնք չեն կարող վերահսկել ռազմաարդյունաբերության միջազգային գիտաարտադրական շղթաների առանձին օղակների գործունեությունը և հաճախ դրանց մասնակցելու իրավունք կարողանում են ձեռք բերել միայն «փակ տեսողության» պայմանով՝ առանց պատկերացում կազմելու վերջնական արտադրանքի նախանշանակման և շուկայական գնի մասին: Ըստ որոշ հետազոտողների՝ ռազմաարդյունաբերության ոլորտում գիտաարտադրական կոոպերացիայից առավել մեծ չափով շահում են զարգացած պետությունները, որոնք էլ հաճախ հանդես են գալիս նման համագործակցություն նախաձեռնողի դերում[12]: Այնուամենայնիվ, վերջին տարիներին սպառազինությունների արտադրությունում միջազգային կոոպերացիայի անհրաժեշտությունն դարձել է ակնառու՝ մասնակիցների միջև արտադրության ծախսերի և ռիսկերի վերաբաշխման պայմանով: Հայաստանը, սակայն, այս գործընթացներին պատշաճ մասնակցություն չի ցուցաբերում, մինչդեռ հատկապես այժմ, երբ պետությունը հաստատակամորեն իր առջև դրել է ռազմաարդյունաբերության զարգացման խնդիր, նման համագործակցությունը կարող է էապես նպաստել ոլորտի տեխնոլոգիական և գիտական հիմքերի զարգացմանը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Ռազմական տնտեսության զարգացման գործում արդյունավետ արտաքին քաղաքականությունը պահանջում է ռազմաքաղաքական և ռազմատնտեսական կողմնորոշիչների հստակեցում, ինչպես նաև՝ ճիշտ ռազմական դի-

[12] Տես *Г. А. Горностаев, А. Г. Горностаев.* Международная научно-производственная кооперация оборонных предприятий: необходимость и задачи развития для России. «Проблемы прогнозирования», 2001, № 4:

վանագիտության* մշակում: Վերջինս արտաքին ռազմատնտեսական համագործակցության հաստատման ու ընդլայնման կարևոր գրավականն է, քանի որ նպատակաուղղված է երկրների միջև փոխադարձ վստահության մակարդակի բարձրացմանը, շահերի հնարավոր բախման պարագայում փոխզիջումային տարբերակների որոնմանը և համերաշխության ապահովմանը: Ռազմական (պաշտպանական) դիվանագիտությունը կարելի է բնորոշել որպես պետության պաշտպանական գերատեսչության և այլ պետական հաստատությունների ներկայացուցիչների գործողությունների համախումբ, որը նպատակաուղղված է անվտանգության և պաշտպանական քաղաքականության բնագավառում պետության արտաքին քաղաքական շահերի առաջմղմանը, և որը հիմնված է բանակցությունների ու այլ դիվանագիտական գործիքների կիրառման վրա[13]: Ռազմական դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների քիչ ուսումնասիրված բնագավառներից է, քանի որ պետական մարմինները հաճախ չեն հրապարակում ռազմական դիվանագիտությանն առնչվող տեղեկությունները՝ անվտանգության պահանջներից ելնելով:

Կարելի է առանձնացնել միջազգային հարաբերությունների մի քանի ուղղություններ, որոնք կարգավորվում են ռազմական դիվանագիտության շրջանակներում[14]: Ընդ որում, հարաբերությունների նմանօրինակ կարգավորումը կարող է կատարվել մի քանի եղանակով՝ ռազմական գերատեսչությունների միջև ուղղակի համաձայնագրերի կնքմամբ, ՍՈՏ փոխանցմամբ (անհատույց, արտոնյալ կամ շուկայական պայմաններով), հակազդեցության միասնական քաղաքականության մշակմամբ և այլն: Գործնականում այս փոխգործությունը կարող է դրսևորվել համատեղ զորավարժությունների և կադրերի վերապատրաստման, հակամարտային իրավիճակներում միացյալ գործողությունների (օրինակ՝ խաղաղապահական), ինչպես նաև՝ սպառազինությունների տեխնիկական ստանդարտների մշակման և սպասարկման ծառայությունների տրամադրման ձևով:

Ժամանակակից համաշխարհային աշխարհաքաղաքական ու տնտեսական իրողություններում ռազմական դիվանագիտության կարևոր ոլորտ է նաև սպառազինությունների արտահանման պայմանագրերի կնքումը: Ընդ որում,

* Թեև ռազմական դիվանագիտության գլխավոր գործառույթը ընդունող պետության զինված ուժերի և անվտանգային իրավիճակի մասին տեղեկույթի հավաքումն ու վերլուծումն է (տես *Erik Pajtinka*. Military Diplomacy and Its Present Functions. “Security Dimensions: International and National Studies”, 2016, N 20); *А. В. Фролов*. Военная дипломатия как история и искусство. «Международная жизнь», 2012, № 2), սակայն գործառույթների թվում է նաև աջակցությունը ուղարկած և ընդունող պետությունների միջև սպառազինության և ռազմական տեխնիկայի վերաբերյալ պայմանագրերի կնքմանը: – *Խմբ.*:

[13] Տես *Էրիկ Պայտինկա,* Նշ. աշխ.:

[14] Տես “The Military balance 2009”. International Institute for Strategic Studies. London, 2009:

բազմաթիվ դեպքերում սպառազինությունների արտահանումը միաժամանակ և՛ պետության պաշտպանական քաղաքականության (ռազմական դիվանագիտության) բաղադրիչ է՝ ազդեցության մի յուրօրինակ լծակ, և՛ ռազմատնտեսական անվտանգության ապահովման միջոց: Օրինակ՝ ռազմավարական զինատեսակներ արտադրող պետությունները դրանք կարող են արտահանել իրենց տարածաշրջանային կամ աշխարհաքաղաքական դիրքն ամրապնդելու նկատառումներով և միայն այն պետությունները, որոնք ունեն «ռազմական դաշնակցի» կարգավիճակ և, ըստ անհրաժեշտության, դրանք կկիրառեն համաձայն «ընդհանուր շահերի»: Դրա հետ մեկտեղ, արտահանող պետությունը, «դաշնակից պետությանը» դնելով սպառազինությունների մատակարարումներից կախվածության մեջ, կարող է նրա նկատմամբ կիրառել որոշակի քաղաքական պարտադրանք: Փոխադարձ կախվածության աճումն առավել ակնառու կերպով դրսևորվում է ռազմաքաղաքական միություններում, որտեղ համաձայնեցվում են բոլոր պաշտպանական գործողությունները[15]: Նկատենք նաև, որ սպառազինությունների հիմնական համաշխարհային արտադրողները հակված են չվաճառելու արդիական սպառազինությունները՝ նորամուծական տեխնոլոգիաների տարածումը կանխելու նպատակով, մինչդեռ ոչ արդիական ՍՈՏ-ները կարող են նույնիսկ նվիրվել կամ վաճառվել շուկայականից ցածր գնով:

Այսպիսով՝ թեև սպառազինությունների համաշխարհային շուկայում հիմնական վաճառողները մասնավոր ձեռնարկություններն են, այնուամենայնիվ, այդ գործարքները վերահսկում են, իսկ հաճախ՝ ուղղակիորեն իրականացնում պետական մարմինները: Նույնը կարելի է ասել նաև ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային կոոպերացիայի մասին, քանի որ դրա վերաբերյալ պայմանագրերն ու համաձայնագրերը, ըստ էության, կնքվում են պաշտպանական դիվանագիտության միջոցով: Ավելին. հաճախ մասնավոր ձեռնարկությունների միջև նման կոոպերացման նախաձեռնությունը պատկանում է պետական պատվիրատուին՝ հանդես գալով որպես ռազմական դիվանագիտության առանձին գործառույթ (օրինակ՝ Ռուսաստանում): Որպես արդյունք՝ ռազմաարդյունաբերության ոլորտում պետությունների համագործակցությունը ՍՈՏ արտադրության և փոխանցման առանձնահատկությունների, արտադրական ու տեխնոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրների և հովանավորչական քաղաքականության հետևանքով ընթանում է զգալի բարդություններով և պայմանականություններով: Անկախ այն հանգամանքից, թե ինչ տեսքով է տեղի ունենում այդ համագործակցությունը, գոյություն ունեն մի շարք հանգամանքներ ու պայմաններ, որոնք բոլոր գործարքների դեպքում ուսումնասիրվում են առանձին՝ ռազմական դիվանագիտության տեսանկյունից նպատակահարմարությունը գնահատելու համար: Դրանք են՝

[15] Տես *K. A. Muthana*. Military diplomacy. “Journal of Defense Studies”, January 2011, Vol. 5, N 1 (http://www.idsa.in/system/files/jds_5_1_kamuthanna.pdf):

- գործարքի համապատասխանությունը համագործակցող պետությունների օրինական անվտանգային կարիքներին,
- դոնոր պետության ազգային և տարածաշրջանային կայունության շահերին չհակասումը, հատկապես երբ սպառազինության կամ տեխնոլոգիայի փոխանցումը կարող է մեծացնել լարվածությունը և նպաստել սպառազինությունների մրցավազքին,
- ստացող (ռեցիպիենտ) պետության երաշխիքները, որ հատուկ տեխնոլոգիաները չեն փոխանցվի երրորդ կողմին կամ չեն կիրառվի որևէ այլ չթույլատրված կերպով,
- դոնոր պետության ռազմավարական շահերի առաջնմանն աջակցելու աստիճանը, որը կարող է ենթադրել ազդեցության ընդլայնում, պետությունների միջև ռիսկերի և պարտավորությունների բաշխում, արդյունավետ փոխգործություն,
- մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության հաստատման, ահաբեկչության դեմ պայքարի ոլորտներում գնորդ պետության գործադրած ջանքերը,
- ազդեցությունը դոնոր պետության արդյունաբերության և, մասնավորապես, ռազմաարդյունաբերական բազայի վրա,
- ստացող պետության կարողությունը պահպանելու ստացված սպառազինության համակարգը և պատշաճ կերպով օգտագործելու ըստ նախանշանակման*:

Փաստորեն, ռազմաարդյունաբերության ոլորտում ռազմական դիվանագիտության կարևոր խնդիրներից մեկն է միջազգային համագործակցության ժամանակ գտնել ու պահպանել օպտիմալ հաշվեկշիռը տվյալ պետության աշխարհաքաղաքական շահերի, սպառազինությունների առաջատար արտադրողների հետ արտադրատեխնոլոգիական համագործակցության և այնպիսի վճարունակ ներմուծողների միջև, որոնց հետ գործարքները չեն վնասի իր՝ որպես մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական նորմերին ու ժողովրդավարության պաշտպանությանը հավատարիմ, ահաբեկչության դեմ պայքարին արդյունավետ կերպով մասնակցող պետության միջազգային համբավին: Նման գործարքներում տնտեսական շահավետության հարցը առաջին հայացքից ստանում է երկրորդական նշանակություն: Սակայն, գործնականում, երևույթների ավելի խորքային ուսումնասիրությամբ ի հայտ են բերվում այլ իրողություններ, այն է՝ ցանկացած պարագայում սպառազինությունը վաճառվում է այն պետությանը, որը դրա համար լավ է վճարում: Մյուս կողմից՝ դիվանագիտական ճանապարհով ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքումը (լիցենզավորված

* Ներկայացված է ԱՄՆ-ի սովորական սպառազինությունների վաճառքի քաղաքականության (U.S. Conventional Arms Transfer Policy) նորմերի համանմանությամբ (տես *T. S. Kaidanow.* Foreign Military Sales: Process and Policy, 15 June 2017 (https://www.state.gov/t/pm/rls/rm/2017/271928.htm)):

արտադրություն, համատեղ ձեռնարկությունների ստեղծում և այլն) կարող է ապահովել էական տնտեսական էֆեկտ՝ հանգեցնելով տնտեսությունում մի շարք փոխկապված արտադրական ոլորտների զարգացմանը:

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Հայաստանի արտաքին ռազմատնտեսական քաղաքականության կողմնորոշիչները ձևավորվել են տարածաշրջանային իրողություններին համարժեք կերպով արձագանքելու պահանջով՝ անվտանգության ապահովման խնդիրներին համապատասխան: Այս ուղղությամբ միջազգային համագործակցությունն իրականացվում է ինչպես առանձին պետությունների հետ երկկողմ համաձայնագրերի, այնպես էլ բազմակողմ համաձայնությունների հիմքով՝ անվտանգության խնդիրները կարգավորող տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Ընդ որում, ըստ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության[16] և ՀՀ ռազմական դոկտրինի[17] դրույթների՝ անվտանգության ռազմաքաղաքական ապահովման հիմնական բաղադրիչներն ու ուղղություններն են.

- Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունները, համագործակցությունը պաշտպանական և ռազմատեխնիկական ոլորտներում, հաստատված ռազմավարական գործընկերությունը,
- անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), ակտիվ և գործնական մասնակցությունն այդ կառույցի ծրագրերին,
- երկկողմ ռազմական համագործակցությունը, մասնավորապես՝ ԱՄՆ-ի (պաշտպանական բարեփոխումների իրականացման, փոխգործակցելի ստորաբաժանումների ստեղծման, միջազգային կայունացման և խաղաղապահական գործողություններին մասնակցության ուղղությամբ) և Հունաստանի հետ,
- ՆԱՏՕ-ի և նրա անդամ պետությունների հետ համագործակցությունը Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի, «Անհատական գործընկերության գործողությունների» և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրերի շրջանակներում,
- համագործակցությունը անվտանգության միջազգային կազմակերպությունների հետ, ներառյալ՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության անվտանգության մարմինները,

[16] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007: Այն հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում:

[17] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4: Ընդունվել է 2007 թ. դեկտեմբերի 25-ին:

- համագործակցությունը տարածաշրջանային և արտատարածաշրջանային այն պետությունների հետ, որոնց քաղաքականությունը չի հակասում Հայաստանի ազգային անվտանգության հիմնարար արժեքներին:

Միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության հիմնական նպատակներ են հայտարարված (ի թիվս այլ նպատակների) Զինված ուժերի արդիականացման գործում միջազգային փորձի և օգնության օգտագործումը, Զինված ուժերի կադրերի ուսուցման ու վերապատրաստման, ՍՈՏ ապահովման պահանջների բավարարումը, ռազմական արդյունաբերության համալիրի զարգացումն ու վերակառուցումը[18]:

Դժվար չէ նկատել, որ միջազգային համագործակցության հանգույցներում Հայաստանը ձգտել է մնալու արտաքին քաղաքականության բազմավեկտորության շրջանակներում, թեև գործնականում այդ հարաբերություններում անհամեմատ մեծ կշիռ է ունեցել Ռուսաստանը, որի հետ համագործակցությունը որակված է որպես «ռազմավարական»: Այս հետազոտությունում փորձել ենք վերլուծել, թե ինչու Հայաստանը՝ ռազմավարական դաշնակից ունենալով աշխարհում ՍՈՏ արտահանող երկրորդ խոշոր պետությունը, մինչ օրս չունի քիչ, թե շատ զարգացած ռազմաարդյունաբերություն: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանը խորհրդային տարիներին իր զգալի ներդրումն է ունեցել խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման գործում, և երկրում այսօր էլ առկա է ռազմաարդյունաբերական արտադրանքի թողարկման համար[19] զգալի ներուժ:

Հայտնի է, որ ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային գիտաարտադրական արժեշղթաները միտում ունեն զարգանալու ռազմավարական դաշինքի կամ որոշակի ռազմաքաղաքական բլոկի և համաձայնագրերի շրջանակում, քանի որ այդպիսով կարելի է վերահսկել այն ազդեցությունը, որը ռազմական տեխնոլոգիաների տարածումը կարող է գործել ազգային տնտեսության և միջազգային անվտանգության վրա[20]: Այս տեսանկյունից նույնպես Ռուսաստանի համար ռազմաարդյունաբերության ոլորտում կոոպերացիոն կապերի հաստատման համար լավագույն պետություններից է Հայաստանը: Անշուշտ, կարելի է ներկայացնել երկու երկրների միջև արդյունավետ կոոպերացիա չլինելը հիմնավորող որոշ փաստարկներ (Ռուսաստանի վարած հովանավորչական քաղաքականությունը, Հայաստանի անկայուն աշխարհաքաղաքական կացությունը, հայկական կողմի սահմանափակ ներդրումային հնարավորությունները, օրենսդրահիրավական դաշտի անհամատեղելիությունը և այլն), սակայն անգամ դրանց դեպքում էլ առկա են նաև հակափաստարկներ (ԵԱՏՄ-ին անդամակցությունը, ինչն անթույլատրելի է դարձնում հովանավորչությունը, Հայաստանում Ռուսաստանի՝

[18] Տես նույն տեղում:

[19] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Գ. Հարությունյան,* Ռազմաարդյունաբերություն. գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ: Ե., 2018, էջ 96–120:

[20] Տես *Գ. Ա. Գորնոստաև, Ա. Գ. Գորնոստաև,* Նշ. աշխ.:

որպես աշխարհաքաղաքական կայունության երաշխավորի ռազմական ներկայությունը, օրենսդրահիրավական դաշտը ներդաշնակելու հայկական կողմի պատրաստակամությունը և այլն): Հիմնավորված չէ նաև այն դիրքորոշումը, թե Ռուսաստանը, ռազմաարդյունաբերության ոլորտում ունենալով համեմատական առավելություններ, խուսափում է դրանք «վերաբաշխելուց» այն գործընկերների միջև, որոնք նաև ռուսական ռազմական արտադրանքի հիմնական սպառողներն են (ավանդական վաճառահանման շուկաներ չկորցնելու նկատառումներով), քանի որ Հայաստանի պարագայում Ռուսաստանը բախվում է ոչ վճարունակ պահանջարկի հետ, որը բավարարելուն միշտ չէ, որ պատրաստակամ է: Ակնհայտորեն պատճառներ պետք է փնտրել այլ տիրույթում. ռազմաարդյունաբերության ոլորտում հայ-ռուսական համագործակցության հաջող նախաձեռնությունները պահանջում են դիվանագիտական լուծումներ, դրանց տնտեսական հիմնավորումներն ուժաբեկ են:

Գոյություն ունեն նաև մի շարք օբյեկտիվ պատճառներ, որոնք խոչընդոտում են ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցությանը ոչ միայն Ռուսաստանի, այլև ուրիշ պետությունների հետ: Դրանցից ամենակարևորը Ադրբեջանի և Թուրքիայի ձեռնարկած տրանսպորտային շրջափակումն է: Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով՝ տրանսպորտային ապաշրջափակման և տրանսպորտային հաղորդակցության զարգացման շնորհիվ ՀՀ արտահանումը կկրկնապատկվի, իսկ ՀՆԱ-ն կաճի ավելի քան 30 %-ով: Շրջափակման վերացմամբ տրանսպորտային ծախսերը կկրճատվեն 30-35 %-ով[21]: Այս տեսանկյունից մեծ կարևորություն է ձեռք բերում միջազգային տրանսպորտային երթուղիներին Հայաստանի ինտեգրումը, որը կնպաստի նաև սպառազինությունների մատակարարման շղթայի բազմազանեցմանը: Հատուկ ուշադրության է արժանի Պարսից ծոց–Սև ծով բազմատեսակ (մուլտիմոդալ) միջազգային տրանսպորտային միջանցքը (դրանում Հայաստանի և Իրանի մասնակցությամբ) Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծին ինտեգրելու հնարավորությունը, ինչպես նաև Հայաստան–Իրան–Չինաստան եռակողմ համագործակցության ձևավորմանը նպատակաուղղված քաղաքականության մշակումը: Նկատենք, որ Հայաստանի տեսանկյունից՝ նման քաղաքականությունը չի հակասի նաև Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերության սկզբունքներին, քանի որ համաշխարհային աշխարհաքաղաքական թատերաբեմում արդեն սկսել են նշմարվել Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի անվտանգային քաղաքականությունների համաձայնեցման միտումներ: Աստիճանաբար խորանում է նաև ռուս-չինական երկկողմ ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական համագործակցությունը ավիաշինության, ավիացիոն և հրթիռային սպառազինությունների, ծովային բազավորմամբ հրթիռային և մարտական կառավարվող համակարգերի ապահովման բաղադրիչների

[21] Տես «ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները մաքսային միության անդամակցության պայմաններում»: Ե., 2015, էջ 14–15 (https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Amberd_24.pdf):

արտադրության ոլորտներում[22]: Կարևոր հանգամանք է նաև այն, որ Չինաստանը ռազմավարական նշանակություն է տալիս «Գոտի և Ճանապարհ» նախագծին Ռուսաստանի և Իրանի մասնակցությանը:

Ռազմավարական շահերի այս խաչմերուկում էլ անհրաժեշտ է որոնել Հայաստանի ռազմաարդյունաբերության զարգացման «միջազգային» հեռանկարը: Օրինակ՝ կարող է նշված երեք խոշոր պետությունների համագործակցության առավել հավանական ոլորտ դառնալ օդատիեզերական պաշտպանության համատեղ համակարգի և միասնական տեղեկատվահաղորդակցային տարածության ստեղծումը: Ակնհայտ է, որ նման համագործակցությունը պահանջելու է համատեղ հսկայածավալ ռազմական կարողությունների ձևավորում, ինչը առաջ կբերի թե՛ հարձակողական, թե՛ պաշտպանական բնույթի ՍՈՏ մեծ պահանջարկ, որը, հավանաբար, երեք պետությունները կփորձեն բավարարել համատեղ ուժերով: Հայաստանը նույնպես կարող է այդ պահանջարկի բավարարման գործում ունենալ իր դերը, եթե հնարավորություն ստանա իր համեմատական առավելություններին համապատասխան մասնակցելու Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի ռազմաարդյունաբերական արտադրական արժեշթաներին: Մյուս կողմից՝ օդատիեզերական պաշտպանության համատեղ (եռակողմ) համակարգին կարելի կլինի արդյունավետ կերպով ինտեգրել Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի միջև ստեղծած՝ հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգը[*]:

Ի դեպ, ՀԱՊԿ-ի առնչությամբ պետք է նկատել, որ թեև ձևավորման սկզբնական շրջանում նա հիմնականում հաջողությամբ է կատարել իր առաջ դրված խնդիրները, այնուամենայնիվ, չէր կարող հաշվի առնել բոլոր գրավված պետությունների ռազմավարական շահերը և պետությունների ու տարածաշրջանների անվտանգությունը պայմանավորող բոլոր գործոնները: Ավելի ուշ՝ 2005–2006 թվականներին, ակնհայտ դարձավ, որ այդ կազմակերպությունը պետք է վերադառնա բազմաֆունկցիոնալ, ընդ որում, կոլեկտիվ անվտանգության ապահովման գործառույթը պետք է իրականացվի ոչ միայն ռազմական, այլև ուրիշ ոլորտներում ծավալվելիք համագործակցությամբ: Նման պայմաններում ՀԱՊԿ-ի անվտանգության ավելի կատարյալ և արդյունավետ համակարգին անցնելու համար առաջացել է նոր ռազմավարական հայեցակարգի մշակման անհրաժեշտություն, որում հաշվի կառնվեն բազմաֆունկցիոնալության պահանջը և դրա ապահովման գործում միջազգային համագործակցության անայլընտրանքայնությունը[23]:

---

[22] Տես *K. W. Allen.* China's foreign military relations. "Journal of Contemporary China", 2011, Vol. 10, N 29:

[*] Այս համակարգի ստեղծման համաձայնագիրը ստորագրվել է 2015 թ. դեկտեմբերի 23-ին, Մոսկվայում:

[23] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Գ. Ս. Կոտանջյան.* Стратегическая концепция развития коллективной безопасности ՕԴԿԲ. «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 3: Ե., 2014, էջ 258:

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПРОБЛЕМЫ МЕЖДУНАРОДНОГО СОТРУДНИЧЕСТВА В ОБЛАСТИ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ: КРИТИЧЕСКИЙ АНАЛИЗ

Г. Э. АРУТЮНЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик Центра регионального стратегического анализа ИНСИ НИУО МО РА,
А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Центра регионального стратегического анализа ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Для противодействия постоянно трансформирующимся вызовам безопасности существенное значение имеет развитие военно-экономического потенциала государства, одним из основополагающих факторов которого является эффективное международное сотрудничество в военно-промышленной сфере. Данное сотрудничество подразумевает постоянное совершенствование вооружения, военной техники и мобилизационного потенциала путем соблюдения национальных интересов государства, последовательного исполнения международных обязательств и углубления военно-политического сотрудничества. Подобное сотрудничество осуществляется посредством использования конкурентного инструментария военной дипломатии в основных направлениях международного сотрудничества, осуществляемого в сфере военной промышленности. Причем ориентиры международного сотрудничества в военно-промышленной сфере меняются в зависимости от императивов мирной и военной обстановки, что приводит к изменению внешнеполитических целей по наращиванию военного и военно-промышленного потенциала государства, а также путей их достижения.

ECONOMIC SECURITY

PROBLEMS OF INTERNATIONAL COOPERATION IN THE SPHERE OF MILITARY INDUSTRY: CRITICAL ANALYSIS

G. E. HARUTYUNYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, A. G. DAVTYAN, PhD in Economics, Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

For counteracting constantly modifying security challenges it is essential to develop the state's military and economic potential, one of fundamental factors of which is the effective international cooperation in the military-industrial sphere. This implies continuous improvement of armament,

military equipment and mobilization potential by pursuing national interests of the state, consistent performance of international obligations and enhancing military and political cooperation. Such cooperation is carried out by the use of competitive tools of military diplomacy in the main directions of international cooperation implemented in defense industry. Moreover the guidelines for international cooperation in military-industrial sphere vary depending on the imperatives of the peaceful and military environment, which leads to the modification in foreign policy objectives aimed at the state military and military-industrial capacity-building, as well as in the ways of achieving them.

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ն. Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, լեյտենանտ, «Զինուժ մեդիա» պետական հիմնարկի հեռուստալրագրող, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի «ռազմական ժուռնալիստիկա» դասընթացի դասախոս

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*



Արցախյան պատերազմի մասին նկարահանվել են տասնյակ վավերագրական ֆիլմեր (դրանց ստույգ թիվը դժվար է ասել): Վերջերս լույս տեսած «Նրանք նկարում էին պատերազմը» գրքում տեղ են գտել 1991–1994 թթ. Արցախյան պատերազմի առաջին գծում նկարահանումներ կատարած 34 կինովավերագրողների հետ լրագրող Ալիսա Գևորգյանի հարցազրույցները[1]: Բացի նրանցից, կան նաև տասնյակ լրագրողներ ու ռեժիսորներ, որոնք, անձամբ չլինելով ռազմաճակատում, արխիվային նյութերի հիման վրա պատերազմի մասին վավերագրական ֆիլմեր են ստեղծել նաև զինադադարից հետո: Սույն հոդվածի նպատակն է հայ-ադրբեջանական տեղեկութահոգեբանական պատերազմում կինովավերագրության դերի և որոշ առանձնահատկությունների վերլուծությունը՝ դրա զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակման նպատակով:

Ի՞ՆՉ Է ԿԻՆՈՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վավերագրական կինոն** կինեմատոգրաֆիայի տեսակ է, որում նկարահանվում են իրական աշխարհի իրական մարդիկ իրական շրջապատում կամ այդ իրական աշխարհն իր երևույթներով ու իրադարձություններով[2]: Վավերագրական ֆիլմի տեսակներն են իրադարձությունների ժամանակագրութ-

* Սույն հոդվածը գրված է Արցախյան պատերազմի մասին ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական բազմաթիվ վավերագրական ֆիլմերի դիտման ու վերլուծության հիման վրա:

[1] Տես «Նրանք նկարում էին պատերազմը»: «Mediamax», 11.05.2017 (https://mediamax.am/am/news/media/23392/):

** Անվանում են նաև ոչ խաղարկային կինո՝ ի տարբերություն խաղարկային կամ գեղարվեստական կինոյից: Նկատենք, որ այդ անվանումը («ոչ խաղարկային կինո») ավելի ճշգրիտ է, քանի որ վավերագրական ֆիլմը ևս կարող է լինել գեղարվեստական, այսինքն՝ լինել արվեստի գործ:

[2] Տես «Документальное кино». «Энциклопедия Кругосвет» (http://www.krugosvet.ru/enc/kultura_i_obrazovanie/teatr_i_kino/DOKUMENTALNOE_KINO.html):

յունը, կինոտարեգրությունը (երբ նկարահանումները կատարվում են ոչ թե օպերատիվ իրազեկման, այլ պատմությանն ի պահ տալու համար), կինոարձանագրումը հատուկ նպատակների համար (գիտական նկարահանումներ, ոստիկանական արձանագրություններ, տեսանկարահանում), հեղինակային լրագրություն և կինովավերագրական արվեստ: Վերջին երկուսն իրենց հերթին բաժանվում են բազմաթիվ ժանրերի՝ կինոռեպորտաժ, կինոակնարկ, կինոհետազոտություն, սոցիալական կինոհրապարակախոսություն, կինոօրագիր, կինոկատակերգություն, կինոպոեզիա, կինոողբերգություն և այլն: Վավերագրական կինոյի ժանրերը (տեսակները) անընդհատ փոխակերպվում են, առաջ են գալիս նոր ժանրեր[3]:

Առաջին վավերագրական ֆիլմը, որը ցույց էր տալիս գնացքի ժամանումը Լա Սիոտա կայարան, նկարահանել են ֆրանսիացի Լյումեր եղբայրները 1895 թ. դեկտեմբերի 28-ին: Սակայն վավերագրական կինոյի հիմնադիր է համարվում ամերիկացի Ռոբերտ Ֆլաերտին, որը 1922 թ. նկարահանում է «Նանուկան հյուսիսից» ֆիլմը բնության տարերքի դեմ կռվող էսկիմոսի մասին (որտեղից էլ, ի դեպ, պաղպաղակի «էսկիմո» հանրահայտ տեսակի անվանումը. այն վաճառվում էր կինոթատրոնների ճեմասրահներում): Ֆլաերտիի սկզբունքն էր իր հերոսներին նկարահանել նրանց համար սովորական պայմաններում, ինչի շնորհիվ նրանց պահվածքը բնական էր:

Ֆլաերտիի գաղափարական հակոտնյան խորհրդային վավերագրական կինոյի հիմնադիր Ջիգա Վերտովն էր, որը կինոարվեստը հարստացրել է նկարահանումների բազմաթիվ հնարքներով, այդ թվում՝ «թաքնված տեսախցիկի» կիրառմամբ, 1929 թ. նկարահանել է «Կինոապարատով մարդը» վավերագրական ֆիլմը: Վերտովը փնտրում էր զանգվածային լսարանի վրա ազդելու միջոցներ, և նրա ստեղծագործությունները խիստ գաղափարայնացված են. նա վավերագրական ֆիլմի գլխավոր նպատակն էր համարում հանդիսատեսին եզրակացության հանգեցնելը, և կինովավերագրությունը նրա համար սոցիալիստական հեղափոխության գաղափարների քարոզչության միջոց էր[4]:

Խորհրդային կինոռեժիսոր Եսթեր Շուբը 1920-ականների վերջում հայտնագործում է վավերագրական կադրերի այն առանձնահատկությունը, որ դրանք նոր իմաստ են ստանում, երբ տեղադրվում են այլ համատեքստում, և դրանով իսկ կարող են դառնալ հզոր գաղափարախոսական գործիք: Ե. Շուբի ստեղծագործական պրպտումները ծնունդ տվեցին մոնտաժային ֆիլմերին:

Վավերագրական կինոյի զարգացման հաջորդ ազդակը տվեց անգլիացի Ջոն Գրիրսոնը, որը մասնագիտությամբ սոցիոլոգ էր և վավերագրական կինոն համարում էր ոչ թե արվեստի բնագավառ, այլ նոր տեսակի լրագրություն, քարոզչի ամբիոն, քարոզչության և հասարակության վրա ազդելու

[3] Տես նույն տեղում:

[4] Տես նույն տեղում:

միջոց: Եթե մինչ այդ կինովավերագրողներից շատերը ճամփորդում էին՝ տարաշխարհիկ երևույթներ նկարահանելու համար, ապա նա 1929 թ. հռչակվեց իր «Ձկնորսանավեր» ֆիլմով, որը պատկերում էր Բրիտանիայի ձկնորսների առօրյա կյանքը: Եթե Ռ. Ֆլաերտին համարում էր, որ սցենարը կինովավերագրողի համար պայմանական է, քանի որ իրականությունը կարող է դրանում մտցնել կտրուկ փոփոխություններ, ապա Գրիրսոնի կարծիքով՝ նկարահանումները պետք է կատարվեն մանրակրկիտ սցենարի (ծրագրի) համաձայն: Հետագա տարիներին սցենարի մասին վեճերը չդադարեցին, սակայն ժամանակի ընթացքում գերակշռող դարձավ վավերագրական կինոյի այն վարպետների տեսակետը, ըստ որի՝ սցենարը պետք է ազատ կերպով կառուցվի նկարահանումների ընթացքում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին վավերագրական կինոն լիովին ծառայեցվեց ծառայության քարոզչությանը: ԽՍՀՄ 252 ռազմաճակատային կինոօպերատորները Հայրենական Մեծ պատերազմի 1418 օրերի ընթացքում նկարահանել են 3,5 մլն մետր կինոժապավեն, զոհվել է նրանցից յուրաքանչյուր հինգերորդը, իսկ ողջ մնացածներից համարյա բոլորը վիրավորվել են կամ ցնցակաթված ստացել, ինչպես վկայում է նրանցից մեկը՝ Ս. Շկոլնիկովը:

Վավերագրական կինոյի զարգացմանը նպաստեց նաև այն, որ պատերազմի տարիներին կինովավերագրությամբ սկսեցին զբաղվել նաև խաղարկային կինոյի վարպետները, ինչպիսիք են Ալեքսանդր Դովժենկոն («Ճակատամարտ հանուն մեր խորհրդային Ուկրաինայի», 1943), Սերգեյ Յուտկևիչը («Ազատագրված Ֆրանսիա», 1944), Յուլի Ռայզմանը («Բեռլին», 1945), Ալեքսանդր Զարխին և Իոսիֆ Խեյֆիցը («Ճապոնիայի ջախջախումը», 1945): Նրանք վավերագրական կինոն հարստացրին կերպարի պատկերման խնդրի նոր լուծումներով, գեղարվեստական ընդհանրացումներով և շեշտեցին ֆիլմի հեղինակի դիրքորոշումը:

Պատերազմի տարիներին ԱՄՆ-ում Պենտագոնի պատվերով ստեղծվել էր կինովավերագրողների խումբ (ռեժիսորներ Ջոն Հյուստոն, Ջոն Ֆորդ, Լուիս Մայլստոուն, օպերատոր Գրեգ Թոլանդ, խմբի ղեկավար՝ խաղարկային կինոյի մեծ վարպետ Ֆրենկ Կապրա), որի նպատակն էր նկարահանված ֆիլմերի միջոցով շարքային ամերիկացուն բացատրել ֆաշիզմի դեմ պայքարի նպատակներն ու խնդիրները: Խմբի աշխատանքի արդյունքներից է «Ճակատամարտ Ռուսաստանի համար» (1943) ֆիլմը:

Ֆաշիզմի դեմ պայքարին մասնակցում էին նաև Անգլիայի կինովավերագրողները, որոնցից հիշատակման է արժանի Հեմֆրի Ջենինգսը՝ իր «Լոնդոնը դրան կդիմանա» (1940), «Լսիր Բրիտանիային» (1942), «Հրդեհներն սկսվեցին» (1943), «Օրագիր Թիմոտիի համար» (1945) և այլ ֆիլմերով: Նա պատկերում էր պատերազմ վարող երկրի առօրյան, հասարակ մարդկանց՝ հրշեջների, երաժիշտների, պետական ծառայողների, տնային տնտեսուհիների, մանկապարտեզների դաստիարակչուհիների առօրեա-

կան դարձած հերոսությունը: Այդ ֆիլմերը ամրապնդում էին ազգի ոգին՝ մարդկանց ներշնչելով հաղթանակի նկատմամբ հավատ ու վստահություն[5]:

Կինովավերագրության մեջ նորարարության շունչ է բերում խորհրդային կինոռեժիսոր Միխայիլ Ռոմի «Սովորական ֆաշիզմ» (1965) ֆիլմը, որը ոչ միայն հիտլերյան ֆաշիզմի, այլև ընդհանրապես ամբողջատիրության մասին է: Ռեժիսորը հրաժարվել է այն տարիներին ընդունված դիկտորական տեքստից և հենց ինքն է խոսում հանդիսատեսի հետ՝ ներկայացնելով իր խորհրդածությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվում է Սառը պատերազմի ժամանակաշրջանը, և կինովավերագրությունը ինչպես ԽՍՀՄ-ում և սոցիալիստական ճամբարի երկրներում, այնպես էլ Արևմուտքում լծվում է քարոզչության գործին. նրա թեմատիկայից դուրս է մնում մարդն իր պրոբլեմներով: 1960–1970-ական թվականներին նույնպես խորհրդային խաղարկային ֆիլմի վարպետները՝ Վասիլի Օրդինսկին, Մառլեն Խուցիևը, Գրիգորի Չուխրայը, Ֆրիդրիխ Էրմլերը, Սերգեյ Յուտկևիչը, ինչպես նաև արվեստի մյուս տեսակների ներկայացուցիչներ Սերգեյ Օբրազցովը, Կոնստանտին Սիմոնովը, Սերգեյ Սմիռնովը և ուրիշներ գալիս են կինովավերագրության ոլորտ: Նրանք թարմություն են մտցնում հատկապես պատմական թեմաներն արծարծող կինովավերագրության մեջ, որին մինչ այդ բնորոշ էր զուտ նկարազարդվածությունը: Հնում նկարահանված կադրերի հիման վրա կատարվում են սոցիալ-քաղաքական ընդհանրացումներ: Ստեղծվում է նոր ժանր՝ բազմասերիանոց վավերագրական ֆիլմ, նկարահանվում են «Մեծ Հայրենականը» (20 սերիա,1979) և «Ամենից թանկը» (8 սերիա,1981)[6]:

ԿԻՆՈՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՐՈԶՉԱՄԻՋՈՑ

Կինովավերագրության զարգացման թեկուզ այս համառոտ պատմությունը վկայում է, որ արվեստի այդ տեսակը համարյա իր ծննդյան պահից մինչև օրս գործածվում է որպես քարոզչության միջոց, ընդսմին քարոզչություն ասելով հասկանում ենք «տեղեկույթի նպատակամիտված տարածում՝ անհրաժեշտ կարծիքի ձևավորման և, հնարավոր է, նաև որոշակի քաղաքական գործողություններ սադրելու նպատակով»[7]:

Մեր կարծիքով՝ քարոզչամիջոց լինելը կինովավերագրության բուն էությունն է: Իսկապես, հաղորդագրությունը որպես քարոզչություն որակվելու համար պետք է բավարարի երեք հիմնական պայմանի. 1) այլ մարդկանց կարծիքը ձեռնածության ենթարկելու գիտակցված փորձի առկայություն, 2) հակամարտության կողմերից միայն մեկի ներկայացում, 3) հաղորդագրության հեղինակի դիտավորության խնամքով քողարկում[8]: Այժմ նկատի առնենք, որ վա-

[5] Տես նույն տեղում:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես *Эндрю Хейвуд*. Политология. Пер. с англ. М., 2005, с. 257:

[8] Տես *М. Кордуэлл*. Психология от А до Я: словарь-справочник. М., 2000:

վերագրական ֆիլմը բաղկացած է պատկերների հաջորդականությունից, որոնք ուղեկցվում են բարձրաձայն խոսքով ու երբեմն էլ գրավոր տեքստով: Ցանկացած պատկեր որևէ դիտանկյունից նայելու արդյունք է, իսկ դիտանկյան ընտրությունը թելադրված է ռեժիսորի մտադրությամբ: Հետևաբար՝ նույնիսկ եթե ռեժիսորը ճշմարտությունը թաքցնելու կամ նենգափոխելու *մտադրություն չունի*, նրա ներկայացրած տեղեկույթը խիստ սուբյեկտիվ է, և նրան *միշտ* կարելի է «մեղադրել» հանդիսատեսին *գիտակցված* կերպով *հենց այդ* և ոչ այլ պատկերներ, և հենց այդ և ոչ այլ հաջորդականությամբ ներկայացնելու մեջ, ինչն էլ հենց կարող է համարվել «ձեռնածության ենթարկելու գիտակցված փորձ»:

Բացի այդ, ֆիլմում ցուցադրվող պատկերներն ու խոսքը հանդիսատեսի մեջ առաջացնում են որոշակի զգացմունքներ ու տրամադրություն: Հոգեբանությունից հայտնի է, որ երբ տեղեկույթը մարդուն հաղորդվում է նրա հոգում զգացմունքներ գրգռելու հետ *միաժամանակ*, ապա այդ տեղեկույթը չի ընկալվում քննադատաբար, այն ասես շրջանցում է մարդու հոգեբանական պաշտպանությունը: Զգացմունքներ գրգռելու հետ միաժամանակ քարոզչական տեղեկույթ հաղորդելու հնարքը կոչվում է «զգացմունքային ռեզոնանս», որը ԶԼՄ-ներում լայնորեն կիրառվում է քարոզչական դրույթները զանգվածային լսարանին հրամցնելու նպատակով[9]: Օրինակ՝ ռադիո- կամ հեռուստահաղորդավարը, իր ձայնի տոնայնությունը փոխելով, լսարանի տրամադրությունը համապատասխանեցնում է հաղորդվող տեղեկույթի բովանդակությանը, ձևավորում է այդ տեղեկույթի (իրադարձության) նկատմամբ լսարանի *վերաբերմունքը:* Դիցուք՝ ողբերգական իրադարձությունների (աղետ, պատերազմ, ահաբեկչական գործողություն և այլն) մասին հաղորդելիս նա իր ձայնին տալիս է վշտալի կամ մեղավորների դեմ ուղղված զայրույթի տոնայնություն, իսկ երբ դրան հաջորդում է պետության ղեկավարի՝ ինչ-որ գործարան կատարած այցելության մասին հաղորդագրությունը, ապա ձայնի տոնայնությունը փոխում է «կառուցողական լավատեսության»: Սոցիալական մակածման (ինդուկցիա) կամ զգացմունքային վարակման երևույթի շնորհիվ նա իր ձայնի տոնայնությամբ արտահայտված զգացմունքներն ու տրամադրությունները փոխանցում է լսարանին: Այդ հնարքը կոչվում է «զգացմունքային հարմարում իրավիճակին»[10]:

Ասվածից բխում է, որ վավերագրական ֆիլմ դիտող մարդը միայն այն դեպքում կարող էր լիովին զերծ լինել զգացմունքային ռեզոնանսի հետևանքներից, եթե ֆիլմը նրա մեջ զգացմունքներ չառաջացներ: Բայց դա հնարավոր չէ *սկզբունքորեն*, և նույնիսկ ավելին. ֆիլմի հեղինակի *նպատակն է* հանդիսատեսի մեջ զգացմունքներ առաջացնելը, նրան *հուզելը:* Սա երկրորդ

[9] Տես *Виктор Сороченко*. Энциклопедия методов пропаганды (Как нас обрабатывают СМИ, политики и реклама). М., 2002 (https://psyfactor.org/propaganda.htm#%D1%80%D0%B5%D0%B7%D0%BE%D0%BD%D0%B0%D0%BD%D1%81):

[10] Տես նույն տեղում:

հիմնարար պատճառն է այն բանի, որ քարոզչության միջոց լինելը վավերագրական ֆիլմի էությունն է:

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ԿԻՆՈՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1991–1994 թթ. հայկական կինովավերագրության հիմնական ժանրը կինոխրոնիկան էր, այսինքն՝ ռազմադաշտում կատարվածի կինոարձանագրումը: Նկատենք, որ որքան էլ տարօրինակ է, դրա մեծ մասն անծանոթ է հայ հանդիսատեսին, ինչի պատճառներից մեկն էլ 1990-ականների առաջին կեսին հովհարային էլեկտրաանջատումներն էին, որոնք բնակչությանը զրկել էին հեռուստատեսության հաղորդումներ դիտելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է հետագա տարիներին նկարահանված վավերագրական ֆիլմերին, ապա դրանց հիմնական թեմաներն են հայ ռազմիկի հերոսությունը, հայ մարդու կենսասիրությունը և պատերազմատեցությունը: Հայաստանի փաստավավերագրական ֆիլմերի ստուդիայի կինեմատոգրաֆիստները նկարահանեցին «Արցախի վարպետներ» (1988 թ.), «Արցախյան օրագիր», «Շուշի՝ վերադարձ գերությունից» (1992 թ.), «Թռիչքներ դեպի պատերազմ» (1992 թ.), «Անհուն անդորրի շրշյունը» (1993 թ.), «Անվերջ ձգվող դասամիջոց» ֆիլմերը, որոնք ըստ էության Արցախյան պատերազմի կինովավերագրության առաջին լուրջ փորձերն էին: Այդ տարիներին կինոռեժիսոր Շավարշ Վարդանյանը նկարահանեց «Հայաստան», «20 օր Արցախում», «Ղարաբաղյան շարժում», «Շրջափակում» և այլ ֆիլմեր: Լրագրող Բակուր Կարապետյանի «Բռնագաղթ», «Շրջափակում», «Բերդաքաղաք» ֆիլմերի ցուցադրություններ կազմակերպվեցին արտերկրում և սփյուռքի հայկական գաղթօջախներում:

Ներկայացնենք հայ, ադրբեջանցի և օտարազգի ռեժիսորների նկարահանած վավերագրական ֆիլմերի մի քանի օրինակ:

«Ղարաբաղի վերքերը» ֆիլմաշար, 1991–2001 թթ., հեղինակ՝ Ցվետանա Պասկալևա: 1991 թվականի մայիսից ղարաբաղյան խնդրին առնչվող մի շարք ֆիլմերում՝ «Բարձունքներ, հույսեր» (1991 թ.), «Կլինի արդյո՞ք առավոտ Ղարաբաղի վրա» (1992), «Իմ սիրելի ողջեր և մեռածներ» (1993), «Ղարաբաղի վերքերը» (1994), «Իրենց հողի զինվորները» (1994), «Լռություն» (1995), «Հավատ և ոգի» (2001), Պասկալևան տեսագրել ու հավերժացրել է հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության բացառիկ կադրեր, ֆիլմերում մեծ տեղ է հատկացված խաղաղ բնակչության պատերազմական կյանքի դժվարություններին, ռմբակոծվող գյուղերում ու քաղաքներում անմարդկային տառապանքների բաժին դարձած հազարավոր մարդկանց առօրյային ու ճակատագրերին:

«Մարդկային պատմություններ պատերազմի և խաղաղության օրերից», 2007 թ., հեղինակ՝ Վարդան Հովհաննիսյան: Ֆիլմը ներկայացնում է Արցախյան ազատամարտի մի խումբ մասնակիցների՝ ռազմական գործողությունների ժամանակ և դրանից 11 տարի անց: Նրանք անցել են պատերազմի բովով, հետպատերազմյան կյանքն էլ է հարվածներ հասցրել (օրինակ՝

տղաներից մեկը հայտնվել է հոգեբուժարանում), սակայն չեն կոտրվել: Նրանց մեջ ատելություն չկա. տղաներից մեկը հիշում է «թուրք հարևանին», որի հետ մարդկային հարաբերություններ ուներ և «չէր հավատում, որ մի օր իր դեմ դուրս կգա»: Այդուհանդերձ, պատերազմն իր հետքն է թողել նրանց հոգում:

«Բեկոր», 2010 թ., հեղինակ՝ Տիգրան Խզմալյան: Ֆիլմը պատմում է Շուշիի գումարտակի մարտիկների մասին, ներկայացնում 1994 թ. մարտական գործողությունները: Վիրավորի մարմնից բեկորի հեռացման կադրերը խորհրդանշական են. ֆիլմի հեղինակի խոսքով՝ «Մենք բոլորս կրում ենք պատերազմի բեկորները մեր մեջ»: Հեղինակը փորձել է խուսափել քարոզչությունից. «Ես գիտակցաբար հանել եմ բոլոր այն մասերը, որոնք կարող էին դիտարկվել, ընկալվել որպես թշնամու ապամարդկայնացման փորձ կամ յուրայինին գերմարդ դարձնելու, սրբացնելու ու բարձրացնելու փորձ»:

«Սովորական ցեղասպանություն» ֆիլմաշար, 2009 թ., նկարահանող՝ ՀՀ նախագահի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն: Նախագծի բոլոր ֆիլմերն («Բաքու, հունվար՝ 1990», «Սումգայիթ, փետրվար՝ 1988» և «Մարաղա, 10-ը ապրիլի՝ 1992» և «Օղակ») աչքի են ընկնում փաստագրական ամուր հենքով, հիմնվում են ականատեսների վկայությունների, չեզոք փորձագետների եզրակացությունների, արխիվային հարուստ նյութի, փաստաթղթերի, ձայնագրությունների և տեսագրությունների վրա: Ներկայացված են թե հայկական, թե ադրբեջանական կողմերի վկայությունները: Ըստ հեղինակների՝ ֆիլմերը կոչված են պատասխանելու Ադրբեջանի հակահայկական քարոզչությանը:

«Սովի և կրակի միջև. իշխանություն՝ կյանքերի գնով», 2013 թ., նկարահանող՝ ՀՀ նախագահի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն: Ֆիլմում անաչառ կերպով ներկայացված են Արցախյան հակամարտության ընթացքում Ստեփանակերտի շրջափակման ճեղքման և Աղդամի ուղղությամբ ռազմական օպերացիայի (այսպես կոչված՝ «Խոջալուի դեպքերի») մանրամասներ: Ուշագրավ է, որ ֆիլմի ստեղծման աշխատանքներին մասնակցել է չեխ հայտնի լրագրող Դանա Մազալովան: Նա հեղինակն է Այազ Մութալիբովի հետ հայտնի այն հարցազրույցի, որտեղ Ադրբեջանի նախկին նախագահը խոստովանում է, որ Խոջալուի ողբերգությունը ադրբեջանական ընդդիմության ձեռքի գործն է: Ֆիլմը առաջին անգամ հրապարակվող արխիվային փաստաթղթերի, լուսանկարների, հարցազրույցների ու քարտեզների միջոցով վերականգնում է պատմական իրադարձությունները և հերքում տարիներ ի վեր իր հասարակությունում և միջազգային հանրության շրջանում Ադրբեջանի հակահայկական քարոզչության մոգոնած «Խոջալուի իրադարձությունների» վերաբերյալ վարկածը:

«Գերանբոյսկի բատալյոն», 1994 թ., հեղինակ՝ Ալեքսանդր Նևզորով: Ֆիլմում հայկական կողմը ներկայացվում է որպես պատերազմի բռնկման միակ մեղավոր և ագրեսոր: Ադրբեջանական զինված ուժերը ներկայացվում են որ-

պես ճարահատված գյուղացիների խմբավորումներ, որոնց միակ նպատակը ինքնապաշտպանությունն է:

«Ոչ ոք չի մոռացվի», «Դեմառդեմ», 1992 թ., հեղինակ՝ Զինգիզ Մուստաֆաև: Հեռուստալրագրողի աղմկահարույց տեսանյութերը, որոնք նրան հայտնի դարձրին, կապված է 1992թ. փետրվարի 28-ի հետ: Այդ օրը ԼՂՀ հյուսիսում գտնվող ադրբեջանաբնակ Ումուդլու գյուղից հեռուստալրագրողն ուղղաթիռով ուղևորվեց Խոջալու, որը փետրվարի 26-ի գիշերը մաքրվել էր երիտասարդ հանրապետությունում գործող ու այնտեղ բույն դրած ադրբեջանական ՕՄՕՆ-ից և այլ ապօրինի զինված խմբավորումներից: Մուսթաֆաևի՝ մեկ օրվա տարբերությամբ նկարահանած երկու տեսանյութերը համեմատելիս աչքի են ընկնում դիակների հետ կատարված մի շարք փոփոխություններ: Ֆիլմը խեղաթյուրում է փաստական նյութերն ու իրականությունը, և պնդում, որ «Խոջալուի իրադարձություններում» հայերն իրենց մեղքի բաժինն ունեն: Հետագայում Մուսթաֆաևի ռեպորտաժները սկսեցին ցուցադրվել ռուսական երկրորդ հեռուստաալիքի նորաստեղծ «Վեստի» ծրագրով: Մուսթաֆաևը լուսաբանում էր 1992 թ. հունիսի 12-ին սկսված՝ Ադրբեջանի ԶՈՒ-ի լայնամասշտաբ հարձակումները երկրորդ հայկական պետության վրա, և ոգևորությամբ պատմում էր ռուս հեռուստադիտողներին հայկական հողում ադրբեջանական զավթիչների հաջողությունների մասին: Սակայն հունիսի 15-ին նկարահանումների ժամանակ «օկուպացիայի երգիչ» Մուսթաֆաևն ընկավ հենց ադրբեջանական գնդակից:

Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հրադադարի ռեժիմի հաստատումից հետո (1994 թ.) հայկական վավերագրությունը սկսում է լուսաբանել հետպատերազմական շրջանում հայ-ադրբեջանական սահմանին ապրող մարդկանց կյանքը՝ լսելի դարձնելով նրանց անձնական պատմությունները: Հենց այս շրջանում էլ ստեղծվում են մի շարք հայ-ադրբեջանական համատեղ ֆիլմեր («Այն հեռավոր հարևան գյուղում», «Պատերազմ պատերազմից հետո», «Պատերազմի գերիները» և այլն), որոնք մեր դիտարկմամբ միտված են նոր երանգ հաղորդելու հայ-ադրբեջանական տեղեկութահոգեբանական պատերազմին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ կինովավերագրողի նպատակը կարող է լինել քարոզչության ոչ թե իսպառ բացառումը, այլ նվազագույնի հասցնելը, ինչի համար նա պետք է. ա) հնարավորինս անաչառ կերպով ներկայացնի հակամարտության բոլոր կողմերին, նրանց տեսակետները, բ) հանդիսատեսից չթաքցնի իր դիրքորոշումը, գ) փորձի հետևել զգացմունքների և բանականության միջև հավասարակշռության պահպանման սկզբունքին: Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ կինովավերագրողները, ի տարբերություն ադրբեջանական կինովավերագրողներից, Արցախյան պատերազմի մասին վավերագրական ֆիլմեր նկարահանելիս, որպես կանոն, հետևում են այս սկզբունքներին:

Արցախյան պատերազմի մասին կինովավերագրությունը նաև հայրենասի-

րական դաստիարակության և քարոզչության հզոր միջոց է, ուստի կարևորում ենք հայկական կինովավերագրության զարգացումը և դրա արգասիքների լայն տարածումը ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում: Այս ոլորտում լուծման կարոտ խնդիրներից են «արյան և ոսկու գին» ունեցող պատերազմական կինոխրոնիկայի պահպանումը, փոխադրումը ժամանակակից կրիչների վրա (թվայնացումը), դասակարգումը, կրկնօրինակումը, տրամադրումը մասնագիտական բուհերին, ինչպես նաև մասնագիտական կադրերի (պատերազմի կինովավերագրողների) պատրաստումը[15]: Առանձնակի կարևորություն պետք է տալ այդ ֆիլմերի ցուցադրմանը մեր Զինված ուժերի զորամասերում:

[15] Տես «Նրանք նկարում էին պատերազմը» (https://mediamax.am/am/news/media/23392/):

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

АНАЛИЗ НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЕЙ ДОКУМЕНТАЛЬНЫХ ФИЛЬМОВ В КОНТЕКСТЕ ИНФОРМАЦИОННО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ БОРЬБЫ

Н. А. АМБАРЦУМЯН, лейтенант, тележурналист государственного учреждения «Зинуж медиа», лектор курса «военная журналистика» факультета журналистики ЕГУ

РЕЗЮМЕ

С момента изобретения кинематографа документальное кино используется как мощное средство массовой пропаганды. Данное свойство заложено в самой природе документального кино и является следствием как минимум двух обстоятельств: а) выбор определенного ракурса и очередности кадров выражает субъективное отношение режиссера к изображаемой действительности; б) представляемые в фильме кадры и информация вызывают у зрителя чувства и настроения, в определенной степени диктуемые режиссером. Следовательно, целью документалиста может быть не полное исключение пропаганды из фильма (это невозможно), а доведение ее до минимума. Для этого необходимо: 1) максимально объективно представлять все стороны конфликта, их точки зрения; 2) не скрывать от зрителя авторской позиции; 3) следовать принципу сохранения баланса между рассудочностью и эмоциями. Анализ показывает, что при создании фильмов об Арцахской войне армянские документалисты, в отличие от азербайджанских, как правило, следуют этим принципам.

Вместе с тем, военная документалистика является мощным сред-

ством военно-патриотического воспитания и пропаганды, поэтому важно обеспечить развитие данной сферы, в которой все еще ждут решения такие проблемы, как сохранение, диджитализация, классификация, копирование военной кинохроники 1991–1994 годов, их предоставление специализированным вузам, а также подготовка специалистов (военных кинодокументалистов).

В целях осуществления воспитательных функций представляется важным показ подобных фильмов в войсковых частях ВС РА.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

ANALYSIS OF SOME FEATURES OF DOCUMENTARY FILMS IN THE CONTEXT OF THE INFORMATION AND PSYCHOLOGICAL STRUGGLE

N. A. HAMBARDZUMYAN, Lieutenant, TV Journalist, “Zinuzh Media” Public Company, Lecturer, "Military Journalism" Course, Department of Journalism, YSU

SUMMARY

Since the invention of cinema, documentary films have been used as a powerful means of mass propaganda. This property is inherent in the very nature of documentary films, and is a result of at least two circumstances: a) the choice of a certain angle and a sequence of frames expresses the director’s subjective attitude to the reality depicted, b) the frames and information presented in the film arouse the viewer’s feelings and moods, to a certain degree dictated by the director. Consequently, the goal of a documentary filmmaker may not be to completely eliminate propaganda from the film (which is impossible), but to bring it to a minimum.To do this, it is necessary: 1) to present all parties to the conflict and their points of view as impartially as possible, 2) not to hide the author's position from the viewer, 3) to follow the principle of maintaining a balance between rationality and emotions. Analysis shows that when creating films about the Artsakh War, Armenian documentary filmmakers, unlike the Azerbaijanis, tend to follow these principles.

At the same time, the military documentary is a powerful means of military-patriotic education and propaganda, therefore it is important to ensure the development of this sphere, in which problems such as storing, digitalization, classification, copying of military newsreel of 1991–1994, and delivering it to higher education institutions, as well as the training of specialists (military filmmakers).

With the objective of performing educational functions, it is important to show such films in military units of the RA Armed Forces.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի կերտման գործում իր արժանի ավանդը ներդրեց նաև հայ մտավորականությունը: Թեև պատերազմի սկզբում ռազմաճակատ մեկնեցին մեծ թվով մտավորականներ, այնուամենայնիվ, թիկունքում մշակութային կյանքը ամենևին էլ կանգ չառավ: Հայ մտավորականությունը, պատերազմական ծանր պայմաններում համախմբելով իր ուժերը, աշխատեց «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով և նպաստեց Խորհրդային Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, կրթության, առողջապահության, մշակույթի և այլ բնագավառների նվաճումները ռազմաճակատի խնդիրների լուծմանը ծառայեցնելու, ինչպես նաև ռազմիկներին բարոյական օգնություն ցուցաբերելու գործին:

Հայ պատմաբաններից առաջինը Հայրենական Մեծ պատերազմի պատմությանը, այդ թվում՝ երկրորդ աշխարհամարտի տարիներին հայ մտավորականության գործունեությանն է անդրադարձել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ն. Մնացականյանը: 1954 թվականին ՀԽՍՀ ԳԱ-ի հրատարակչությունում լույս տեսած «Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում (1941–1945)» իր ստվարածավալ (33 մամուլ) աշխատության 468–489-րդ էջերում նա լուսաբանել է հայ մտավորականության գործունեությունը՝ նպատակաուղղված թիկունքի աշխատանքը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելուն, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, կրթության, մշակույթի տարբեր բնագավառներում հայ ինժեներների, գրողների, նկարիչների, ուսուցիչների սխրալի և արդյունավոր ջանքերը: Ըստ Ա. Ն. Մնացականյանի՝ Խորհրդային Հայաստանի գիտության զարգացմանը մեծապես նպաստեց 1943 թ. նոյեմբերի 29-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Բեղմնավոր և արդյունավետ գործ կատարեցին ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, պաշտպանական նշանակություն ունեցող լուրջ գիտական հայտնագործություն կատարեց ՀԽՍՀ ԳԱ-ի փոխպրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, ինչի համար արժանացավ Ստալինյան մրցանակի: Ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցը ևս արժանացավ Ստալինյան մրցանակի «Հա-

յերեն բացատրական բառարանի» համար (520 տպագրական մամուլ): Էական էր ՀԽՍՀ ԳԱ-ի երկրաբանական, քիմիական, ջրաէներգետիկ, շինանյութերի ինստիտուտների գիտաշխատողների գործունեությունը՝ հանրապետության բնական հարստությունների հայտնաբերման և ժողովրդական տնտեսության զարգացման կարիքների համար օգտագործման առումով: Գիտական բարձրարժեք աշխատություններ ստեղծեցին ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, Արսեն Տերտերյանը, Վաչե Իսագուլյանցը, Արմենակ Մնջոյանը, կենսաբան Արմեն Թախտաջյանը և շատ ուրիշներ:

«Բնորոշ է այն փաստը, որ … բոլոր բուհերն ու ամբիոնները պահպանվեցին և շարունակում էին բարձրագույն կրթությամբ մասնագիտական կադրեր պատրաստել: Դեռ ավելին,– նշում է Ա. Ն. Մնացականյան, – պատերազմի ժամանակ Երևանում հիմնվեցին Թատերական, Գեղարվեստի, Ֆիզկուլտուրայի ինստիտուտներ, Մանկավարժական ինստիտուտի հեռակա ուսուցման բաժինն առանձնացվեց, և կազմավորվեց ինքնուրույն Հեռակա մանկավարժական ինստիտուտ: Երևանի ռուսական ուսուցչական երկամյա ինստիտուտը վերակազմվեց, և ստեղծվեց Ռուսական քառամյա մանկավարժական ինստիտուտը, Լենինականում հիմնվեց քառամյա մանկավարժական ինստիտուտը»[1]: Թեև ուսուցիչների մի զգալի մասը զորակոչվել էր բանակ, այնուամենայնիվ դպրոցը շարունակում էր գործել: Ըստ Ա. Ն. Մնացականյանի՝ եթե 1941–1942 թթ. ուսումնական տարում հանրապետության դպրոցներում աշխատում էր 10376 ուսուցիչ, ապա 1942–1943 թթ. ուսումնական տարում այդ թիվը նվազեց մինչև 9899 մարդ: Իսկ պատերազմի վերջում Խորհրդային Հայաստանում կար 1139 դպրոց, որտեղ աշխատում էր 12141 ուսուցիչ[2]: Նրանք ջանադիր ու նվիրված աշխատանքով հաղթահարեցին պատերազմի հետևանքով ստեղծված դժվարությունները և ապահովեցին դպրոցի կանոնավոր պարապմունքները: Դեռ ավելին. կրթության բնագավառում կատարվեցին մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ 4-րդ և 7-րդ դասարաններն ավարտողների համար սահմանվեցին պարտադիր քննություններ, իսկ 10-րդ դասարանն ավարտողների համար՝ հասունության ատեստատի քննություններ, ինչի շնորհիվ զգալիորեն բարելավվեց դպրոցում ուսման և դասավանդման որակը[3]:

Ա. Ն. Մնացականյանն անդրադարձել է նաև զանգվածային լրատվամիջոցների, գրականության ու գեղարվեստական խոսքի նշանակությանը պատերազմի օրերին: «Գեղարվեստական խոսքը ռազմաճակատի զինվորներին և թիկունքի աշխատավորներին հասցնելու գործում ամենավճռական դերը խաղաց մամուլը,– գրում է Ա. Ն. Մնացականյանը:– Կենտրոնական և

[1] *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում (1941-1945): Ե., 1954, էջ 471–472:

[2] Տես նույն տեղում, էջ 472:

[3] Տես նույն տեղում, էջ 473:

հանրապետական թերթերը, զինվորական թերթերը հանդիսացան ոչ միայն քաղաքական տպագիր խոսքի, կուսակցական-պետական պաշտոնական փաստաթղթերի, այլև գեղարվեստական երկերի գլխավոր ամբիոններ: Թերթերի էջերից ամեն օր օպերատիվ տպվում, տարածվում և ժողովրդի սեփականությունն էր դառնում ճշմարիտ խոսքը»[4]:

Պատերազմի տարիներին հայ գրողներն ստեղծեցին տարբեր ժանրերի բազմաթիվ երկեր, որոնք տոգորված էին հայրենիքի պաշտպանության գաղափարներով: Հայ գրողներն իրենց ստեղծագործություններում մերկացնում էին գերմանա-ֆաշիստական զավթիչների հակամարդկային ծրագրերն ու նպատակները, կոչ անում համախմբել բոլոր ուժերը, դուրս գալ կենաց ու մահու կռվի հանուն հայրենիքի ազատության: Այդպիսի հայրենասիրական և հաղթանակի հավատով էին տոգորված ականավոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանի պատերազմի տարիներին գրած գեղարվեստական ստեղծագործությունները, որոնց համար նա արժանացավ Ստալինյան մրցանակի:

Հայրենասիրության թեման էր իշխում նաև Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Նաիրի Զարյանի, Գեղամ Սարյանի, ռազմաճակատում մարտնչող Գարեգին Սևունցի, Սերո Խանզադյանի, Հմայակ Սիրասի և հայ անվանի այլ գրողների երկերում:

Ա. Ն. Մնացականյանը այնուհետև անդրադարձել է հայ երաժիշտների, նկարիչների, թատրոնի և կինոյի գործիչների հայրենանվեր աշխատանքին[5]: Նա վերոհիշյալ հիմնահարցը համառոտակի արծարծել է նաև իր՝ «Միասնական շարքերում» աշխատության 311–321 էջերում[6]:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ մշակույթի զարգացման հիմնահարցերը հանգամանորեն լուսաբանվել են «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 8-րդ հատորի 172–207-րդ էջերում (գլուխ 5-րդ): Գլխի 1-ին՝ «Ժողովրդական կրթությունը» և 2-րդ՝ «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը» ենթաբաժինների հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Ս. Խուդավերդյանը, 3-րդ՝ «Գրականությունը» ենթաբաժնի հեղինակը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Աղաբաբյանը, իսկ վերջին 4-րդ՝ «Արվեստը», ենթաբաժնի հեղինակները՝ Լ. Ա. Խալաթյանը, Գ. Շ. Գյոդակյանը, Մ. Ս. Սարգսյանը և Վ. Մ. Հարությունյանը:

Կ. Ս. Խուդավերդյանը համառոտակի անդրադարձել է պատերազմի տարիներին ժողովրդական կրթության և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծման պատմությանը: Ի լրացում Ա. Ն. Մնացականյանի՝ Կ. Ս. Խուդավերդյանը ներկայացրել է ռազմաճակատ մեկնած ուսուցիչների թիվը՝ 1300, որը կազմել է դպրոցներում աշխատող ուսուցիչների 11 տոկոսը: Կ. Ս. Խու-

[4] Նույն տեղում, էջ 474:

[5] Տես նույն տեղում, էջ 484–489:

[6] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Միասնական շարքերում: Ե., 1975:

դավերդյանը նշել է նաև մի կարևոր հանգամանք: Քանի որ հանրապետության դպրոցների շենքերի մի զգալի մասը հատկացված էր զինվորական հոսպիտալներին, դասեր կազմակերպվել էին երեք, նույնիսկ չորս հերթով[7]: Չնայած դրան՝ դպրոցները, ստանալով պետության մշտական օգնությունը, կարողացան պատվով դիմանալ փորձություններին, ապահովել ընդհանուր պարտադիր ուսուցումը: Բացի այդ, պատերազմի տարիներին Երևանում ստեղծվեցին օդաչուական և հրետանային դպրոցներ, որոնց շրջանավարտների մի զգալի մասը գործուն մասնակցություն ունեցավ Հայրենական Մեծ պատերազմում:

Կ. Ս. Խուդավերդյանը համառոտակի ներկայացրել է պատերազմական տարիների բուհական կրթության վիճակը: Այդ տարիներին հանրապետությունում բացվել են Ռուսական մանկավարժական, Գեղարվեստա-թատերական և Ֆիզիկական կուլտուրայի բուհերը: Հայաստանում էր գործում նաև Հյուսիսային Կովկասի բժշկական ինստիտուտը, որը Երևան էր տեղափոխվել Օրջոնիկիձե քաղաքից: Պատերազմի տարիներին հանրապետության բուհերը ժողովրդական տնտեսության համար պատրաստել են ավելի քան 3800 բժիշկ, ինժեներ, գյուղատնտես, անասնաբույժ, ուսուցիչ և այլն, իսկ տեխնիկումները և միջնակարգ մասնագիտական հաստատությունները երկրին տվել են 8400 մասնագետ[8]:

Այնուհետև հեղինակն անդրադարձել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծմանը, որը պատերազմի տարիներին կարևոր իրադարձություն էր հանրապետության կյանքում: 1943 թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին ընդհանուր ժողովը, որը ակադեմիայի պրեզիդենտ ընտրեց անվանի արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն, փոխպրեզիդենտներ՝ Վիկտոր Համբարձումյանին և Վարդան Գուլքանյանին: ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը մեծ ազդակ եղավ հանրապետության գիտական մտքի արագ զարգացման համար[9]:

Հայ ժողովրդի պատմության 8-րդ հատորի 5-րդ՝ «Մշակույթ», գլխի 3-րդ ենթաբաժինը, որի հեղինակը, ինչպես նշեցինք, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Աղաբաբյանն է, նվիրված է Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ գրականության առանձնահատկություններին: «Հայրենական պատերազմը ժողովուրդների նյութական և հոգևոր ուժերի քննությունն էր,- նշել է Ս. Բ. Աղաբաբյանը:–Հայ գեղարվեստական գրականությունը պատվով դուրս եկավ այդ ծանր փորձությունից: Հերոսական օրերի շնչով ողողված գեղարվեստական շատ արժեքներ մտել են գրականության ոսկե ֆոնդը»[10]: Այդպիսի ստեղծագործություններից էին Ավետիք Իսահակյանի հայրենաշունչ պոեզիան, Դերենիկ Դեմիրճյանի

[7] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8: Ե., 1970, էջ 172:

[8] Տես նույն տեղում, էջ 176–177:

[9] Տես նույն տեղում, էջ 178–181:

[10] Նույն տեղում, էջ 196:

«Վարդանանք», Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպերը, Նաիրի Զարյանի և Գեղամ Սարյանի, ռազմաճակատային գրողներ՝ Հրաչյա Քոչարի, Սերո Խանզադյանի, Հմայակ Սիրասի, Արշալույս Սարոյանի, Թաթուլ Հուրյանի և շատ ուրիշների երկերը, որոնք այսօր էլ մնացել են որպես հայ ժողովրդի հայրենասիրական ազնվության փաստաթղթեր:

Հայ ժողովրդի պատմության 8-րդ հատորի 5-րդ գլխի 4-րդ՝ «Արվեստ», ենթաբաժնում շատ համառոտակի, բայց բովանդակալից կերպով ներկայացված է պատերազմի տարիներին հայ թատրոնի, կինոյի, երաժշտության բնագավառի գործիչների ստեղծարար ու անձնվեր աշխատանքը, լուսաբանվել է հայ նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների գործունեությունը: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ թատերական գործիչները բեմադրեցին հայրենասիրական գաղափարներով տոգորված «Ռուզան», «Գևորգ Մարզպետունի», «Սամվել», «Երկիր հայրենի» դրամաները, կինոգործիչներն ստեղծեցին «Դավիթ Բեկ» պատմահայրենասիրական ֆիլմը (Դավիթ Բեկի դերը մարմնավորեց Հրաչյա Ներսիսյանը), Արամ Խաչատրյանը բանաստեղծ Սարմենի տեքստով գրեց ՀԽՍՀ պետական հիմնը, որն առաջին անգամ հանդիսավորությամբ հնչեց 1944 թ. օգոստոսի 12-ին:

Ռազմաճակատում առանձնահատուկ սիրով էին ընդունվում Հայաստանի երգի-պարի անսամբլի (ղեկավար՝ Թաթուլ Ալթունյան) և Հայաստանի պետական ջազ- նվագախմբի (ղեկավար՝ Արտեմի Այվազյան) ելույթները[11]: Պատերազմի տարիներին պետական օպերայի թատրոնում բեմադրվեցին պատմահերոսական թեմաներով այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք էին՝ Հարո Ստեփանյանի «Նունե», Կարո Զաքարյանի «Աղասի», Վ. Արարատյանի՝ «Գագիկ արքա» օպերաները և այլ երկեր: Երիտասարդ կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը գրեց իր «Մարտիկի երգը», որն առայսօր չի կորցրել իր գեղարվեստական ու հայրենասիրական արժեքը:

Պատերազմական թեմայով կտավներ ստեղծեցին ժողովրդական նկարիչներ՝ Դմիտրի Նալբանդյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Արա Սարգսյանը, Ասլամազյան քույրերը և շատ ուրիշներ: Չնայած Հայրենական պատերազմը խաթարեց ինչպես Խորհրդային Միության, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի ճարտարապետության բուռն զարգացումը, կրճատվեցին շինարարության ծավալները, կառուցողական արվեստի վարպետների մի զգալի մասը զորակոչվեց բանակ, այդուհանդերձ թիկունքում մնացած մասնագետներն իրենց աշխատանքով նպաստում էին երկրի պաշտպանունակության ամրապնդմանը, մասնակցում պաշտպանական ամրաշինությունների և շրջանների կառուցման աշխատանքներին: Տարածվեց «Հայրենիքի ազատության և անկախության համար զոհված հերոսների հիշատակին. 1941–1945» նվիրված աղբյուր-հուշարձանների կառուցումը: Այդ ասպարեզում զգալի գործ կատարեց ճարտարապետ

[11] Տես նույն տեղում, էջ 198–199:

Ռաֆայել Իսրայելյանը: Վերջինիս և Գ. Քոչարի նախագծով շարունակվեց «Արարատ» տրեստի գինու կոմբինատի մառանների շինարարությունը: Պատերազմական ժամանակների խոշորագույն ինժեներական կառույց է «Հաղթանակ» կամուրջը (հեղինակ՝ ինժեներ Ս. Հովնանյան, ճարտարապետներ՝ Ա. Մամիջանյան, Ս. Ասատրյան, Ս. Սաֆարյան, քանդակագործ՝ Ա. Սարգսյան), քաղաքաշինական կարևոր նշանակություն ուներ Բաղրամյան փողոցի բացումը, կարևոր իրադարձություն՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժնի վերաբացումը (1943 թ.)[12]:

Պրոֆեսոր Խուդավերդյանը 1985 թվականին ռուսերեն լեզվով լույս տեսած իր մենագրության մեջ[13] հանգամանորեն լուսաբանել է քննաբանվող հիմնահարցը: Գիրքն ունի երեք գլուխ: Առաջին՝ «Գաղափարական աշխատանքի հիմնական ուղղությունները պատերազմի տարիներին», գլխում հեղինակն արծարծել է պատերազմի տարիներին խորհրդային ժողովուրդների բարոյաքաղաքական ներուժի, միասնության ու բարեկամության հարցերը, հիմնավորել, որ այդ օրերին գաղափարական աշխատանքը կարևոր գործոն էր զանգվածների աշխատանքային վերելքը կազմակերպելու գործում: Այնուհետև հեղինակը համոզիչ կերպով ցույց է տվել, թե ինչ գործոններ են նպաստում ռազմաճակատի և թիկունքի միասնության ամրապնդմանը, վերլուծել թիկունքի և ռազմաճակատային հայկական մասուլի գործունեությունը և այլ հարցեր:

Երկրորդ՝ «Հանրապետության գիտությունը և ժողովրդական կրթությունը պատերազմի տարիներին», գլխում պրոֆեսոր Կ. Ս. Խուդավերդյանը հանգամանորեն լուսաբանել է գիտահետազոտական հիմնարկների գործունեության վերակառուցման, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծման, պատերազմի պայմաններում կրթական համակարգի կազմակերպման հարցերը:

Աշխատության երրորդ՝ «Խորհրդային Հայաստանի ստեղծագործ մտավորականության ավանդը թշնամու դեմ հաղթանակի հասնելու գործում», գլխում հեղինակը փաստեր է ներկայացրել ռազմաճակատում մարտնչած հայ գրողների (Հրաչյա Քոչար, Վախթանգ Անանյան, Գարեգին Բես, Գուրգեն Բորյան, Հմայակ Սիրաս, Գարեգին Սևունց, Սերո Խանզադյան, Հրաչյա Հովհաննիսյան, Համո Սահյան, Քրիստափոր Թափալցյան, Թաթուլ Հուրյան և ուրիշներ), թիկունքում ստեղծագործող գեղարվեստական խոսքի վարպետների (Ավետիք Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Գեղամ Սարյան և ուրիշներ) հայրենանվեր աշխատանքի վերաբերյալ՝ նշելով, որ նրանք զգալի ավանդ ներդրեցին Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակը կռելու գործում: Հեղինակը ներկայացրել է նաև պատերազմի տարիներին հայ մշակույթի տարբեր բնագավառների ներկայա-

[12] Տես նույն տեղում, էջ 198–207:

[13] Տես *К. С. Худавердян.* Армянская Советская культура в годы Великой Отечественной войны. Е., 1985:

ցուցիչների կատարած աշխատանքը: Միայն 1943 թ. Արտեմի Այվազյանի գլխավորած ջազ-նվագախումբը 43 համերգ է ունեցել Անդրկովկասյան ռազմաճակատի տարբեր զորամասերում, իսկ Թաթուլ Ալթունյանի ժողովրդական երգի-պարի խումբը շուրջ 30 համերգով հանդես է եկել Հյուսիսկովկասյան ռազմաճակատում: Նույն խումբը 1944 թվականին ելույթներով ոգևորել է բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանի գլխավորած 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի մարտիկներին:

Պատերազմի տարիներին իրենց դերասանական տաղանդով փայլել են ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ՝ Հասմիկը, Արուս Ոսկանյանը, Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշ Վաղարշյանը, Ավետ Ավետիսյանը, Դավիթ Մալյանը, Գուրգեն Ջանիբեկյանը և ուրիշներ: Պատերազմի տարիներին հայկական երաժշտական մշակույթի զարգացման գործում անանց ավանդ են ներդրել ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Հայկանուշ Դանիելյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Շարա Տալյանը, Պավել Լիսիցյանը, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, խմբավար Միքայել Թավրիզյանը և շատ ուրիշներ: Ժողովրդի հայրենասիրական և գեղագիտական դաստիարակության գործում էական է հայ նկարիչներ Մարտիրոս Սարյանի, Դմիտրի Նալբանդյանի, Հակոբ Կոջոյանի, Էդուարդ Իսաբեկյանի, Մարիամ Ասլամազյանի, Միեր Աբեղյանի և մյուսների ավանդը: Կ. Խուդավերդյանի եզրակացությամբ՝ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ մի վայրկյան կանգ չառավ մշակութային կյանքը, ինչը նպաստեց ժողովրդի բարոյաքաղաքական միասնության ամրապնդմանը, Մեծ հայրենականում հաղթանակի կերտմանը[14]:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Կարպի Գրիգորյանի ռուսերեն լեզվով հրատարակած մենագրության[15] 3-րդ գլուխը (էջ 207–233) ամբողջովին նվիրված է Հայաստանի տեխնիկական մտավորականության գործունեությանը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Գլխի առաջին ենթաբաժնում հեղինակը նշում է, որ 1941 թվականի հունիսի 22-ի դրությամբ Խորհրդային Հայաստանում ինժեներատեխնիկական աշխատողների շարքերում կար 1400 ինժեներ, 1600 տեխնիկ, սակայն բանակ զորակոչվելու հետևանքով այդ թվերը տարեցտարի նվազեցին: Այսպես. 1941 թվականի հոկտեմբերին ինժեներների թիվը կազմել է 1100, տեխնիկներինը՝ 1150, իսկ 1944 թվականին՝ համապատասխանաբար 880 և 950[16]: Հեղինակը փաստել է, որ նրանց հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի առաջին իսկ տարում Խորհրդային Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները կատարել են 80 տեսակի ռազմական պատվերներ՝ յուրացնելով զենքի, սպառազինության, զինամթերքի տեսակների, կապի,

[14] Տես նույն տեղում, էջ 113:

[15] Տես *А. К. Григорьянц.* Формирование и развитие технической интеллигенции Армении (1920–1965). Е., 1966:

[16] Տես նույն տեղում, էջ 214:

հանդերձանքի, պարենամթերքի և մի շարք այլ անհրաժեշտ միջոցների արտադրությունը:

Հայ մտավորականության, մասնավորապես՝ գիտության և մշակույթի գործիչների պատերազմական տարիների գործունեությանն է նվիրված նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Ասլանի Մուրադյանի աշխատությունը[17]: Գրքի 4-րդ գլխի 4-րդ ենթաբաժնում համառոտակի լուսաբանվել է հանուն ռազմաճակատի օգնության հանրապետության գիտության և մշակույթի գործիչների կատարած աշխատանքը: Հեղինակն ըստ արժանվույն է գնահատել 1943 թվականի նոյեմբերի 29-ին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը և դրա դերը հանրապետության գիտնականների հետազոտական աշխատանքը ռազմաճակատի կարիքներին ծառայեցնելու գործում[18]:

«Հայաստանի մտավորականության ավանդը գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում (1941–1945 թթ.)» վերնագրով 2000 թվականին գիրք է հրատարակել պատմական գիտությունների դոկտոր Հրաչիկ Հարությունի Մանուկյանը: Աշխատության 3–10-րդ էջերում համառոտակի լուսաբանվել է հաղթանակի ապահովման գործում հանրապետության ինժեներատեխնիկական մտավորականության, 10–20-րդ էջերում՝ ժողովրդական կրթության աշխատողների, 21–31-րդ էջերում՝ գիտության, 31–38-րդ էջերում՝ գրականության և մշակույթի, 38–43-րդ էջերում՝ առողջապահության բնագավառների ներկայացուցիչների արդյունավետ գործունեությունը[19]:

Հրաչիկ Մանուկյանը վերոհիշյալ հիմնահարցին անդրադարձել է նաև «Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941–1945)» մենագրությունում[20]: Գրքի 4-րդ գլուխը (էջ 81–123) կոչվում է «Հայաստանի մտավորականության ավանդը գերմանա-ֆաշիստական զավթիչների ջախջախման գործում» և ամբողջովին նվիրված է պատերազմական տարիներին հանրապետության ինժեներատեխնիկական մտավորականության, ժողովրդական կրթության, գիտության, գրականության, մշակույթի ու առողջապահության բնագավառների աշխատողների հերոսական գործունեության լուսաբանմանը:

Պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի «Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» մենագրության 4-րդ ենթաբաժնում (էջ 118–151) հեղինակը համապատասխան գրականության, մամուլի և արխիվային փաս-

[17] Տես *Բ. Ա. Մուրադյան.* Компартия Армении в годы Великой Отечественной войны. Е., 1984:

[18] Տես նույն տեղում, էջ 189–194:

[19] Տես *Հ. Հ. Մանուկյան,* Հայաստանի մտավորականության ավանդը գերմանա-ֆաշիստական զավթիչների ջախջախման գործում (1941-1945 թթ.): Ե., 2000:

[20] Տես *Հ. Հ. Մանուկյան,* Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941-1945): Ե., 2002:

տերի հիման վրա հանգամանորեն ներկայացրել է գիտության, կրթության, գրականության, արվեստի, առողջապահության բնագավառների աշխատողների և հոգևորականության ավանդը Մեծ հայրենականում հաղթանակի նվաճման գործում[21]:

2007 թվականին պատմական գիտությունների թեկնածու Ստեփան Գևորգի Ղարիբջանյանը ռուսերեն լեզվով հրապարակել է «Գիտությունը Հայաստանում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» աշխատությունը: Դրանում համապատասխան գրականության, մամուլի և արխիվային փաստերով մեկնաբանվում են Հայաստանի գիտական հիմնարկների աշխատանքի վերակառուցման, ռազմական կարիքները հոգալու և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմավորման և գործունեության հարցերը[22]:

Ուսումնասիրությունը հատկապես արժեքավորում են 45–94 էջերում մեջբերված 25 փաստաթղթերն ու նյութերը՝ քաղված ռազմաճակատային և հանրապետական թերթերից, գիտական հանդեսներից ու արխիվներից: Գրքում զետեղված են նաև ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին ակադեմիկոսների լուսանկարները, ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ի. Ստալինի՝ ՀԽՍՀ-ում Գիտությունների ակադեմիա հիմնադրելու մասին 1945 թվականի հոկտեմբերի 29-ի հմ. 1169 հրամանի լուսապատճենը[23]:

«Խորհրդային Հայաստանի մշակույթը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» թեմայով 1973 թվականին պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն է պաշտպանել Ռոբերտ Աղասու Կարաքեշիշյանը: Աշխատության առաջին գլխում լուսաբանվել են պատերազմի տարիներին հանրապետությունում տարված գաղափարական դաստիարակչական աշխատանքները, երկրորդ գլխում՝ արվեստի, երրորդում՝ գիտության և կրթության բնագավառների աշխատողների գործունեությունը:

Հիմնահարցի ուսումնասիրության համար արժեքավոր փաստեր են բերված 1975 թվականին ՀԽՍՀ ԳԱ-ի հրատարակչության հրատարակած «Սովետական Հայաստանը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի (էջ 227–306), պատմական գիտությունների թեկանածու Վազգեն Միքայելի Ամիրբեկյանի «Հայաստանի մամուլը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին» (Ե., 1971, ՀԽՍՀ ԳԱ-ի հրատ.) մենագրության, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2010 թվականին հրատարակած հայոց պատմության 4-րդ հատորի 1-ին գրքի (էջ 659–719), 2012 թվականին Երևանի պետական համալսարանի հրատարակած

[21] Տես *Կ. Ա. Հարությունյան,* Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941-1945): Ե., 2001:

[22] Տես *Степан Гарибджанян.* Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945). Е., 2007:

[23] Տես նույն տեղում, էջ 45–94:

«Հայոց պատմություն» դասագրքի (էջ 669–673) և մի շարք այլ աշխատություններում:

Այսպիսով՝ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ մտավորականության ստեղծած արժեքները մեծ նշանակություն են ունեցել ոչ միայն այդ տարիներին հաղթանակի կերտման առումով, այլև այդ ստեղծագործություններն այնքան մնայուն արժեքներ էին, որ շարունակեցին ոգեշնչել մեր ժողովրդին հետագայում ևս պաշտպանելու, շենացնելու հայրենիքը և ունենալու նորանոր հաղթանակներ: Պատմագրության մեջ թեև Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ մտավորականության մասնագիտական գործունեության հիմնահարցի լուսաբանման առումով կատարվել են բավական արժեքավոր ուսումնասիրություններ, սակայն անհրաժեշտ է հայերեն և այլ լեզուներով ևս ստեղծել մի ամբողջական աշխատություն, որը կներկայացնի Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ մտավորականության հերոսական աշխատանքը: Կարծում ենք՝ նպատակահարմար է նաև կազմել և հրատարակել հիմնահարցի վերաբերյալ փաստաթղթերի ու նյութերի առանձին ժողովածու ևս:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

В. А. ГАСПАРЯН, кандидат педагогических наук, преподаватель кафедры профессионального образования и прикладной педагогики АГПУ им. Х. Абовяна

РЕЗЮМЕ

Достойный вклад в победу советского народа в Великой Отечественной войне внесла армянская интеллигенция. Хотя в начальный период войны значительная ее часть по призыву или добровольно ушла на фронт, однако культурная жизнь в тылу не прервалась. Руководствуясь лозунгом «Все для фронта, все для победы!», армянская интеллигенция в тылу, сплотив ряды и сконсолидировав усилия, активно включилась в работу по подчинению достижений Советской Армении в области промышленности, сельского хозяйства, науки и образования, здравоохранения, культуры интересам фронта, по оказанию моральной помощи фронтовикам.

Эти героические свершения армянской интеллигенции получили фактологические закрепления в трудах армянских советских ученых и писателей: доктора исторических наук, профессора А. Н. Мнацаканяна,

доктора исторических наук, профессора К. С. Худавердяна, доктора филологических наук, профессора С. Б. Агабабяна, доктора исторических наук, профессора В. А. Мурадяна и других. После обретения независимости в армянской историографии к данной теме обращались доктор исторических наук Г. А. Манукян, доктор исторических наук К. А. Арутюнян, кандидат исторических наук С. Г. Гарибджанян и другие.

MILITARY HISTORY

COVERAGE OF THE ACTIVITY OF ARMENIAN INTELLIGENTSIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR IN ARMENIAN HISTORIOGRAPHY

V. A. GASPARYAN, PhD in Pedagogical Sciences, Lecturer, Chair of Professional Education and Applied Pedagogy, ASPU after Kh. Abovyan

SUMMARY

The Armenian intelligentsia (the intellectuals) made a worthy contribution to the victory of the Soviet people in the Great Patriotic War. Although a significant part of them were drafted or voluntarily went to the front in the initial period of the war, the cultural life in the rear was not interrupted. Guided by the slogan “Everything for the Front, Everything for the Victory!”, the Armenian intellectuals in the rear, closing the ranks and consolidating their efforts, actively joined in the activities on conforming the achievements of Soviet Armenia in the sphere of industry, agriculture, science and education, health and culture to the interests of the front, and on providing moral assistance to front-line soldiers.

These heroic deeds of the Armenian intellectuals are factually consolidated in the works of the Armenian Soviet scientists and writers – Professor A. N. Mnatsakanyan, Doctor of History; Professor K. S. Khudaverdyan, Doctor of History; Professor S. B. Aghababyan, Doctor of Philology; Professor V. A. Muradyan, Doctor of History, and others. After gaining independence, this topic in the Armenian historiography was touched by Doctor of History H. H. Manukyan, Doctor of History K. A. Harutyunyan, PhD in History S. G. Gharibjanyan and others.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

այլախոհություն – инакомыслие – nonconformity
այլատեցություն – ксенофобия – xenophobia
աներկբայություն – несомненность – obviousness
անվանարկում – дискредитация – discrediting
աշխարհայացք – мировоззрение – life stance
ապահովումային ցանց – логистическая сеть – logistics network
ապամարդկայնացում – дегуманизация – dehumanization
առօրեականացում – обудничивание – making smth routine
արժեքաբանություն – аксиология – axiology
բազմադիմություն – многоликость – many faces of smth
բազմապիսություն – разнообразие – variety
բառագանձ – лексика – lexis
բնաշխարհիկացում – коренизация – Indigenization
գաղափարայնացում – идеизация – ideation
գլոբալիզացում – տես *համընդհանրացում*
գլոկալիզացում – տես *համատեղայնացում*
գնոստիկականություն – гностицизм – gnosticism
գոյաբանություն – онтология – ontology
գոյակցություն – сосуществование – coexistence
գրույթ – графема – grapheme
դատողական մոտեցում – дискурсионный подход – discourse approach
զրադաշտականություն – зороастризм – Zoroastrianism
զուգամիտում – конвергенция – convergence
թռիչքի հեռահասություն – дальность полета – flight range
ինքնություն – 1. самость, 2. տես *նույնականություն* – 1. selfness, 2. տես *նույնականություն*
լեզվամտածողություն – языковое мышление – understanding of language
լոգիստիկական ցանց – տես *ապահովումային ցանց*
լոկալացում – տես *տեղափակում*
խաղարկային կինո – игровое кино – fiction film
խորհրդածություն – размышление – reflection
խութ – 1. препятствие, преграда, 2. риф, подводная скала – 1. obstacle, 2. reef
ծպտյալ հայ – криптоармянин – crypto-Armenian
կինոտարեգրություն – кинохроника – newsreel
կռվան – 1. опора, 2. основание, 3. տես *փաստարկ* – 1. reliance, 2. base, 3. տես *փաստարկ*
համասեռամոլություն – гомосексуализм – homosexuality
համասեռություն – гомогенность, однородность – homogeneity

համատեղայնացում – глокализация – glocalization
համընդհանրացում – глобализация – globalization
հայեցականություն – տես *հայեցողականություն*
հայեցողականություն – созерцательность – meditativeness
հավասարաձևունակություն – изоморфизм – isomorphism
հարացույց – парадигма – paradigm
հետքերի պահեստարան – хранилище следов – repository of traces
հնչույթ – фонема – phoneme
հոգեորսություն – прозелитизм, душеловство – proselytism
հովանավորչական քաղաքականություն – политика протекционизма – protectionism
հրաձիգ – стрелок – rifleman
ձեռնածություն – манипуляция – manipulation
ճեմասրահ – фойе – foyer, lobby
մարդաբանական ճգնաժամ – антропологический кризис – anthropological crisis
մշակութային ինքնագիտակցություն – культурное самосознание – cultural awareness, cultural consciousness
մշակութաստեղծություն – культуросозидание – culture-building
նախակերպար – архетип – archetype
նետաձիգ – лучник – archer, bowman
նույնականացում – идентификация – identification
նույնականություն – идентичность – identity
որոշարկում – 1. детерминирование, 2. опознавание, распознавание – 1. determination, 2. identification
պահանջմունք – потребность – need
սոցիալական մակածման երևույթ – явление социальной индукции – phenomenon of social induction
վերազանցական – трансцендентальный – transcendental
տարածաշրջայնացում – регионализация – regionalization
տարաշարժունություն – маневренность – maneuverability
տեղափակում – локализация – localization
տեղեկութացում – информатизация – informatization
ցնցակաթված – шок – shock
ուծացում – ассимиляция – assimilation
փաստարկ – аргумент – argument
փոխներթափանցում – взаимопроникновение – interpenetration

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

аксиология – արժեքաբանություն
антропологический кризис – մարդաբանական ճգնաժամ
аргумент – փաստարկ, կռվան
архетип – նախակերպար
ассимиляция – ուծացում
взаимопроникновение – փոխներթափանցում
глобализация – համընդհանրացում, գլոբալիզացում
глокализация – համատեղայնացում, գլոկալիզացում
гностицизм – գնոստիկականություն
гомогенность – համասեռություն
гомосексуализм – համասեռամոլություն
графема – գրույթ
дальность полета – թռիչքի հեռահասություն
дегуманизация – ապամարդկայնացում
детерминирование – որոշարկում
дискредитация – անվանարկում
дискурсионный подход – դատողական մոտեցում
душеловство – *см. прозелитизм*

зороастризм – զրադաշտականություն
игровое кино – խաղարկային կինո
идеизация – գաղափարայնացում
идентификация – նույնականացում
идентичность – նույնականություն, ինքնություն
изоморфизм – հավասարաձևունակություն
инакомыслие – այլախոհություն
информатизация – տեղեկութացում
кинохроника – կինոտարեգրություն
конвергенция – զուգամիտում
коренизация – բնաշխարհիկացում
криптоармянин – ծպտյալ հայ
ксенофобия – այլատեցություն
культурное самосознание – մշակութային ինքնագիտակցություն
культуросозидание – մշակութաստեղծություն
лексика – բառագանձ
логистическая сеть – ապահովումային ցանց, լոգիստիկական ցանց
локализация – տեղափակում, լոկալացում
лучник – նետաձիգ
маневренность–տարաշարժունություն
манипуляция – ձեռնածություն
мировоззрение – աշխարհայացք
многоликость – բազմադիմություն
несомненность – անվերկբայություն
обудничивание – առօրեականացում
однородность – *см. гомогенность*
онтология – գոյաբանություն
опознавание – որոշարկում
опора – կռվան
основание – կռվան
парадигма – հարացույց
подводная скала – *см. риф*
политика протекционизма – հովանավորչական քաղաքականություն
потребность – պահանջմունք
преграда – *см. препятствие*
препятствие – խութ
прозелитизм – հոգեորսություն
размышление – խորհրդածություն
разнообразие – բազմապիսություն
распознавание – *см. опознавание*
регионализация – տարածաշրջայնացում
риф – խութ
самость – ինքնություն
созерцательность – հայեցողականություն, հայեցականություն
сосуществование – գոյակցություն
стрелок – հրաձիգ
трансцендентальный – վերազանցական
фойе – ճեմասրահ
фонема – հնչույթ
хранилище следов – հետքերի պահեստարան
шок – ցնցակաթված
явление социальной индукции – սոցիալական մակածման երևույթ
языковое мышление – լեզվամտածողություն

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

anthropological crisis – մարդաբանական ճգնաժամ
archer – նետաձիգ
archetype – նախակերպար
argument – փաստարկ, կռվան
assimilation – ուծացում
axiology – արժեքաբանություն
base – կռվան
bowman – see *archer*
coexistence – գոյակցություն
convergence – զուգամիտում
crypto-Armenian – ծպտյալ հայ
cultural awareness – մշակութային ինքնագիտակցություն
cultural consciousness – see *cultural awareness*
culture-building – մշակութաստեղծություն

dehumanization – ապամարդկայնացում
determination – որոշարկում
discourse approach – դատողական մոտեցում
discrediting – անվանարկում
fiction film – խաղարկային կինո
flight range – թռիչքի հեռահասություն
foyer – ճեմասրահ
globalization – գլոբալիզացում, համընդհանրացում
glocalization – գլոկալիզացում, համատեղայնացում
gnosticism – գնոստիկականություն
grapheme – գրույթ
homogeneity – համասեռություն
homosexuality – համասեռամոլություն
ideation – գաղափարայնացում
identification – 1. նույնականացում, 2. որոշարկում
identity – նույնականություն, ինքնություն
Indigenization – բնաշխարհիկացում
informatization – տեղեկութացում
interpenetration – փոխներթափանցում
isomorphism – հավասարաձևունակություն
lexis – բառագանձ
life stance – աշխարհայացք
lobby – see *foyer*
localization – տեղափակում, լոկալացում
logistics network – ապահովումային ցանց, լոգիստիկական ցանց
maneuverability – տարաշարժունություն
manipulation – ձեռնածություն
meditativeness – հայեցողականություն, հայեցականություն
need – պահանջմունք
newsreel – կինոտարեգրություն
nonconformity – այլախոհություն
obstacle – խութ
obviousness – աներկբայություն
ontology – գոյաբանություն
paradigm – հարացույց
phenomenon of social induction – սոցիալական մակածման երևույթ
phoneme – հնչույթ
proselytism – հոգեորսություն
protectionism – հովանավորչական քաղաքականություն
reef – խութ
reflection – խորհրդածություն
regionalization – տարածաշրջայնացում
reliance – կռվան
repository of traces – հետքերի պահեստարան
rifleman – հրաձիգ
selfness – ինքնություն
shock – ցնցակաթված
transcendental – վերազանցական
understanding of language – լեզվամտածողություն
variety – բազմապիսություն
xenophobia – այլատեցություն
Zoroastrianism – զրադաշտականություն

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Խմբագրման բաժնի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Թ. Դ. Չիլինգարյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանը,
Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը
և Արցախի Պաշտպանության նախարար
գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը
զորավարժարանում

Արցախ, 2018 թ. սեպտեմբեր

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Դավիթ Տոնոյանը և Արցախի Պաշտպանության նախարար
գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը
ՊԲ հյուսիսարևելյան մարտական հենակետերից մեկում

Արցախ, 2018 թ. օգոստոս

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ HAIKAKAN BANAK 3 (97). 2018